# Ազգ
Azg

17 ՅՈՒՆԻՍ 2016 ՈՒՐԲԱԹ 23(5423)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Փայլան. «Ինչո՞ւ է մզկիթի վերածվել Հաջիա Սոֆիա եկեղեցին»

Թուրքիայի խորհրդարանում HDP կուսակցությունից հայազգի պատգամավոր ***Կարո Փայլանը*** հարց է տվել վարչապետ Բինալի Յըլդըրըմին, թե ինչու է քանդվել Տրապիզոնի Հաջիա Սոֆիա եկեղեցին եւ վերածվել մզկիթի: Նա հիշեցրել է վարչապետին, որ այդ վանքը 1250-1260-ական թվերին կառուցվել է Մանուել Ա-ի կողմից, թանգարանի վերածվել 1964-ին, իսկ 2013-ին հանձնվելով «Վաքըֆների գլխավոր վարչության» տնօրինությանը վերածվել է մզկիթի: Տեղի են ունեցել շինարարական փոփոխություններ, որոնցից ամենահատկանշականները շարժական միջնորմով բաժանված առանձին սրահն է՝ կանանց համար, «միհրաբը»՝ մատուռի փոխարեն, որմնանկարների վերացումը եւ հատակի խճաքարերի փոխարեն տախտակամածի եւ գորգերի տեղադրումը:

Փայլանը նշել է, որ այդ տարածքում արդեն երեք մզկիթ է գործում եւ հարցրել՝ ճիշտ չէ՞ր լինի արդյոք այն պահպանել որպես պատմական հուշարձան, փոխանակ մզկիթի վերածելու: Նա նաեւ տեղեկացրել է, որ մզկիթի վերածելը հակասում է փոքրամասնություններին իրենց սեփականությունները վերադարձնելու AKP կառավարության որոշմանը:

Հ.Ծ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ոչ թե փալանը, այլ է՛շը պետք է ծեծել

Ոչ ոք չի կարող պնդել, ոչ էլ ժխտել, որ Թուրքիո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանի արձագանքը Բունդեսթագի բանաձեւին՝ ինքնաբուխ էր. Թուրքիայում նման ելույթները միշտ էլ մաս են կազմել քաղաքական orchestration-ի, որը յուրաքանչյուր նվագողից պահանջում է հլու-հնազանդ ենթարկվել գլխավոր դիրիժորի ճիպոտին, որը ամեն րոպե կարող է վերածվել ծանր լախտի: Այնպես որ հարցը ոչ թե դիրիժորին ենթարկվելուն կամ չենթարկվելուն է վերաբերում, այլ մեր դիրքորոշմանը:

Իսկ այդ դիրքորոշումը բացառապես ուղղված է նվագողի, այս պարագայում՝ **չալողի** դեմ: Սփյուռքի եւ Հայաստանի մամուլը, բոլոր լրատվամիջոցները, այս օրերին կրակուբոց են ժայթքում Աթեշյան սրբազանի (**աթեշ**՝ թուրքերեն նշանակում է կրակ) դեմ, որ սահմանազանց ձեւակերպումներով եւ ուրացողի քծնանքով, նախագահ Էրդողանի իշխանությանը մատուցում է հենց այն, ինչը անհրաժեշտ է վերջինիս ներքին թե արտաքին հարթակներում օգտագործելու համար, բայց ոչ թե որեւէ մեկին համոզելու իր «ճշմարտացիության» մեջ, այլ՝ եւս մեկ անգամ բոլորին ցույց տալու իր ուժն ու կամքը:

(Փորձառու մի հայ մարդ Պոլսում մի անգամ ինձ բացատրեց թուրքական այդ ֆենոմենը: Թուրքերի մեջ ամենավտանգավոր բանն այն է, բացատրեց նա, որ նրանք որեւէ պահի, երբ նույնիսկ անհրաժեշտ չէ, կարող են դաժանորեն ճնշել ու սպանել՝ պարզապես հասկացնելու համար, որ իրենք են ուժեղը):

Անշուշտ Աթեշյան սրբազանին կարելի է մեղադրել, եւ իրավա՛մբ, իր անձնական փառասիրություններին եւ ընչաքաղցությանը այդ ձեւով եւ այդպիսի ստորությամբ հագուրդ տալու համար, որը օրերս, անշուշտ շա՜տ մեղմորեն, քննադատվեց նույնիսկ իր իսկ գլխավորած Կրոնական ժողովում, որը որոշեց, ինչպես ավելի ուշ՝ Համայնքային վաքըֆների (կտակված կալվածքներ) ժողովի դռնփակ նիստում, որ հետայսու նման կարեւորության հարցերում, ինչպիսին է Բունդեսթագի որոշմանը համայնքի անունից արձագանքելը, Պատրիարքական ընդհ. փոխանորդը հայտարարությամբ հանդես գալուց առաջ պարտի խորհրդակցել համայնքի գործերի պատասխանատու ավելի լայն շրջանակների հետ: Այլ խոսքով, պոլսահայ համայնքը, որքան էլ դժգոհ իր նշանակյալ, ավելի ճիշտ՝ ինքնանշանակյալ առաջնորդի հայտարարությունից, ընդամենը, գոնե պաշտոնապես, առարկում է նրա ձեւակերպումներին, ինչը բնավ էլ չի փոխում դավաճանական այդ արարքի էությունը:

Բայց այս բոլորը չեն փոխում բուն հարցի էությունը. սա Թուրքիան է, սուլթանական թե հանրապետական, համիդյան թե աթաթուրքական կամ էրդողանական՝ ամեն ինչում ինքն է թելադրում ամեն բան իր հպատակներին, ով կամ ովքեր էլ լինեն վերջիններիս առաջնորդները՝ Աթեշյանը թե Մութաֆյանը, Գազանճյանը, թե նրանց նախորդած բազմաթիվ պատրիարքները: Միայն Օրմանյանի հանճարն էր, որ արյունարբու Սուլթան Համիդին զիջելով զիջումներ էր պոկում, եւ որի հետ այդքան տխմար ձեւով վարվեցին մեր հեղափոխականները...

Եվ հիմա՝ շատերն են պահանջում Աթեշյան սրբազանից հրաժարական տալ, բոլոր սրերն ուղղելով նրա դեմ: Անշուշտ դժվար չէ նրան պատժելը, այն էլ՝ եկեղեցականի համար ամենածանր պատիժով՝ պարզապես կարգալույծ հռչակելով նրան: Բայց դրանով կփոխվի՞ որեւէ բան, եւ ավելի կարեւորը՝ կապահովվի՞ Թուրքիայում ապրող մեր հայրենակիցների անվտանգությունը, որը տեւապես գտնվում է իշխանությունների պրկված, արյունոտ բթամատի տակ...

Մեր գլխավոր թիրախը պետք է լինի Թուրքիա՛ն, թուրքական պետությունը, որի ստեղծած, պարտադրա՛ծ պայմանների ծնունդն են աթեշյանները...

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՀՕ, ԲՕ... եւ Սանկտ Պետերբուրգ



Երբ պատգամավորը հարցնում է, թե 90 կմ ճանապարհ նորոգելու համար 101 մլն եվրո հերթական վարկ վերցնելը չի՞ նշանակում, որ ամեն կիլոմետրի վրա միջինում մեկ միլիոն եվրոյից ավելի պարտքով գումար ենք ծախսելու, եւ հնչում է պատասխան, թե դա պրոֆեսիոնալ հաշվարկ չէ, կարող ենք համաձայնել դրա հետ: Իհարկե պրոֆեսիոնալ չէ, քանի որ շատ մեծ պրոֆեսիոնալներ նստել-մանրամասն հաշվել են, թե այդ հսկա գումարից որը որտեղ այնպես տեղավորել, որ հետո խնդիր չծագի թղթաբանության հետ, նկարագրել են, թե թունելների վրա որքա՞ն է ծախսվելու, մյուս ճանապարհների վրա՝ որքա՞ն եւ այլն: Այս դեպքում եթե պատգամավորի հարցը պրոֆեսիոնալ չէ, ապա չափազանց ոչ պրոֆեսիոնալ կլինի սովորական մարդու զարմանքը, որը պատկերավոր կչափազանցնի, թե մեկ միլիոն եվրոն եթե ասֆալտի փոխարեն թղթադրամներով փռես մեկ կմ ճանապարհի վրա՝ միգուցե ճանապարհը ծածկի: Եւ, իհարկե, կան ճանապարհ նորոգելու միջազգային միջին գներ: Ափսոս, որ մեր ժողովուրդն այլեւս վաղուց չի հավատում պրոֆեսիոնալ հաշվարկներին, քանի որ ինքն էլ այդ միջազգային գներով չի ապրում, քանի որ մեր տնտեսությունը ոչ մի կերպ որեւէ հետընկած երկրի տնտեսությանը գոնե չի նմանվում, ու ուրիշ շատ ափսոսներ: Թե չէ՝ ո՞վ է կասկածում մեր փոխնախարարների կամ կառավարող այլ պաշտոնյաների պրոֆեսիոնալիզմին, որ անպայման միջազգային ստանդարտներով ներդրած կլինեն ամեն եվրոն ծախսերում արտացոլելու ձեւը: Մեր հյուսիսային ճանապարհների նորոգմանն էլ, որ ռազմավարական նշանակության է՝ ոչ ոք չի կասկածում: Բայց համ էլ բազմաթիվ ստուգումներ ու ՎՊ հաշվետվություններ են արձանագրել ճանապարհային վարկերը լվանալու, փռելու եւ չորանալուց հետո ուտելու հազար պրոոֆեսիոնալ եղանակ:

Հասկանում ենք՝ փող չկա, բյուջեն ծակ է, ու Հայաստանում ամեն ինչ վարկերով պիտի արվի, որոնք դեռ հաճույքով տալիս են մեզ՝ միգուցե հեռանկարում իմանալով, որ մեր արտաքին պարտքը շուտով գերակշռելու է ՀՆԱ-ի կեսը, ու գալու է պահը, որ պարտքի դիմաց անվճարունակ Հայաստանից էլի «գույք պարտքի դիմաց» են ուզելու, կամ հենց երկիրն են ուզելու: Ու էսօրվա բոլոր պրոֆեսիոնալ փոխնախարարներին ու նախարարներին որ հավաքենք ու «բիրիքով» տանք պարտատերերին՝ պարտքի 0,01 տոկոսն էլ չենք կարողանալու փակել:

Իսկ այնպես՝ ո՞վ է դեմ Հայաստանի եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ ֆինանսական պայմանագրի՝ 51 մլն եվրոյով Վանաձոր-Ալավերդի եւ մինչեւ Վրաստան հատվածի ճանապարհների նորոգման բարի նպատակներին, որն ԱԺ-ն այս շաբաթ հաստատեց: Կամ ո՞վ է դեմ, որ քանդուքարափ Գյումրիի ճանապարհների գոնե տաս տոկոսը Վերակառուցման եւ զարգացման բանկից բերած 14,6 մլն դոլար վարկով նորոգվի (վերջապես): Կամ դեռեւս մնացած մեր պետական էներգետիկ ձեռնարկությունների առողջացմանը հո դեմ չենք, բայց՝ շահութաբեր այս ոլորտը, որ ինքն իր գլուխը պետք է հոգար, վարկո՞վ առողջացնել: Ու մենք ընդամենը, ինչպես ՀՀ քաղաքացիների մեծ մասը, մտահոգված ենք, որ հետագայի առումով ազգի վրա ծանրացող վարկերը իսկապես ծառայեն իրենց նպատակին ու հերթական անարդյունավետ, մսխված վարկերը չդառնան, հետն էլ կասկածի տակ դնելով երկրի ապագան: Որ վարկերի վրա ախորժակ պահողներին, ազգուտակով տենդերները շահողներին վերջապես իրենց տեղը ցույց տան:

⇨6

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## Բեռլինը չիրականացրեց Ալիեւի հույսերը, ի՞նչ կտա Պիտերը

Այն տպավորությունն ունեցանք, թե հունիսի 7-ին Բեռլինում Ալիեւ-Մերկել հանդիպմանը հաջորդած մամլո ասուլիսի ժամանակ Ադրբեջանի նախագահն կամեցավ ընդգծել, որ ԵԱՀԿ նախագահող երկրի մայրաքաղաքում էլ ասում է նույնը, ինչ իր երկրի բնակիչներին՝ իր դիրքերը չի զիջում: Արդեն իրազեկել ենք, որ նախագահ Ալիեւը ելույթի հենց սկզբից կեղծեց պատմությունը, շեշտեց, թե ստատուս քվոն անընդունելի է, հրադադարն անընդհատ խախտում է հայկական կողմը, եւ քարտեզին նայողը կարող է նկատել՝ ով է իրականում զոհ: Սա՝ անցյալի մասով, իսկ ապագային ուղղված իր առաջարկը կամ ակնկալիքը՝ միջազգային հանրության կողմից ՄԱԿ- ի ԱԽ 4 բանաձեւերի պարտադրումն է «էթնիկ մաքրազտում» իրականացրած Հայաստանին: Ադրբեջանցի լրագրողների շուրթերով իրենց նախագա՞հը, թե՞ ադրբեջանական հասարակությունն է խոսում, դժվար է անաչառ որոշել, բայց նրանց էլ Բեռլինում ամենաշատը հետաքրքրում էր մի հարց՝ ե՞րբ են պատժամիջոցներ կիրառելու Հայաստանի դեմ՝ որպես ագրեսոր երկրի:

Այն, որ առաջիկա երկուշաբթի հենց Ռուսաստանում է կայանալու Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, կարծես թափանցիկ ակնարկեց նաեւ հունիսի 7-ին ԳԴՀ կանցլերը: ԼՂ հակամարտության լուծման հարցում վճռորոշ դերակատարում կունենա Ռուսաստանը, ասաց Մերկելը՝ մեր կապերը կօգտագործենք ինչպես Ռուսաստանի կառավարությանը, այնպես էլ Մինսկի խմբի համանախագահող ԱՄՆ- ին եւ Ֆրանսիային սատարելու գործում, երբ հարցը հակամարտության լուծմանն է վերաբերում: Մերկելը նաեւ ընդգծեց, թե ԵԱՀԿ նախագահող երկիր Գերմանիան ճնշում պիտի բանեցնի ոչ միայն զինադադարի պահպանման հարցում, այլեւ՝ առաջընթաց ակնկալելով քաղաքական գործընթացի մեջ, որի նպատակը զինադադարով եւ քաղաքական լուծմամբ ամբողջական փաթեթի հաստատումն է: Բազմիցս կրկնեց՝ Ղարաբաղյան հարցի դիվանագիտական լուծմանն այլընտրանք գոյություն չունի:

Ի՞նչ էին խոսել կանցլերի նստավայրում ճաշի հրավիրված Ալիեւն ու Մերկելը, իհարկե կարելի է միայն ենթադրել, բայց սեւ կոստյումի մեջ զոհի կերպարն ընդգծած Ալիեւին Մերկելի պաստելային չեզոք կապտականաչը պատասխանում էր՝ խաղաղ երկնքի գույնով:

⇨11



**Պարոնայք երդվյալ ատենակալներ, 1915 թվականը երեսուն տարիներից մեկն է**

էջ 7



**Օֆելյա Համբարձումյան**

էջ Ա



**Ռուսաստանը Հյուսիսային Կովկասը կորցնելու վտանգի առաջ**

էջ 10

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Մուհամմէտ Ալի

Աշխարհի մէջ երկու մարզաձեւ ահաւոր կերպով ատած եմ. մին բռնցքամարտն է, կամ կռփամարտը, իսկ միւսը՝ ցլամարտը; Մէկը՝ մարդ հարուածելով, քիթն ու բերանը արիւնելով ու գանկը ցնցելով, յաղթանակ տանելու «մարզանք» է, իսկ երկրորդը, անմեղ անասունի մը դիմաց կարմիր լաթ մը ճօճելով, զայն կատղեցնելու եւ ապա սրախողխող ընելու «մարզանք» է... եւ ասոնք միլիոնաւոր հանդիսատես ունին ու միլիոններու եկամուտ:

Եթէ մենք զմեզ քաղաքակիրթ կը նկատենք, ապա ինչո՞վ կը տարբերինք Հռոմի արեան ծարաւ կայսրերէն, որոնք հաճոյքով կը դիտէին կրկես նետուած մենամարտիկներու զիրար խոցելով սպանութիւնները:

Տակաւին մեր մէջ գազանային բնազդը կ՚ապրի՞, անպայման արիւ՞ն պիտի տեսնենք որ յագենանք եւ **օլէէ** գոչենք:



Մուհամմէտ Ալի... աշխարհի անկրկնելի բռնցքամարտիկը մահացաւ անցեալները, տարիներով կէս-անդամալոյծ վիճակով տառապելէ ետք:

Արդէն կուռք մըն էր, մեռնելէն ետք ալ աստուածացուցին զինք. եւ ինչո՞ւ համար, քանի որ լաւ բռնցքամարտիկ է, աշխարհի ախոյեան, առասպելական մարզիկ, որ մէկ հարուածով դիմացինը **նոք աութ** ըրած, գետին փռած է... Այսինքն, մարդ ծեծելու վարպետ էր եւ ատոր համար ալ միլիոններու տիրացած է եւ համաշխարհային դէմք դարձած:

Չեմ գիտեր, լա՞մ, թէ՞ խնդամ:

Եթէ զինք մեծարէին իր կատարած բազմաթիւ բարեսիրական օժանդակութիւններուն համար, ըսելիք չէի ունենար, սակայն մարդը կը պատուեն յետմահու անոր թաղումին նախագահներու, բարձրաստիճան անձնաւորութիւններու եւ անուանի դերասաններու եւ մարզիկներու մասնակցութեամբ, ուրիշ մարդոց ցաւ պատճառելուն եւ անոնց քիթն ու բերանը այլանդակելով եւ արիւնաշաղախ դարձնելով գետին տապալելուն համար... Ուղեղիս մէջ չի տեղաւորուիր. եւ այս բոլորը մարզանք կը համարեն...

Մարդ ծեծելը ինչո՞ւ մարզաձեւի վերածուած է. ցուլ սպաննելը ինչո՞ւ շոուի, ցուցադրութեան վերածուած է:

Ցլամարտերը արգիլելու շատ կոչեր եղան, յատկապէս կենդանիներու պաշտպան կազմակերպութիւններու կողմէ, սակայն բողոքները տեղ չհասան, քանի որ կարգ մը երկիրներ, ի մասնաւորի Սպանիան, մեծապէս կ՚օգտուին զբօսաշրջիկներէն՝ այդ ազգային խաղը անոնց առջեւ ցուցադրելով:

Բայց կռփամարտը արգիլելու կոչեր չեղան. ինչպէ՞ս արգիլեն, երբ հազարաւոր մարզական ակումբներու մէջ, տասնեակհազարաւորներ կը մարզուին այդ գծով ու իրար ծեծելու կելլեն հանդիսատեսներու առջեւ, որոնք կը վճարեն ու մարզասրահներ կը լեցնեն: Շահաբեր պիզնես է, արգիլել կըլլա՞յ:

Գազանը ե՞րբ արմատախիլ պիտի ըլլայ մարդոց մէջէն:

Տոքթ. ՍԱՐԳԻՍ ԱՏԱՄ

# Արամ արք. Աթեշեանը պէտք է հրաժարի



Թուրքիոյ Հայոց պատրիարքութիւնը լուրջ ճգնաժամի մէջ է պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆեանի անբուժելի հիւանդութեան պատճառաւ: Տարիներ շարունակ թրքահայ համայնքի ներկայացուցիչները ստիպողաբար կը հանդուրժեն ամէն տեսակ նեղութիւններ, դժուարութիւններ եւ ճնշումներ պետութեան կողմէ հաստատուած կանոնադրութիիւններու դէմ դուրս չգալու համար: Երբ որ Մեսրոպ պատրիարք Մութաֆեան անկարողացաւ իր պաշտօնն ու պարտականութիւնները շարունակել, համայնքի զարգացումը սկսաւ կաղալ, եւ երկրի իշխանութեան առիթ տուաւ, որպէսզի իր քաղաքականութիւնը աւելի դիւրին յառաջ տանի Թուրքիոյ հայ համայնքին նկատմամբ:

Թուրքիոյ հայ համայնքին գործերը պատմականօրէն կը կարգաւորուէին 1873-ին օսմանեան Սուլթանին կողմէ վաւերացուցած Ազգային Սահմանադրութեան դրոյթներով, բայց այսօր այդ սահմանադրութիւնը չի գործեր: Այսօր Թուրքիոյ հայ համայնքի որեւէ լուրջ նախաձեռնութեան կամ հարցի լուծումը, օրինակ՝ նոր պատրիարքի ընտրութիւնը, կախեալ է Թուրքիոյ իշխանութեան գործադիր մարմիններու թոյլտուութենէն:

Մութաֆեան պատրիարքի պարագան անշուշտ առաւել բարդ իրավիճակ ստեղծեց, առիթ տալով համայնքի մէջ պառակտումներու եւ հակադիր խմբաւորումներու կազմութեան, նաեւ՝ համայնքի զանազան շրջանակներու միջեւ վնասակար հակասութիւններու եւ ցրտութիւններու ծնունդին:

Այսօր գործնական առումով պատրիարքական աթոռը թափուր է: Պատրիարքը անունով ու մարմինով կայ, սակայն գործունակ չէ: (*)

Պատրիարքի ընտրութեան կազմակերպման համար նախաձեռնարկ մարմինը եւ գոյութիւն ունեցող Հոգեւոր խորհուրդը իրարմէ տարբերուող եւ իրարու հակասող երկու հակադիր դիմումնագրեր կատարած են Թուրքիոյ կառավարութեան: Համայնքին պառակտեալ այս վիճակը շատ հրաշալի առիթ մը տուած է թրքական իշխանութիւններուն՝ մէկ խումբը միւսին, այսինքն՝ եղբայրը եղբօր դէմ հանելու համար: Այս իրավիճակին մէջ նշանակուեցաւ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ մը: Նշանակում մը, որ ըստ սովորութեան միայն գործող պատրիարք մը իրաւունք ունի կատարելու:

Արամ արք. Աթեշեան, գործածելով ոչ ժողովրդական միջոցներ, հարկադրեց Կրօնական ժողովի անդամները՝ զինքը փոխանորդ ընտրելու համար: Կրօնական ժողովի անդամները իրենց աթոռը վաստակելու իմաստով պարտաւորուեցան զինք պատրիարքական ընդհանուր փոխանորդ ընտրել:

Այնպէս կը թուի ըլլալ, թէ Արամ Սրբազան թուրքական իշխանութիւններուն համար ամենալաւ ու նախընտրելի թեկնածուն է: Ան պատրաստ է ընդառաջել անոնց բոլոր ցանկութիւններուն ու քմահաճոյքներուն: Աթեշեան Սրբազան, որպէս պատրիարքի պաշտօնակատար եւ կամ ընդհանուր փոխանորդ, անտես կառնէ թրքահայ համայնքին «իր կրօնապետը ընտրել ուզելու» իրաւունքն ու ցանկութիւնը, ըսելով թէ՝ Մութաֆեան պատրիարքը ողջ է: Ան կը մերժէ նաեւ հարցի լուծման ուղղեալ այլընտրանքի առաջարկները եւ կը քաշքշէ ընտրութիւն կատարելու անհրաժեշտութիւնը:

Թուրքիոյ հայ համայնքը իրարանցումի մէջ՝ շատ անհանգիստ ու շփոթած կացութեան մատնուած է: Համայնքի ողջամիտ անձեր միասնականութեան ու հանդարտութեան կոչեր կընեն, որպէսզի մէկ ձայնով խօսուի:

Հայ ժողովուրդի կողմէ ոչ ընտրեալ պատրիարքական փոխանորդը՝ Արամ արք. Աթեշեան, 2 յունիս 2016 թուականին Գերմանիոյ խորհրդարանին կողմէ առնուած «1915-1916 թուականներուն Օսմանեան Թուրքիոյ մէջ հայոց եւ այլ քրիստոնեայ փոքրամասնութիններուն ապրած դէպքերը որպէս Ցեղասպանութիւն անուանելու որոշում»ի առնչութեամբ նամակ մը ուղարկած է Թուրքիոյ Հանրապետութեան նախագահին: Արք. Աթեշեան իր նամակին մէջ կը յայտնէ, թէ իբր թրքահայութիւնը կը բաժնէ Գերմանիոյ խորհրդարանի բանաձեւին ընդունմամբ Թուրքիոյ ժողովուրդին պատճառած ցաւը: Արք. Աթեշեան թուրքահայութիւնը չի կրնար ներկայացնել եւ յանուն այս համայնքին չի կրնար յայտարարութիւններ ընել ու խօսիլ, քանի որ ժողովուրդին կողմէ չէ ընտրուած, այլ նշանակուած է մի քանի եկեղեցականներու կողմէ: Ան միայն պաշտօնակատարի հանգամանք մը ունի:

Արք. Աթեշեան իր նամակին մէջ կը մատնանշէ, թէ պատրիարքութիւնը եւ Թուրքիոյ հայ ժողովուրդը միշտ կը պահեն պետութեան նկատմամբ հաւատարմութիւն ու հնազանդ կեցուածք մը, եւ նամակը շարունակելով հետեւեալ նախադասութիւնը կը գրէ. «Մենք, 1915-ի ողբերգութիւնէն տուժածներու թոռներն ենք, հիմա ցաւ կը զգանք, որ այսպիսի ցաւոտ խնդիր մը միջազգային քաղաքական հասարակութեան մէջ կը գործածուի որպէս քաղաքական նախանիւթ»:

Երբ որ յանցանքի մը գործակից եւ կամ մեղսակից մը իր յանցանքը կը խոստովանի եւ կապաշխարէ, ասիկա ժողովրդավար հասկացողութեան հիմնական պարտականոթիւն մըն է, նաեւ՝ ողջամտութեան ու մարդկային իրաւունքներու հանդէպ յարգանք: Զայն կարելի չէ «քաղաքական նախանիւթ» անուանել: Այս եղելութիւնը «քաղաքական նախանիւթ» անուանելը կը նշանակէ նախ «ցաւոտ խնդիր»ի ցաւերը աւելի սաստկացնել:

Անձ մը, որ իր ժողովուրդին ձայնը լսել չուզեր, անոր ցանկութիւնն ու պահանջները անտես կառնէ, ժողովուրդին անցեալն ու զգացումները չի յարգեր, չի կրնար այդ ժողովուրդը ներկայացնել, առաւել եւս՝ ղեկավարել: Չի կրնար անոր կրօնապետին փոխանորդը ըլլալ: Հետեւաբար Արամ արք. Աթեշեան Պատրիարքական ընդհանուր փոխանորդի պաշտօնէն շուտով հեռանալու է:

Ա.- Համայնքն իր բողոքի ձայնը պէտք է բարձրացնէ՝ պահանջելով Արամ Սրբազանի Ընդհանուր փոխանորդի պաշտօնէն հրաժարիլը:

Բ.- Համայնքը յամառօրէն պնդելու է պատրիարք ընտրելու իր իրաւունքին վճռականութիւնը:

Գ.- Համայնքի բոլոր մարմինները՝ մտաւորականները, ներառեալ մամուլը, միութիւններն ու համայնքային հաստատութիւնները, միասնականութեան մէջ շարժելով մեկուսացնելու են Արամ Սրբազանը, որպէսզի պարտաւորուի իր պաշտօնէն հրաժարիլ: Օրինակ՝ քարոզներուն ներկայ չըլլալ, անոր հետ չլուսանկարուիլ, մկրտութիւն, պսակի օրհնութիւն, յուղարկաւորութիւն եւ այլ նման արարողութիւններուն զինք չհրաւիրել:

Դ.- Մամուլը, գրողներն ու համայնքի առաջնորդները յօդուածներով, հրատարակութիւններով եւ գործնական այլ միջոցներով համայնքի այս բողոքի շարժումին ուժ տալու են:

Անշուշտ կան Արամ Սրբազանը իր պաշտօնէն հրաժարելու պարտադրանքին տակ դնող այլ միջոցներ: Թերեւս ալ այդ միջոցներու կարիքը պիտի չըլլայ, եթէ Արամ Աթեշեան սրբազան, որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականներէն մէկը, հրաժարելով պիտի բանայ Թուրքիոյ Հայոց նոր պատրիարքի ընտրութեան ճամբան եւ նուազագոյնը գոնէ այդ ձեւով պիտի շահի համայն հայութեան սիրտին ողջոյնը:

**Գերմանիա**

# 1 միլիոն Գլենդեյլում հայկական թանգարանի համար

Կալիֆոռնիայի օրենսդիր մարմինը հաստատել է 2016-17 ֆինանսական տարվա բյուջեն, որն ընդգրկում է մեկ միլիոն ամերիկյան դոլար հատկացնել Գլենդեյլում ամերիկահայկական թանգարան կառուցելու, ինչպես նաեւ 500 հազար դոլար՝ «Լարք երաժշտական ընկերությանը» աջակցելու համար: Այս մասին է տեղեկացնում Սակրամենտոյից (Կալիֆոռնիա) ստացված հաղորդագրությունը:

Թանգարանը կամուրջ է հանդիսանալու խթանելու իրարհասկացողությունը Լոս Անջելեսում եւ նրա շրջակայքում ապրող ամենատարբեր մշակույթների ներկայացուցիչների միջեւ, ինչպես նաեւ պահպանելու հայկական ժառանգությունն ու մշակույթը եւ օտարներին տեղեկացնելու հայոց պատմությանը:

«Անցյալի մեր պատմությունը ներկայացնող հայկական այս թանգարանը հիանալի հավելում է լինելու մեր նահանգի մշակութային եւ պատմական կառույցներին», նշել է այս առթիվ 46-րդ շրջանային խորհրդի անդամներից **Ադրին Նազարյանը**:

Մյուս կողմից «Լարք երաժշտական ընկերությունը» հայ երաժիշտների մի խումբ է, որ մեծ ժողովրդականություն է վայելում եւ ընդարձակելով իր գործունեությունը ավելի քան 300 համերգներ է կազմակերպել, 5 խտասկավառակ լույս ընծայել եւ խրախուսել երիտասարդներին մասնակցելու նահանգային եւ միջազգային մրցույթների: Դրամական աջակցությունը խրախուսելու է խմբին էլ ավելի ընդարձակելու իր գործունեության ծավալները:

**Հ. Ծ.**

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 3



# Նախընտրելի է շրջանառության հարկի տարբերակված շեմը

## *Առեւտրի համար ավելի ցածր, արտադրության համար՝ ավելի բարձր*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կառավարությանը դարձյալ առաջարկում է փոփոխություն կատարել շրջանառության հարկի շեմում՝ իջեցնելով այն: Սա խորհրդարան ներկայացված հարկային նոր օրենսգրքի հիմնական վիճելի կետերից մեկն է: Համենայնդեպս, հենց այս շեմի շուրջ կառավարության առաջարկին են բախվում պատգամավորական տեսակետները՝ ինչպես իշխանական թեւը ներկայացնողներինը, այնպես էլ ընդդիմադիրներինը: Անկախ նրանից, որ նոր օրենսգրքի քննարկումները տեղի են ունեցել գործարար շրջանականերին միավորող կազմակերպությունների մասնակցությամբ, տարակարծությունները մնացել են: Շրջանառության հարկի նոր շեմը առաջարկվում է սահմանել տարեկան 40 մլն դրամը: Այսինքն, այդքան շրջանառություն ունեցող տնտեսվարողները կհամարվեն փոքր եւ միջին ձեռնարկություններ եւ կօգտվեն ավելի մեղմ ու հեշտացված հարկային դաշտից:

Հիշեցնենք, որ ներկայումս այդ շեմը կազմում է 113,4 մլն դրամ: Մոտ 1,5 տարի առաջ այն 58,35 մլն դրամ էր: Փոփոխությունը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ առեւտրով զբաղվողների համար կառավարությունը որոշեց իջեցնել շրջանառության հարկի չափը 3,5 տոկոսից մինչեւ 1 տոկոսի, երբ նրանք, որքան էլ արտասովոր կարող է թվալ առաջին հայացքից, սկսեցին բողոքել դրա դեմ:

Բանն այն է, որ, առաջարկելով ավելի քան 3,5 անգամ ցածր հարկ վճարել առեւտրային գործունեությամբ զբաղվողներին, նրանց առջեւ պահանջ էր դրվում փաստաթղթավորել ապրանքները, այսինքն՝ գործել առանց ստվերի: Առեւտրականները սկսեցին բողոքել ավելի ցածր հարկ վճարելու հնարավորության դեմ, քանի որ իրենց ստվերային շրջանառությունը բացահայտելու դեպքում, իրականում նրանք կսկսեին ավելի բարձր հարկ վճարել: Շրջանառություն, որը առնվազն 5-10 անգամ ավելին էր, քան ներկայացնում են իրենք՝ առեւտրականները: Բավական է նշել, որ շրջանառության հարկի դաշտում գործող մոտ 55 հազար տնտեսվարողները, (որոնցից մոտ 40 հազարը առեւտրով զբաղվողներ) վճարում են պետական բյուջեի եկամուտների ընդամենը մոտ 1 տոկոսը:

Մի խոսքով, կառավարությունը հերթական անգամ տեղի տվեց բողոքողների պահանջներին եւ գնաց այս փոփոխությունների՝ 5 տոկոս առանց փաստաթղթերի կամ 1 տոկոս փաստաթղթերով հարկ վճարելու ընտրությունը թողնելով տնտեսվարողների ընտրությանը: Միաժամանակ, բարձրացվեց շրջանառության հարկի շեմը մինչեւ 113,4 մլն դրամի, այն հիմնավորմամբ, թե փաստաթղթավորմամբ հարկ վճարելու ցանկություն ունեցողները եթե բացահայտեն իրենց իրական շրջանառությունը, հնարավոր է, որ դուրս գան 58,35 մլն դրամի շեմից եւ հայտնվեն ավելացված արժեքի հարկի դաշտ: Թեեւ, արդեն հիմա, որոշ ժամանակ անց, պարզ է, որ առեւտրով զբաղվողներից ոչ ոք չնախընտրեց աշխատել օրինական եւ փաստաթղթերով, հետեւաբար եւ շեմի բարձրացումը արդարացված չէր:

Առեւտրով զբաղվողների վճարած միջին ամսական շրջանառության հարկը 10-15 հազար դրամ է, իսկ ցույց տրվող շրջանառությունը՝ առավելագույնը 200-300 հազար դրամ: Անգամ եթե ցույց տրվեր իրական առավելագույն շրջանառությունը՝ մոտ 10 անգամ ավելի, ապա միեւնույնն է, տարեկան շեմը չէր գերազանցի 58,35 մլն դրամը: Այն ժամանակ առիթ ունեցանք գրելու, որ դա դժվարացնելու էր պետբյուջեի եկամուտների հավաքումը եւ միայն հասարակության մի խավի սուբյեկտիվ դժգոհություններին ընդառաջ գնալը ճիշտ չէ:

Մեր հրապարակումներից մեկում («Դժվարանում է պետբյուջեի եկամուտներ հավաքելը», **«Ազգ»,** 5.09.2015 թ.) նշել էինք, որ առեւտրով զբաղվողները, ինչպես ակնկալում էր կառավարությունը, աստիճանաբար չանցան փաստաթղթավորման եւ օրինական գործունեության: Առաջացան նաեւ բյուջեի եկամուտների հավաքման խնդիրները: Նոր հարկային օրենսգիրքը ներկայացնելիս՝ սա խոստովանեց նաեւ պետեկամուտների կոմիտեի փոխնախագահ **Վախթանգ Միրումյանը**: Նա նշեց, որ շեմի բարձրացումից օգտվեցին խոշոր տնտեսվարողները, որոնք մասնատեցին իրենց ընկերությունը մի քանի փոքրերի եւ անցան շրջանառության հարկի դաշտ, սկսելով ավելի քիչ հարկեր վճարել: Այսինքն, տուժեցինք բոլորս, անգամ փոքր առեւտրականները, որոնց դաշտում հայտնվեցին ավելի խոշոր առեւտրային գործունեություն իրականացնողները: Հիմա, այս երեւույթի դեմ պայքարելու համար կառավարությունը ցանկանում է նվազեցնել շրջանառության հարկի շեմը մինչեւ 40 մլն դրամի:

Ընդհանրապես, նման դեպքերում կտրուկ փոփոխությունները անընդունելի են: Ճիշտ այնպես, ինչպես չէր կարելի 58 մլն դրամից շեմը կտրուկ բարձրացնել մինչեւ 113 մլն դրամ, այդպես էլ չի կարելի ավելի կտրուկ իջեցնել մինչեւ 40 մլն դրամ: Նկատի ունենալով վերջին մեկ-երկու տարվա ընթացքում արձանագրված գնանկումային միջավայրը, կարելի է շեմը վերադարձնել նույն 58,35 մլն դրամին, քանի որ շեմի բարձրացման պատճառաբանություններից մեկն էլ այն ժամանակ գնաճի ցուցանիշներն էին: Թեեւ ավելի ճիշտն այստեղ տարբերակված մոտեցում կիրառելն է, ինչի մասին բազմիցս ենք գրել:

Հայաստանում փոքր ու միջին բիզնես ասելով անմիջապես հասկանում ենք առեւտրով զբաղվողներին: Որքան էլ ցավալի է, հենց նրանք են գերակշռում շրջանառության հարկի դաշտում, կազմելով մոտ 80 տոկոսը: Մինչդեռ միայն նրանց համար է շրջանառության հարկի տոկոսադրույքի իջեցում նախատեսված: Փոխարենը՝ արտադրության համար շրջանառության հարկի տոկոսադրույքը 3,5 տոկոս է, ծառայությունների համար՝ 5 տոկոս: Նման անարդար հարկային դաշտը փոքր բիզնեսում փաստորեն խրախուսում է ներմուծումը, այդ թվում մեր թշնամի երկրից՝ Թուրքիայից:

Միանշանակ է, որ նախեւառաջ փոքր արտադրությունները պետք է ունենան ամենացածր տոկոսադրույքը, ոչ թե առեւտրականները, որպեսզի խրախուսենք տեղական փոքր արտադրությունների զարգացմանը: Դա կնպաստի նաեւ առեւտրի ծավալների ավելացմանը, քանի որ առեւտրով զբաղվողները կսկսեն վաճառել տեղական ապրանքները եւ մեր երկրից դուրս եկող միջոցների մի զգալի մաս կշրջանառվի մեր երկրում:

Հարկային տոկոսադրույքի հետ միասին հարկ է նաեւ տարբերակված մոտեցում շրջանառության հարկի շեմի հարցում: Դարձյալ առեւտրով զբաղվողների համար կարող է դա լինել 40 մլն կամ 50 մլն դրամ, իսկ փոքր արտադրությունների համար՝ նախկին 58 մլն դրամը կամ գուցե ավելի բարձր: Արտադրության դեպքում, օրենքը շրջանցելով հարկման ավելի հեշտ դաշտ անցնելը բարդ է, քան առեւտրում, որը դժվար վերահսկելի է:

Դժվար է ասել, թե ո՞ր մոտեցումը կգերակշռի կառավարությունում եւ Ազգային ժողովում: Դա կախված է նաեւ մոտալուտ նախընտրական տարով: Պատգամավորների մեծ մասը, սովորության համաձայն, կղեկավարվեն ոչ թե համընդհանուր, համապետական շահով, այլ առեւտրականների խավին դուր գալու եւ ձայներ ստանալու ակնկալիքով:

# Միցուհիրո Ֆուրուսավա. «Հարկային նոր օրենսգիրքը տալիս է հարկման բազան ընդլայնելու լուրջ հնարավորություն»

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհրդի կողմից «Երկարաձգվող ֆինանսավորման» եռամյա ծրագրի՝ Հայաստանի կատարողականի երրորդ ամփոփիչ ստուգման ամփոփումից հետո, ԱՄՀ կառավարիչ տնօրենի տեղակալ **Միցուհիրո Ֆուրուսավան** նշել է, որ չնայած արտաքին դժվարին պայմաններին՝ ծրագրի կատարողականն ընդհանուր առմամբ բավարար է եղել, ընդ որում՝ ապահովվել է թիրախների մեծ մասը: Այս մասին տեղեկանում ենք ԱՄՀ տարածած մամուլի հաղորդագրությունից:

ԱՄՀ ներկայացուցիչը նաեւ նշել է, որ Հայաստանում իրական ՀՆԱ-ի չափավոր աճը պահպանվել է՝ պայմանավորված հանքարդյունաբերության եւ գյուղատնտեսության ճյուղերում արտահանման հետ կապված առաջարկի գործոններով: Դրամավարկային պայմանները կայունացել են, իսկ արտարժութային շուկայի ճնշումները՝ նվազել: Անդրադառնալով Հայաստանի կառավարության գործունեությանը, Միցուհիրո Ֆուրուսավան հայտնել է նաեւ, որ իշխանությունները հավատարիմ են մնում հարկաբյուջետային կոնսոլիդացմանը եւ պարտքի կայունությանը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով եկամուտների աճին, ապահովելով եւ ավելացնելով կապիտալ եւ սոցիալական ծախսերը:

Ըստ Միցուհիրո Ֆուրուսավայի, հարկային նոր օրենսգիրքը տալիս է հարկման բազան ընդլայնելու լուրջ հնարավորություն՝ կրճատելով արտոնությունները եւ արձագանքելով բացերին, դրանով օժանդակելով թե՛ կոնսոլիդացմանը, թե՛ աճին նպաստող ծախսերի ավելացմանը:

«Կենտրոնական բանկի գործողություններն օգնել են շուկայում կանոնավոր պայմանների եւ ֆինանսական կայունության ապահովմանը: Առաջիկայում փոխարժեքի քաղաքականությամբ կշարունակվեն սահմանափակվել միջամտությունները եւ պահպանվել բուֆերները: Դրամավարկային պայմանների բնականոնության հետագա վերականգնումը կօգնի գնաճն ավելի մոտեցնել թիրախին եւ կօժանդակի բանկային վարկավորման վերսկսմանը, իսկ մակրո եւ միկրո նորմատիվների կիրառումը եւ ճգնաժամային պատրաստվածության ծրագրի հետագա ամրապնդումը կօգնեն ֆինանսական շուկաներում կանոնավոր պայմանների պահպանմանը», սա ԿԲ դրամավարկային քաղաքականությանն ԱՄՀ-ի պաշտոնյայի տված գնահատականն է:

«Մրցակցության, մրցունակության եւ տարածաշրջանային ու համաշխարհային ինտեգրման բարելավմանն ուղղված հետագա կառուցվածքային բարեփոխումներին հետամուտ լինելը շարունակում է կարեւորվել խոցելիությունների նվազեցման եւ միջնաժամկետ աճին օժանդակելու առումով: Բյուջեի սահմանափակ միջոցների շրջահայաց օգտագործումը երաշխավորելու համար անհրաժեշտ է ապահովել, որ պետական բյուջեն չկլանի կոմունալ եւ այլ ընկերությունների վնասները կամ պարտավորությունները եւ նրանց անունից վճարումների կատարումը», ասել է Միցուհիրո Ֆուրուսավան:

**Ա. Մ.**

## ՀԱՄԱՌՈՏ

# Դիլիջանում կթույլատրվի օծանելիք, կոսմետիկա եւ օճառ արտադրել

Կառավարությունը երեկ հաստատեց Տավուշի մարզի Դիլիջան համայնքի վարչական տարածքներում, բացառությամբ «Դիլիջան» ազգային պարկի տարածքի, քիմիական արդյունաբերության բնագավառում թույլատրելի գործունեության տեսակների ցանկը: Մասնավորապես, ցանկում ընդգրկվել են քիմիական արտադրության միայն հետեւյալ տեսակները՝ օճառի արտադրություն, որի մեջ բացակայում է վտանգավոր նյութերի եւ թափոնների առկայությունը, իսկ արտադրական գործընթացն իրականացվում է փակ ցիկլով եւ թափոններ չեն առաջանում: Երկրորդ թույլատրվող քիմիական արտադրությունը օծանելիքի եւ կոսմետիկական միջոցների արտադրությունն է: Այն դեղագործական արդյունաբերության բաղկացուցիչ մաս է, որտեղ բացակայում են վտանգավոր լուծիչները, իսկ արտադրանքը թողարկվում է ջրային հիմքի վրա, որն անվտանգ է:

# «ԱՄԿԵ Գրուպ»-ի 2,5 մլրդ դրամ ներդրումային ծրագրի ԱԱՀ-ն հետաձգվեց

«ԱՍԿԵ Գրուպ» ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների մաքսային եւ հարկային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը կառավարության երեկվա որոշմամբ հետաձգվեց ներմուծման հայտարարագրման օրվանից հաշված 3 տարի ժամկետով: Ընկերության նպատակն է համալրել մետաղյա աղեղային հալման վառարանով, պողպատյա ամրաններով աղացման գնդեր արտադրելու համար, որի համար նախատեսում է իրականացնել շուրջ 2,5 մլրդ դրամի ներդրումներ, որից մոտ 2 մլրդ դրամը սարքավորումներ ձեռք բերելու համար: Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում կստեղծվի 32 աշխատատեղ, հետեւյալ միջին աշխատավարձերով՝ 2016-ին՝ 180 հազար դրամ, 2017-ին՝ 200 հազար դրամ եւ 2018-ին՝ 220 հազար դրամ:

**Ա. Մ.**

# Ղարաբաղը պատերազմից հետո

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Ադրբեջանի հետ շփման գծում ապրիլյան քառօրյա պատերազմից հետո, հակառակ մեծ թվով զոհերի, խնդիրներն ու մտահոգությունները չպակասեցին: Ընդհակառակը՝ թերություններն ու բացթողումները ջրի երես դուրս եկան եւ հանրային քննարկումների առարկա դարձան:

Երբ զինտեխնիկայի կրակոցները դադարեցին, պարզվեց որ 800 հեկտար տարածք զիջել ենք թշնամուն: Կառավարական շրջանակներում կորուստը մարտավարական իմաստով աննշան բնութագրեցին: Բայց քանի որ պատերազմը հայրենասիրության նոր ալիք էր բարձրացրել, իսկական հայրենասերներից ոմանք, մի քանի դեմագոգների հետ, սկսեցին պնդել, որ նույնիսկ մեկ սանտիմետրի կորուստը անհանդուրժելի է:

Երբ բանակին տրամադրված ռազմական բյուջեի չարաշահումների մասին լուրը տարածվեց, գերատեսչության որոշ բարձրաստիճան աշխատակիցներ պաշտոնազրկվեցին: Մի քանի քաղաքական գործիչներ ողբերգությունը օգտագործեցին մեղադրական խոսքեր ուղղելով կառավարության հասցեին: «Ռուսաստանի կողմից նորագույն հարձակողական սպառազինությունների մատակարարումները Բաքվին՝ որակական առումով խախտեցին ռազմական բալանսը, զգալիորեն մեծացնելով ապրիլի 2-ի հարձակումների հավանականությունը: Հայաստանի կառավարությունը պետք է կարողանար կասեցնել ռուս-ադրբեջանական ռազմական պայմանագրի իրագործումը», նշեց նախկին նախագահ **Ռոբերտ Քոչարյանը**:

Քառօրյա պատերազմից անմիջապես հետո Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այցը Հայաստան հստակություն չմտցրեց իրադարձության մեջ: Այն սոսկ ծառայեց, գուցե, մի փոքր մեղմելու հակառուսական տրամադրությունները, որոնք անկառավարելի կարող էին դառնալ:

Հակամարտությունն, ակնհայտորեն, ունեցավ նաեւ այլ՝ միջազգային արձագանքներ: Բարձրաստիճան չինական մի պատվիրակություն այցելեց Հայաստան, ինչը կարող է երկրի տնտեսության, գուցե նաեւ պաշտպանության համակարգի, որոշակի բարելավում կանխատեսել:

Իրանն իր հերթին, բարի կամք դրսեւորելով, հորդորեց կողմերին հակամարտությունը կարգավորել դիվանագիտական ճանապարհով: Պարզ է, որ միջազգային պատժամիջոցներից ընդամենը վերջերս ազատագրված Իրանի ղեկավարները չեն ցանկանում, որ պատերազմ բռնկվի իրենց հարեւանությամբ:

Ահազանգ հնչեց նաեւ արեւմտյան մայրաքաղաքներում: Ինչպես մեկնաբաններից մեկն էր գրել, «Քառօրյա պատերազմը մարդկային լուրջ կորուստների պատճառ դարձավ: Բայց նաեւ զգալիորեն ընդգծեց ՆԱՏՕ-ի հարավային մարտավարական թեւի տարածքում գտնվող էներգակիր ենթակառուցվածքների խոցելիությունը: Խոսքը Բաքու-Սուպսա եւ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (BTC) նավթատար խողովակաշարի, Հարավային Կովկասի գազի ազգային խողովակաշարի (NGP) եւ դրանց մոտակայքում տեղակայված նավթի եւ գազի վերջնակայանների մասին է»:

«Azatutyun.am» կայքը տեղեկացրեց, որ Հայաստանն արդեն տեղակայել է հակաօդային եւ հրթիռային պաշտպանության համակարգեր իր սահմանում եւ Ղարաբաղում անցկացրել զինավարժություններ՝ հնարավոր հարձակումներ իրականացնելու համար Ադրբեջանի նավթային եւ գազային ենթակառուցվածքների վրա:

Արեւմտյան նավթի շահերին սպառնացող վտանգը կանխելու նպատակով, «Բրիտիշ Փեթրոլիում» անգլիական բազմազգ ֆիրմայի ադրբեջանցի փոխնախագահ **Բախտիար Ասլանբեյլին** առաջարկել է կազմել մի նոր հայեցակարգ ՆԱՏՕ-ի համար, «Հոդված 4.5-ի» նման մի բան, որը որոշակի պաշտպանություն կշնորհեր միջ-սահմանային եւ միջ-տարածաշրջանային էներգակիր ենթակառուցվածքներին:

Հայաստանը փոքր, ծովային ելքերից զուրկ եւ ուժեղ թշնամիներով շրջափակված երկիր է, որն ինչպես արդեն բազմիցս ապացուցվել է, չի կարող հույսը դնել իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի վրա: Մենք չենք կարող երկրորդ անգամ ցեղասպանության զոհ դառնալ: Ո՞րն է, ուրեմն, լուծումը: Ինչպե՞ս ենք գոյատեւելու:

Իսրայելում կան 200 միջուկային մարտագլխիկներ, որոնք իրավական տեսակետից անթույլատրելի են, բայց միջազգային հասարակայնությունը հանդուրժում է դրանց գոյությունը: Պատճառն այն է, որ հրեա ժողովուրդը հոլոքոսթ է դիմակայել եւ այժմ էլ շրջապատված է իրեն թշնամի հարեւաններով, չնայած դրանց որոշ մասին (Իրաքին, Սիրիային եւ Լիբիային) Մ. Նահանգները արդեն իսկ գետնին է հավասարեցրել:

Ինչքան էլ երազենք ապրելու միջուկային զենքից զուրկ մի աշխարհում, միեւնույն է, Հայաստանը, Իսրայելի նման եւ նույն պատճառներով կարիք ունի որոշակի կանխարգելիչ միջոցների: Լրատվական վերջին հաղորդագրությունները նշում են, որ Հայաստանի նախկին վարչապետ, այժմ ԱԺ պատգամավոր **Հրանտ Բագրատյանն** ու լեգենդար գեներալ-մայոր **Արկադի Տեր-Թադեւոսյանը** զգուշացրել են Ադրբեջանին, որ միջուկային զենք կօգտագործեն նրա դեմ: Հայերի կողմից սպառնալիքներ են հնչել նաեւ այն մասին, որ կպայթեցնեն Մինգաշեհիր ջրամբարը, որը կարող է ադրբեջանական շատ գյուղեր հեղեղել եւ բնապահպանական լուրջ աղետ առաջացնել:

Պատերազմի տրամաբանությունը դաժան է: Իրաքյան բանակին ոչնչացնելու օրերին, Ծոցի պատերազմի հրամանատար՝ գեներալ **Նորման Շվարցկոֆն** ասել էր. «Մարդկանց ոչնչացնելու ավելի քաղաքակիրթ ձեւ կամ միջոց չկա»:

«Վաշինգտոն փոստի» մայիսի 31-ի համարում **Նինա Կաստերսենը** բավական դաժան եզրահանգումներ էր արել ղարաբաղյան վերջին պատերազմի վերաբերյալ: «Ներկա կռիվը կարծես ճակատային գիծը շրջեց դեպի Ադրբեջանի կողմը, նրա օգտին: Սա կարեւոր է, ոչ թե այն պատճառով, որ ձեռք բերված տարածքը մեծ է կամ մարտավարական նշանակություն ունի, այլ որովհետեւ այն հարված հասցրեց հայերի հպարտությանը եւ ամենակարեւորը՝ ցույց տվեց, որ Լեռնային Ղարաբաղի դրությունը այնքան էլ ապահով կամ ամուր չէ, ինչքան որ անկլավի ղեկավարությունը հավաստացնում է իր ժողովրդին»:

Գուցե **Սամվել Բաբայանի** ժամանումը Արցախ անուղղակիորեն հաստատում է «Վաշինգտոն փոստի» վերոնշյալ գնահատականը: Գեներալ Բաբայանը գլխավորում էր ղարաբաղյան բանակը 1993-ից 1999 թվականներին եւ բազմաթիվ հաղթանակների համար արժանի գովասանքներ է ստացել: Նրան որպես հերոսի ընդունեցին իր ծննդավայրում, բայց նրա վերադարձի դրդապատճառներն այնքան էլ հստակ չեն: «Ուժերիս ներածին չափ անելու եմ ամեն ինչ, որ մեր անվտանգությունն ինչպես հարկն է պաշտպանված լինի», հայտարարել է նա, փորձելով մեկնաբանել իր վերադարձը ռուսաստանյան ինքնաքսորից: Նա նաեւ կոչ է արել անհապաղ արդիականացնել ռազմական ուժերը, չեզոքացնելու համար Ադրբեջանի կողմից որեւէ ռազմական սպառնալիք:

Պատերազմի հերոսները հազվադեպ է, որ դառնում են խելացի պետական գործիչներ: Ղարաբաղում եղած ժամանակ նա իրեն վեր էր դասում օրենքից: Նրան դատապարտեցին Արցախի նախկին նախագահ՝ Արկադի Ղուկասյանի դեմ մահափորձում դերակատարություն ունենալու համար: Իր դատավճռի չորս տարիները բանտում անցկացնելուց հետո նա Հայաստան տեղափոխվեց եւ հիմնեց «Դաշինք» քաղաքական կուսակցությունը, մտերմացավ անդուր կամ վանող մի քանի հեղինակությունների հետ: Նա քննադատում է քառօրյա պատերազմի ժամանակ կառավարության գործելաոճը, բայց ժխտում է ղարաբաղյան բանակը դարձյալ ղեկավարելու կամ ընդհանրապես քաղաքական դաշտ վերադառնալու մտադրությունները: Եթե նրա նպատակն էր բարձրացնել ժողովրդի մարտական ոգին եւ տրամադրությունը, ապա պետք է խոստովանել, որ նա հասավ իր նպատակին:

Անհանգստություն իրո՛ք, կա շրջանում, եւ Ղարաբաղը կարիք ունի բարոյական աջակցության, ինչը պատերազմի վետերաններն ու կամավորները առատորեն ցուցաբերում են: Ոչ ոք չի կարող հաստատ ասել, թե գեներալ Բաբայանը ներկայիս ինչքանով է ծանոթ ռազմական զինանոցի եւ պատերազմական մարտավարության ժամանակակից զարգացումներին, որպեսզի նրան հնարավոր լինի վստահել պատասխանատու դերակատարություն բանակում:

Ժողովրդի հայրենասիրական ոգեշնչումը անհրաժեշտ է, բայց Ղարաբաղի առաջնորդները պետք է առավել սթափ գնահատեն կացությունը եւ ավելի խոհեմ ու փորձագիտական լուծումներ գտնեն: Համոզված ենք, որ Երեւանն այդ հարցերում լիովին կարող է աջակցել:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԻ

# Ա. Կռիլով. «Եթե Հայաստանը զիջի ԼՂՀ անվտանգության գոտին, նա կզիջի ամեն ինչ»

**ՀՀ եւ ԱՀ նախագահների վիեննական հանդիպումից հետո ղարաբաղյան հակամարտության գոտում նկատվում է հարաբերական անդորր: Որոշ փորձագետներ տվյալ իրավիճակը դիտարկում են Բաքվում «Ֆորմուլա-1» ավտոմրցարշավի Եվրոպայի Մեծ մրցանակի խաղարկությամբ, ոմանք էլ դա համարում են Վիեննայի բանակցությունների արդյունք:**

**Կովկասագետների գիտական ընկերության նախագահ, ՌԴ ԳԱ Համաշխարհային եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի փորձագետ Ալեքսանդր Կռիլովի կարծիքով, անդորրը կապված է առաջին հերթին Ադրբեջանի այն սցենարի հետ, ըստ որի շփման գծում պահպանվում է թույլ պատերազմի վիճակ՝ պարբերական սրացումներով, որոնք դառնում են ավելի ու ավելի լայնընդգրկուն: Դրա հաստատումը ապրիլյան իրադարձություններն են:**

**«Որ Ադրբեջանին ձեռնտու պահերին սրացումներ կլինեն, դա միանգամայն ակնհայտ է: Եվ, ցավոք, այս վիճակը երկար կշարունակվի, քանի որ տվյալ քաղաքականությունը միտված է հայկական կողմի ուժասպառմանը, Ադրբեջանը լուծում է հենց այդ խնդիրը», VERELQ-ի թղթակցի հետ զրուցելիս հայտարարել է Կռիլովը:**

**Փորձագետի խոսքերով՝ Հայաստանը պետք է գտնի համարժեք պատասխաններ: Դրանք առայժմ չկան, քանի որ հակամարտության գոտում սրացման այդ բոլոր տարիներին հայկական կողմը գտնում էր, որ ինքը պահպանել է իր դիրքերը եւ այլեւս որեւէ անելիք չկա: Եվ Ադրբեջանը հնարավորություն էր ստանում կրկին ու կրկին վերադառնալու այդ սրացմանը: Պատասխանը պետք է գտնեն միայն հայ քաղաքական ու զինվորական գործիչները, կարծում է ռուս փորձագետը:**

**Նա Քառօրյա պատերազմից հետո սկզբունքային փոփոխություն է համարում այն, որ ադրբեջանցիներին հաջողվեց վերահսկողության տակ առնել հայկական բանակի վերահսկած մի տարածք: Ադրբեջանական կողմը խանդավառությամբ կփորձի կրկին նման բան անել. «չէ որ այդպիսով նա կարող է ճնշման եւ խնդրի լուծման հույս ունենալ», նշել է Կռիլովը:**

**Պատասխանելով այն հարցին, թե որքանով համարժեք էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պնդումը, թե բուֆերային գոտում 800 հա տարածքի կորուստը չպետք է մեծ մտահոգություն պատճառի, Կռիլովն ասել է, որ դա եւս Ադրբեջանի քաղաքականության արդյունքն է. այն վարժեցրել է, որ կարելի է զիջել եւ տվյալ իրողությունը չընկալել որպես աղետ:**

**Այս ձեւով մարդիկ կարող են աստիճանաբար ընտելանալ զիջումներին: «Բայց եթե Հայաստանը զիջի անվտանգության գոտին, նա այլեւս չի ունենա պաշտպանության ապահովություն: Տանկային մեկ ճեղքում, եւ վերջ. Ստեփանակերտը գրավված է: Իսկ ապրիլի սկզբին, հիշեցնում եմ, տարբեր տվյալներով սահմանի վրա կար 200-300 տանկ», ընդգծել է նա:**

**Փորձագետի կարծիքով՝ Բաքվի ներկայիս քաղաքականությունը միտված է այն բանին, որ եթե ոչ քաղաքական, ապա ռազմական միջոցներով Հայաստանը սկզբում զիջի անվտանգության գոտին, իսկ հետո արդեն Ադրբեջանը կթելադրի իր պայմանները: Այդ դեպքում Բաքուն կարող է սանձազերծել կայծակնային պատերազմ, եթե պայմանավորվի թուրքական կողմի հետ եւ վստահ լինի, որ հարցը կարող է լուծվել 3-4 օրում:**

**Նոր մարտահրավերների շարքում Կռիլովն առանձնացնում է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության աշխատանքի որակական, արմատական բարելավման անհրաժեշտությունը, քանի որ Մոսկվայում եւ մյուս մայրաքաղաքներում Բաքուն պաշտոնական Երեւանին հաղթում է բառացիորեն բոլոր պարամետրերով: Կռիլովի խոսքերով՝ Ադրբեջանն իրականացնում է խիստ տարատեսակ եւ ակտիվ աշխատանք, որը չի սահմանափակվում լոկ ինչ-ինչ փորձագետների կաշառմամբ:**

**«Ստեղծված են լուրջ տեղեկատվական ցանցեր, որոնք առնվազն բարեկամաբար են տրամադրված ադրբեջանցիների հանդեպ: Ի հայտ են եկել բազմաթիվ ադրբեջանագետ փորձագետներ: Բանը հասնում է այնտեղ, որ կասկածի տակ է առնվում Հայոց ցեղասպանության գրեթե բուն փաստը: Հանրային կարծիքը եւս շատ կարեւոր է: ԽՍՀՄ փլուզումից հետո ադրբեջանցիների եւ հայերի հանդեպ վերաբերմունքը տարատեսակ դրսեւորումներ ուներ, բայց Ռուսաստանը ընդհանուր առմամբ միշտ ավելի սերտ հարաբերություններ է ունեցել հայերի հետ: Իսկ հիմա արդեն միտումը փոխվում է, քանի որ Ադրբեջանը կարողանում է ակտիվորեն աշխատել ռուսաստանյան տեղեկատվական դաշտում եւ ազդել մարդկանց տրամադրությունների վրա, թեկուզ՝ կաշառված փորձագետների եւ լրագրողների միջոցով: Ինչպես ասում են, նպատակն արդարացնում է միջոցները», ընդգծել է ռուս փորձագետը:**

**Կռիլովը համեմատել է ՌԴ-ում Հայաստանի եւ Ադրբեջանի դեսպանությունների աշխատանքները, նշելով Բաքվի դեսպանի՝ երգիչ ու երգահան Փոլադ Բյուլբյուլ-օղլիի «շլացուցիչ աշխատանքը» հասարակության բոլոր խավերի եւ հատկապես ՌԴ իշխանության հետ: Ադրբեջանի դեսպանատունն անցկացնում է բազմաթիվ միջոցառումներ, հրավիրելով թեմատիկային ինչ-որ ձեւով առնչվող բոլոր պաշտոնյաներին, կապեր է հաստատում, նաեւ կազմակերպում է ռուս-ադրբեջանական տնտեսական համաժողովներ, որոնց ընթացքում կնքվում են բազմաթիվ պայմանագրեր: Այս ֆոնի վրա ՌԴ-ում Հայաստանի դեսպանության գործունեությունը, մեղմ ասած, տանուլ է տալիս:**

**«Հայկական կողմը պետք է սկսի գոնե ՌԴ իշխանության եւ հասարակության հետ կատարվող աշխատանքի բարելավումից: Հարկավոր է դրան սեւեռուն ուշադրություն դարձնել, միջոցներ հատկացնել, իսկ դեսպանատանը փակվելու եւ շուրջը ոչինչ չտեսնելու դեպքում ստացվում է հենց այնպիսի արդյունք, որպիսին մենք այսօր ունենք», եզրակացրել է ռուս փորձագետը:**

Պատրաստեց Պ. Ք.

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 5



# Որովհետեւ կարող ես

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*Երբ ես պատրաստվում էի հանդիպել «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի տնօրեն Վարդան Մարաշլյանին, «ԱրԱր» հիմնադրամի տնօրեն Ջորջ Տաբակյանին, **EV Consulting**-ի ներկայացուցիչ Սեւակ Հովհաննիսյանին եւ «ԱրԱր»-ի ներկայացուցիչ Վարուժան Ավետիքյանին, զրուցելու ինչպես վերադարձ Հայաստան թեմայի, այնպես էլ զոհված կամ վիրավորված զինվորների ընտանիքներին այս հիմնադրամների եւ «Սահման» կազմակերպության նվիրատվությունների մասին, որոշեցի այցելել «Վերադարձ Հայաստան»-ի կայքը՝ որոշ տեղեկություններ հավաքելու նպատակով: Իմացա, որ հիմնադրամի հոգաբարձությունների խորհրդի երեք անդամներից երկուսը, կոնկրետ՝ Ավետիք Չալաբյանն ու Արտաշես Շիրինյանը, ապրում են եւ աշխատում Մոսկվայում, ճիշտ է՝ գրված է «պարբերաբար»: Որոշեցի Վ. Մարաշլյանին առաջինը հետեւյալ հարցը տալ. եթե հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի երեք անդամներից երկուսը պարբերաբար աշխատում են Մոսկվայում, ապա էլ ի՞նչ վերադարձ Հայաստան:*

*Բայց հանդիպմանը չտվեցի այդ հարցը. պարոն Մարաշլյանը հայտնեց, որ ինքն, օրինակ, վերադարձել է Մոսկվայից, իսկ Ջորջը (նկատի ունի Ջորջ Տաբակյանին)՝ Դուբայից: Դուք կտայի՞ք այդ հարցը...*

«Վերադարձ Հայաստան» հիմնադրամը գործում է 2012-ից, արդեն 4 տարի: Կարգախոս ունի՝ «Վերադարձիր Հայաստան, որովհետեւ դու կարող ես»: «Կարող ես»-ը շատ կարեւոր բառեր են, «կարող ես»-ը պարտավորություն չէ, ընտրություն է: Ու որպեսզի Հայաստան վերադառնալը ընտրության գոնե առարկա դառնա, հիմնադրամը, տնօրեն Մարաշլյանի խոսքերով, ոչ թե դրսում ապրող մեր հայրենակիցներին համոզում է, որ վերադառնան, այլ նրանց ներկայացնում է Հայաստանը՝ վատն էլ, այնպես, ինչպես կա, իր հնարավորություններով, մարտահրավերներով, խնդիրներով: Նրանք, ովքեր ընտրում են վերադառնալը, հիմնադրամն այստեղ արդեն նրանց օգնում է աշխատանք գտնելու, ինտեգրվելու, կարգավիճակի հստակեցման, երեխաների՝ դպրոց, մանկապարտեզ ընդունման եւ այլ հարցերում, ընդ որում՝ անվճար:

Հիմնադրամի գոյության 4 տարիների ընթացքում քանի՞ հոգի է կարողացել վերադառնալ Հայաստան, հարցնում եմ Մարաշլյանին: Նա էլ պատասխանում է, որ վստահ չէ հիմնադրամի՞ թե այլ գործոններով (վիճակագրություն չկա) վերջին 4 տարում Հայաստան է վերադարձել 2-3 հազար ընտանիք՝ կամավոր սկզբունքով եւ մշտական, եւ եւս 15 հազար սիրիահայ, որոնց այստեղ եւս օգնում է «Վերադարձ Հայաստանը»: Ընդ որում, հիմնադրամին դրսում եւս դիմում են: Դիմածների 40 տոկոսը սիրիահայեր են, 15 տոկոսը՝ ԱՄՆ-ից, 12 տոկոսը՝ Լիբանանից, Ռուսաստանից, 2 տոկոսը՝ Կանադայից, եւ ինչը հատկապես կարեւոր է՝ «Վերադարձ Հայաստան»-ին դիմում են հիմնականում 25-30 տարեկան դրսում ապրող մեր հայրենակիցներ:

Այստեղ մի տեսակ խորհրդանշական բան կա, նկատի չունեմ այնքան Հայաստան վերադարձի մեջ, որքան «Վերադարձ Հայաստան», «ԱրԱր» հիմնադրամների եւ «Սահման» հասարակական կազմակերպության համատեղ գործունեության: Սա մի տեսակ կոդ է. վերադառնում ես Հայաստան, ապա այստեղ ապրում եւ պաշտպանում սահմանը: Երեւի պատահական չէ, որ հենց այս երեք կազմակերպությունները են միասին գործում: Մարաշլյանն ասում է, որ այս համատեղության հիմնական նպատակն է ցույց տալ մեր միասնականությունը, թշնամո՞ւն, կամ դրսո՞ւմ, գուցե, բայց ավելի կարեւոր է՝ ինքներս մեզ, ներսում:

Այս համատեղ գործունեության արդյունքում այսօր ապրիլյան պատերազմի մեր զոհվածների եւ ծանր վիրավորների ընտանիքները օգնություն են ստանում: Միայն ապրիլի 6-ից մինչեւ մայիսի 8-ը Հայաստանում եւ շուրջ 20 այլ երկրներում ապրող մեր ավելի քան 200 հայրենակիցների նվիրատվությամբ հավաքագրվել է շուրջ 155 հազար ամերիկյան դոլար՝ զինվորներին օգնելու նպատակով: Կարեւոր է, որ այստեղ ոչ միայն նպատակն է սուրբ, այլեւ վստահություն կա: Այդ գումարների մի մասն արդեն, ՊՆ-ի հետ համագործակցաբար, ծախսվել է բժշկական սարքավորումներ ձեռք բերելու եւ զոհվածների եւ ծանր վիրավորների ընտանիքներին օգնելու նպատակով: ծանր վիրավոր ունեն: Տղերքը, նրանցից առավել ծանր պայմաններում գտնվողի համար գտել են մեկ կազմակերպություն, որը ստանձնել է այդ ընտանիքի մեկ տարվա կենցաղային ծախսերը մարելու պարտավորությունը, ընդ որում՝ այդ տուն պարբերաբար այցելելու հանձնառությամբ: «Օգնելը միայն փող տալը չէ, այլ ավելի լայն պետք է ընկալել»,-Ջորջն է ասում: Ավելի լայնն, օրինակ, զինվորի հատուկ եւ հատուկ բարձր կարգավիճակն է, որին ուզում են հասնել զրուցակիցներս: «Զինվորը պետք է հասկանա, որ իր ընտանիքը ապահովված է, անգամ իր հնարավոր մահից հետո»,- ասում են տղերքը, ու ես չփիքսեցի, թե անձամբ ո՞վ, բոլորը, բոլորս ենք այդպես ասում:

Բայց զինվորի կարգավիճակի բարձրացումը նրան փողով օգնելը չէ, նրա սոցիալական կարիքների հոգալը չէ միայն, զինվորի կարգավիճակի բարձրացումը նախ զինվորի բարձրացումն է՝ բոլոր առումներով: Այս համատեքստում «ԱրԱր»-ը համագործակցում է ՊՆ-ի հետ, օրինակ՝ կրթության բնագավառում, ռազմական ինստիտուտների հետ՝ ապահովելով արտասահմանյան մասնագետներով, որոշ սարքավորումներով, հատուկ դասընթացներով...



«ԱրԱր»-ի տնօրեն Ջորջ Տաբակյանը ներկայացնում է, որ իրենց հիմնադրամն արդեն 2 տարի է զբաղվում է զինվորների ընտանիքներին օգնելու գործով: «Մենք սովորական հիմնադրամ չենք, որ ուղղակի փող փոխանցենք, մենք գնում ենք, մարդկանց հետ ծանոթանում ենք, զրուցում ենք, վերջում՝ ուղղակի գումար ենք թողնում»,- ասում է Տաբակյանը, եւ ես զգում եմ գումար թողնելու տարբերությունը՝ գումար տալուց, առավել եւս՝ փոխանցելուց. նուրբ գիծ կա: Հետո Տաբակյանը ներկայացնում է որոշ նրբություններ. «Զոհվածի ընտանիքներ մենք անմիջապես չենք այցելում, սպասում ենք, մոտ երկու ամիս: Վիշտն իհարկե անցած չի լինում, բայց մարդկանց հետ խոսել լինում է: Մեր նպատակը նաեւ, գուցե նախ եւ առաջ՝ հոգեբանական օգնություն ցուցաբերելն է: Մեր աշխատանքը գնալն է մարդկանց տները, նրանց ծանոթանալն է, նրանց զգացնելն է, որ հասարակությունն իրենց կողքին է, չեն մոռացվել»:

Քանի՞ զոհվածի ընտանիք եք մինչեւ հիմա այցելել, հարցնում եմ Տաբակյանին: «15 ընտանիք»... Լռում ենք: Ասում են, որ ապրիլյան պատերազմում մենք հաղթել ենք, ասում են նաեւ, որ հաղթել ենք Ոգու՝ դուխի շնորհիվ: Երբ այցելում եք զոհվածների կամ ծանր վիրավորվածների ընտանիքները, տեսնո՞ւմ եք այդ Ոգին, թե՞ այն... Ծանր վիրավորվել է: Ջորջը ժպտում է, հետո, հավանաբար հիշելով նրանց դեմքերը՝ պատասխանում. «Ես չէի ասի, որ այդ Ոգին կոտրվել է: Այո, նրանք երեխա են կորցրել, բայց երկրորդ որդիներին էլ ուղարկում են. սա Հայի Ոգին է, դա՛ է հաղթել»: Բարդ բան է այդ՝ Հայի Ոգին. հաղթե՞լ է այն, գուցե եւ հաղթել է, բայց հնարավո՞ր է հաղթել միայն Ոգով...

Ուրիշ բան է հնարավոր, օրինակ՝ գտնել կազմակերպություններ, որոնք կստանձնեն մեր վիրավորների ընտանիքների մեկ տարվա ապրուստի ծախսերը: Հիմա այդպիսի 7 ընտանիք կա, որտեղ

Երեւի ինչ-որ բան կփոխվի. համենայն դեպս արդեն աշխատողներ կան: Մարաշլյանն ու Տաբակյանը ներողություն են խնդրում եւ հեռանում՝ գործերով: Ես չեմ հասկանում, թե ինչու են ներողություն խնդրում, քանի որ հասկանում եմ, թե ինչ կարեւոր գործ են անում: Վարուժան Ավետիքյանը խոսում է իրենց առջեւ գոյացած մարտահրավերների մասին: Օրինակ՝ հավասարության խնդիրը. «Միշտ կա վտանգ, որ օգնությունը հավասարաչափ չի բաշխվելու: Օրինակ մի ընտանիքի մասին խոսում են, բոլորը նրան են օգնում»: Կամ՝ հասարակության սահմանափակ ներգրավվածության խնդիրը. «Այդ գումարը, որ հավաքվել է, հավաքվել է, որովհետեւ մարդիկ մեզ են ճանաչում եւ վստահում: Մենք նրանց ասում ենք՝ ես գնում եմ եւ գումար եմ տալու, դու գալի՞ս ես եւ կտա՞ս»...,- ասում է Ավետիքյանը: Փաստորեն այնպես չէ, որ զինվորների ընտանիքներին բոլորս ենք օգնում, որովհետեւ բոլորս չէ, որ վստահում ենք նրանց, ովքեր զինվորների ընտանիքներին են օգնում: Սա եւս մարտահրավեր է: Մեկ ուրիշն էլ կա, պահանջատիրությունը. «Երբ մարդիկ փող են տալիս, նաեւ պահանջում են, որ զինվորների անվտանգության մակարդակը բարձրանա»,- նկատում է Վարուժանը: Այսինքն սա առաջացնում է հասարակության պահանջատիրություն, ներքին շարժ, իսկ մարտահավեր է, որովհետեւ փաստ չէ, որ սա թույլատրելի է մեզ:

Անկեղծ ասած ես մի անթույլատրելի բան գիտեմ. այն, որ մենք չենք կարող այլեւս այսպես ապրել, որովհետեւ այնպես, ինչպես մենք ենք ապրում, ապրել չի կարելի, այն պարագայում, երբ ապրել կարելի է: Մենք կարող ենք:

Վարուժան Ավետիքյանը տեղեկացրեց, որ հոդված է նախապատրաստում՝ մեր թերթի համար՝ հենց այս մարտահրավերների մասին եւ ոչ միայն:

Թեման չենք փակում...

# Դավաճան կա քաղաքում

**Տեսանյութը տեւում է 11 րոպե 21 վայրկյան, այն ներկայացնում է ապրիլի մեկի՝ լույս 2-ի գիշերը Թալիշի մատույցներում, առաջին գծում տեղի ունեցած իրադարձությունների սկիզբը: Նկարահանված է ջերմացույցով (տեպլովիզոր), որով մեր որոշ հենակետեր համալրված են: Թե ինչ է ներկայացվում տեսանյութում՝ չեմ ասի, նախ որովհետեւ պետական գաղտնիք է, հետո էլ՝ գրեթե բոլորն արդեն տեսել են, Youtube-ում հանգիստ դրված է, մի քանի տասնյակ հազար դիտում ունի, կարող եք մտնել այնտեղ, որոնել՝ «Ի՞նչ է կատարվել ապրիլի 2-ի գիշերը Թալիշում. Տեսանյութ» բառերի օգնությամբ եւ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության պետական գաղտնիքը ձեր առջեւ կբացվի:**

**Բայց սկզբից սկսենք: «Նոր Հայաստան» շարժումը, որի մեջ են մտնում, օրինակ, Անդրիաս Ղուկասյանի՝ «Ոսկի Հայաստան», ինչպես նաեւ Ժիրայր Սեֆիլյանի՝ «Հիմնադիր խորհրդարան» կազմակերպությունները, անցած երկուշաբթի երթ էր կազմակերպել դեպի Երեւանում ՄԱԿ-ի գրասենյակ: Նպատակն, ինչպես պարզվեց, ՄԱԿ-ին նամակ հանձնելն է: Բայց դա հեչ, նամակին կից տեսանյութ էլ հանձնեցին, որի մասին արդեն խոսեցի: Ավելի ուշ Անդրիաս Ղուկասյանը ներկայացրեց, որ տեսանյութը հանձնել են ՄԱԿ-ի գրասենյակ, որպեսզի ՄԱԿ-ը ստանա ապացույցն այն մասին, որ ապրիլյան սրացումների ժամանակ նախահարձակ կողմը եղել է Ադրբեջանը: Այսինքն նպատակը եղել է սա: Տեսանյութում (դա կասեմ) իսկապես երեւում է, որ ադրբեջանական կողմից մոտավորապես հարյուր հոգով շարժվում են դեպի մեր դիրքերը... Բայց, տղերք, դուք իրո՞ք կարծում եք, որ ՄԱԿ-ն այդ ապացույցի կարիքն ուներ: Այսինքն ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակը ձեր տված տեսանյութը ուղարկել է Նյու Յորք՝ «Անձամբ գլխավոր քարտուղար պարոն Մունին» խորագրով, ու հիմա Մունն իր օգնականների հետ նստած նայո՞ւմ է: Եթե այո, ապա միամիտ եք, բայց չէ՞ որ միամիտ չեք: Կամ մի՞թե կարծում եք, որ ադրբեջանական կողմի նախահարձակ լինելն այլեւս ապացույցների կարիք ունի, ո՞վ չգիտի, ՄԱԿ-ը՞: Նախ գիտի, բայց եթե անգամ ՄԱԿ-ը չգիտի, կամ գիտի, դրանից բան չի փոխվելու:**

**Բայց խնդիրն անգամ սա չէ, նկատի ունեմ այն, որ տղերքը պետական գաղտնիք են բացահայտել ՄԱԿ-ին: Խնդիրն ուրիշ տեղ է: Նախ, տեսանյութը նույն օրը տեղադրվում է համացանցում, իսկ դա, կներեք, բայց ՄԱԿ չէ, համացանցում ավելի շատ մարդ կա, քան ՄԱԿ-ում պետություն: Այսինքն ամեն ոք կարող է գտնել այս տեսանյութը ու նայել, ընդ որում՝ դադարներով, հետ ու առաջ տալով, նորից, երրորդ անգամ, չորրորդ անգամ: Ամեն ոք ասելով նկատի ունեմ նախ եւ առաջ ամեն ադրբեջանցի: Այսինքն, եթե նպատակը եղել է ՄԱԿ-ին ադրբեջանական կողմի նախահարձակ լինելը ապացուցելը, ապա ինչու ՄԱԿ-ին տեսանյութը չի հանձնվել՝ «Հույժ գաղտնի» ծրարի մեջ եւ, ամենակարեւորը, ինչո՞ւ է այդ տեսանյութը հայտնվում համացանցում, ո՞վ է այն տեղադրում համացանցում: Բնականաբար նա, ով ունի, կամ ով գողացել է: Ու եթե հաշվի առնենք, որ տեսանյութը «Նոր Հայաստանից» ոչ ոք չի գողացել, հակառակ պարագայում նրանք այդ մասին կասեին, եզրակացնում ենք, որ այն տեղադրել է ինչ-որ «նոր հայ»:**

**Սա արդեն դավաճանություն է, տղերք, պետական գաղտնիքի բացահայտումը հենց այդպես էլ կոչվում է՝ դավաճանություն: Ընդ որում, երբ պետական գաղտնիքը բացահայտվում է առանց թշնամու կողմից ճնշման, կոչվում է ստո՛ր դավաճանություն:**

**Բայց այս պատմությունն այսքանով չի ավարտվում: ՀՀ ՊՆ-ից տեսանյութի եւ դրա տարածման հետ կապված հորդորում են դիմել ԼՂՀ ՊԲ-ին: Իսկ գիտե՞ք, թե ինչ է ասում ԼՂՀ ՊԲ-ն: Նրանք ասում են՝ դիմեք նրանց, ովքեր նկարահանել են այդ տեսանյութը: Բայց, գրողը տանի, սա պետական գաղտնիք է, այն բացահայտվել է, ընդ որում բացահայտել են ոչ թե նրանք, ովքեր նկարահանել են, որոնք, ի գիտություն՝ ԼՂՀ ՊԲ-ի զինվորներ են, այլ նրանք, ովքեր տարածել են:**

**Ավելի ուշ ՀՀ ՊՆ-ից ներկայանալ չցանկացող մի պաշտոնյա հայտնեց, որ տեսանյութն ամբողջական չէ, իբր հայկական կողմի մարտավարությունն այնպես է եղել, որ պետք է թողնեին, որ ադրբեջանցիները կուտակվեին, հետո ջարդեին: Ասենք թե այդպես է, բայց, տղերք, ո՞վ է տարածել այդ տեսանյութը, երբ մենք գիտենք, թե ո՞վ է այն հանձնել ՄԱԿ-ին: Կարեւորը սա է, իսկ այն, որ մենք ջարդել ենք ադրբեջանցիներին՝ բոլորս գիտենք:**

**Հա, սիրելի զինվորներ, երբ թեկուզ ջերմացույցով նկարահանում եք, թեկուզ հակառակորդին, ապա խուսափեք հայհոյելուց, շատ հնարավոր է ձեր հայհոյանքները մտնեն համացանց: Համենայն դեպս՝ դավաճան կա քաղաքում:**

Հ. ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 6



# Պուտինի մոտ

Օրը կարծես թե որոշվել է, վայրն էլ, կազմն էլ. հունիսի 20-ին Պետերբուրգում տեղի կունենա Սարգսյան-Պուտին-Ալիեւ հանդիպումը, առանց ԵԱՀԿ-ի մասնակցության, քանի որ այդ հանդիպումը բացառապես Ռուսաստանի նախաձեռնությունն է: Թե ի՞նչ են քննարկելու այդ հանդիպմանը, ինչո՞ւ է այս շտապողականությունը, ինչո՞ւ հենց Ռուսաստանում, ինչո՞ւ առանց ԵԱՀԿ-ի եւ այլն, խոսակցության այլ եւ շատ լուրջ թեմա է: Մենք ուրիշ բանի մասին կխոսենք: Օրինակ՝ այդ հանդիպման հոտի: Ի դեպ Սարգսյանի եւ Ալիեւի օծանելիքները պարզել չհաջողվեց, բայց Պուտինը օգտագործում է Dupont օծանելիքը, որն ամերիկյան արտադրանք է, բայց սա իմիջիայլոց:

Մի տեսակ տհաճ հոտ է գալիս այդ հանդիպումից, ընդ որում՝ վտանգավոր տհաճ: Կան խոսակցություններ, որ Պուտինը սեղանին է դնելու Կազանի ճանապարհային քարտեզը եւ երկու գրիչ՝ որպեսզի Սարգսյանն եւ Ալիեւը չնեղանան, միատեսակ գրիչներ: Հետո վերջիններս պետք է վերցնեն գրիչները եւ ստորագրեն, ընդ որում՝ առանց նայելու, քանի որ արդեն մի քանի տարի է բանակցում են այդ փաստաթղթի շուրջ: Այս ամբողջ գործընթացը տեւելու է մի քանի րոպե, որովհետեւ Պուտինը շատ զբաղված օրակարգ ունի: Հետո պետք է նախագահները ձեռք սեղմեն, լրագրողների մոտ դուրս գան, ժպտան, ով որքան եւ ինչպես կարողանում է: Մի երկու բառ խոսեն, մանրամասները Լավրովը կպատմի, կամ Սարգսյանը՝ ինքնաթիռում, եւ վերջ: Նախ շրջակա տարածքները (բացի Լաչինից եւ Քարվաճառից) կհանձնենք, հետո խաղաղապահները կմտնեն, հետո ԼՂ-ի այսօրվա դե ֆակտո կարգավիճակը դե յուրե, բայց ժամանակավոր կճանաչվի, հետո ԼՂ-ի բնակչությունը ինչ-որ պահի իրավունք կստանա ազատ կամարտահայտվելու, որի արդյունքը կընդունեն ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Ադրբեջանում:

Հիշեցնեմ, որ այս ամենը խոսակցություններ են միայն: Բայց փաստն այն է, որ Պետերբուրգի հանդիպումը ո՛չ առանձնապես Սարգսյանին է պետք, ո՛չ Ալիեւին, այդ հանդիպումը պետք է Պուտինին, այսինքն նա ասելիք ունի, հուսանք միայն ասելիք ունի: Ու հենց այստեղ սկսվում է աբսուրդը: Ոչ Ադրբեջանում, ոչ Հայաստանում առասարակ չի քննարկվում, թե ի՞նչ է կատարվելու Պետերբուրգում: Ճիշտ է, ոչ Սարգսյանի, ոչ էլ Ալիեւի աշխատակազմերը դեռ պաշտոնապես չեն հաստատել, որ նախագահները մասնակցելու են Պետերբուրգի եռակողմին, բայց եթե իսկապես չեն մասնակցելու, ինչո՞ւ չեն հերքում ռուսական աղբյուրների հավաստիացումները: Ուրեմն առնվազն մտածում են՝ գնա՞լ, թե՞ չգնալ: Լավն այն է, որ մտածում է ոչ միայն Սարգսյանը, այլեւ Ալիեւը, այսինքն այնպես չէ, որ Պետերբուրգում ադրբեջանահաճո բան է ընդունվելու, հակառակ պարագայում Ալիեւի աշխատակազմն արդեն կհաստատեր, որ Ադրբեջանի նախագահը մասնակցելու է Պետերբուրգի հանդիպմանը:

Առավել եւս, որ մտածում են, հավանաբար խորհրդականների հետ էլ խորհրդակցում են, եւ հասկանալի է, որ այս ամբողջ գործընթացը պետք է գաղտնի տարվի, բայց հասարակական մակարդակում, մամուլում, փորձագիտական, քաղաքագիտական դաշտում Պետերբուրգի հանդիպումը չքննարկելը, մանավանդ երբ դրանից լավ հոտ չի գալիս, մի տեսակ ջայլամություն է:

Մենք պատրա՞ստ ենք հող տալ: Եթե ոչ, ապա պատրա՞ստ ենք պատերազմի, եթե այո, ապա որքա՞ն երկար, օրինակ երեք տարի ձգվող պատերազմի պատրա՞ստ ենք, եթե հաշվի առնենք, որ ամեն ամիս նվազագույնը հարյուր զոհ ենք տալու, մի քանի հազար փախստական ենք ունենալու, անգամ առաջ գնալով, ինչպես ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ ենք ունեցել: Ի դեպ, այդ պատերազմում մենք չենք հաղթել, մենք պարզապես չենք պարտվել, դրանք տարբեր բաներ են:

Թվում էր, թե ապրիլյան սրացումը եւ դրան հաջորդած այս շտապողականությունը ղարաբաղյան բանակցությունների հարցում, պետք է մեզ վերջապես ստիպեր ստեղծելու ազգային-պետական ռազմավարությունը: Բայց, մարդի՛կ, զինվորների ընտանիքներին օգնելը շատ շնորհակալ գործ է, բայց այդ ռազմավարությունը չէ: Այն ունենալու համար պետք է խոսել, ոչ միայն հաճախ, այլեւ իրար հետ, անգամ նրանց հետ, որոնց հետ չենք խոսում, նեղացել ենք: Ապա պետք է լսել, լսելը դիմացինի ասածն անելը չէ, լսելը դիմացինի ասածի շուրջ մտածելն է, եթե հնարավոր է, նկատի ունեմ՝ մտածելը: Օրինակ տարիներ առաջ, Ելցինից հետո, ռուսաստանյան բոլոր թերթերում սկսվեց մի մեծ, իրենք ասում էին ազգային թեմայի քննարկում, որի շրջանակներում խոսում էին այդ երկրի ինչպես ազդեցիկ մարդիկ, այնպես էլ շարքային քաղաքացիները: Թեման հետեւյալն էր. ի՞նչ երկիր ենք ուզում դարձնել Ռուսաստանը. գերտերությո՞ւն, թե՞ խաղաղ եվրոպական երկիր: Առավել համոզիչ էին եւ մեծամասնություն կազմեցին գերտերություն դառնալու կողմնակիցները, եւ այսօր Ռուսաստանի նախագահը, առանց ԵԱՀԿ-ի իր մոտ է կանչում երկու այլ պետությունների նախագահների, որոնք թեեւ չեն ուզում գնալ, բայց գնալու են...

Ի դեպ, հունիսի 20-ին, բայց 1974 թվականի, Թուրքիան ռազմական գործողություններ սկսեց Կիպրոսի դեմ, արդյունքում գրավեց կղզու հյուսիսային մասը եւ այնտեղ ստեղծեց «Կիպրոսի Թուրքական Հանրապետություն»: Սա գուցե ոգեւորի Ալիեւին, բայց կարծում եմ Սարգսյանը կարող է ներկաներին հարցնել, թե ինչո՞ւ Թուրքիային կարելի է Կիպրոսում միջազգային օրենք խախտել, իսկ Հայաստանին չի կարելի Արցախում միջազգային օրենք պահպանել, ինչպես Ռուսաստանը՝ Ղրիմում: Պուտինը միանգամից կժպտա, Ալիեւը՝ չեմ կարծում:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# ՀՕ, ԸՕ... եւ Սանկտ Պետերբուրգ

⇨1

### ԸՕ-ՀՕ զուգահեռ

Ընտրական օրենսգիրքը, որ մեծ քննադատության էր արժանացել ընդդիմախոսների կողմից, վերջերս է ընդունվել: Սակայն այն զարմանալիորեն ա՛յս երկու օրը իշխանության նախաձեռնությամբ վերադարձավ քննարկումների սեղան, եւ ոչ թե սեպտեմբերին, ինչպես որ նախապես խոստացվել էր: Եւ ըստ քննարկումներին մասնակցող ընդդիմադիրների՝ որոշ զիջումներ կարծես վերահսկողության մեխանիզմներում այս պահին արվում է ընդդիմադիրներին: Վերլուծաբանները գլուխ են կոտրում՝ արդյոք արտաքին հարթակում Հայաստանում այնպիսի որոշումնե՞ր են սպասվում, որ իշխանությունը որոշել է քաղաքական ուժերի ավելի լայն շրջանակի նոր խորհրդարան տանելու խոստումով (ԸՕ -ի շուրջ կոնսենսուս անվամբ) սիրաշահել ընդդիմադիրներին՝ միգուցե արտաքին ինչ -որ անբարենպաստ որոշումներից առաջ ընդդիմությանը լռեցնելով:

Նույն ոճը կարծես թե կրկնվում է նոր Հարկային օրենսգրքի շուրջը: Նախ՝ Հայաստանի Ազգային ժողովն այս շաբաթ առաջին ընթերցմամբ ընդունեց «Հարկային օրենսգիրքը», չնայած ընդդիմադիրների՝ վաղուց չդրսեւորված միացյալ դիմակայությանը, չնայած գործարար հատվածի, այդ թվում՝ ՀՀԿ-ական շրջանակներից, դիմադրությանը: Հարկային օրենսգիրքը փաստորեն տնտեսական կյանքի սահմանադրությունն է, այն շատ ծավալուն է, սկսել է մշակվել դեռ երկու տարի առաջվանից, պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ **Վախթանգ Միրումյանի** վկայությամբ՝ մասնագետների բավական լայն շրջանակով: Պատգամավորների առաջին հարցերից, որ ուղղված էին նախագիծը ներկայացնող Վ. Միրումյանին, պարզ դարձավ, որ նրանց զգալի մասը լավ ծանոթ չէ ծավալուն փաստաթղթին: Վ. Միրումյանի ներկայացմամբ՝ նոր հարկային սահմանադրությունը մի շարք հարկային թեթեւ ռեժիմներ է սահմանում՝ շունչ քաշելու հնարավորություն տալով ներքին արտադրողին, երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու նպատակ դնելով եւ խրախուսելով տնտեսական գործունեությունը: Մինչդեռ պատգամավորներից շատերը կասկած հայտնեցին, թե նոր Հարկային օրենսգրքով տեղի կունենա հակառակը, բացի այդ՝ անհասկանալի էր այն հապշտապությունը, որով 2018 թվականից շրջանառության մեջ մտնելիք ՀՕ-ն արտահերթ նիստով ամեն գնով ընդունելու գործելակերպն էր դրսեւորվում, առանց շահագրգիռ շրջանակների հետ նախնական լայն քննարկման:

Ասենք, որ մի նիստում տեսանք նոր ՀՕ-ում, հատկապես դրա չորս բաժիններից հարկային վարչարարությանը վերաբերող հատվածում՝ շատ դրույթներ կարծես այն ենթատեքստն ունեն, որ հարկ հավաքող պետությունը մահակը ձեռքին պատրաստ է հնազանդեցնելու մի անհնազանդ շեֆի, համարյա հկառակորդի՝ մեր գործարարներին, եւ դա իր ելույթում շատ պատկերավոր նկատել էր **Գուրգեն Արսենյանը**՝ տնտեսավարող հատվածի դեմ ոտնձգություն, անգամ դիվերսիա անվանելով նոր ՀՕ-ն: Նույնիսկ ՀՀԿ խմբակցության պատգամավորներն էին մասնանշում գործարար մթնոլորտին չնպաստող դրույթները: Այսինքն՝ եթե նորմալ օրենդրություն լինի, հավասար մրցակցային պայմաններ գործեն, գործարարը միշտ պետության դաշնակիցն է, այլ ոչ թե հակառակորդը, ինչպիսի տպավորություն ՀՕ-ից ես ստանում: Իհարկե, յոթ հարյուր էջանոց օրենսգիրքը, որ տասնյակ մասնագետների կողմից երկու տարում է ստեղծվել, դժվար է մի արտահերթ նիստի ընթացքում ուսումնասիրել՝ պատկերացնելու համար նրանում թաքցված բոլոր ծուղակները, կարծեմ՝ միայն **Հրանտ Բագրատյանն** ասաց, որ երկու անգամ կարդացել է ՀՕ-ն: Սակայն այն գլխավոր դրույթները, որոնց մասին Վ.Միրումյանը հարկ համարեց տեղյակ պահել խորհրդարանականներին, գործարար հատվածի ուժգին հակազդեցությանն արժանացան: Պատգամավորներից շատերն անընդունելի համարեցին մի շարք դրույթներ, որոնք ավելի ճնշող կդարձնեն միջին ու մանր բիզնեսի շնչած գործարար օդը, կբերեն թանկացումների ու նոր լարվածության, անգամ մեծամասնության ներկայացուցիչների մեջ կային պատգամավորներ, որոնք ընդունելով նոր ՀՕ-ի տրամաբանությունը, այդ թվում՝ նույնիսկ օրինագիծը պաշտպանող **Հերմինե Նաղդալյանը** կամ սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ **Հակոբ Հակոբյանը**, մի շարք դրույթներ վերափոխելու առաջարկ էին անում: Իսկ թե ինչու էր կառավարությունն այդպես անպատեհ, սոցիալական լարվածության եւ իր համար ոչ բարենպաստ այս ժամանակի մեջ բերել այնպիսի մայր օրենք, որն ակնհայտորեն մոտակա ժամանակի մեջ կառավարության դեմ բողոքի նոր ալիքի պատճառ է դառնալու (ըստ **Նիկոլ Փաշինյանի**՝ դա միջազգային կառույցների պարտադրանքն է), մնաց անհասկանալի: Ինքնասպանի սինդրոմի մասին կմտածեինք, եթե օրինագծի հեղինակ ադեկվատ մասնագետներին չճանաչեինք:

Այս փաթեթով եկամտահարկն ավելանում է, փոխանակ նվազի, սահմանվում է շրջանառության հարկի այժմ գործող շեմից զգալիորեն ցածր շեմ՝ 115 մլն դրամից իջնում է 40 մլն դրամի, որն անկասկած ճնշելու է փոքր ու միջին գործարարին: Միջին եկամուտ ունեցող աշխատողների եկամտահարկի տոկոսադրույքն է բարձրանում:

Ըստ պատգամավորների՝ այս փաթեթը տաղանաքար է տնտեսության վրա՝ մինչեւ վերջ քամելով հարկերը (**Նաիրա Զոհրաբյան**): Պատգամավոր կար՝ Հրանտ Բագրատյանը, որ հաշվարկել էր, թե նոր օրենսգրքով 90 մլրդ դրամով հարկային բեռն ավելանում է: Պատգամավորները խոսում էին ՀՕ-ի ընդունման արդյունքում՝ ծխախոտի, օղու եւ այլ ապրանքների թանկացման անթույլատրելիությունից, գործարարների՝ բիզնեսը երկրից հանելուց, արտագաղթի նոր ալիքից: Թեեւ ընդդիմությունը դեմ քվեարկեց, անգամ ՀՀԿ-ի հետ համագործակցող ՀՅԴ-ն խնդիրներ տեսավ ու ձեռնպահ մնաց քվեարկելուց, սակայն ՀՀԿ պատգամավորների մեջ գտնվեց 68 մարդ, որոնց քվեարկությամբ վիճահարույց ՀՕ-ն առաջին ընթերցմամբ ճանապարհ ընկավ՝ հետագա փոփոխությունները թողնելով գործարարներ-իշխանություն տարբեր ձեւաչափի բանակցություններին եւ միգուցե՝ բողոքի ալիքներին

Իհարկե, քաղաքական ուժերը հենց նրա համար են, որ իրենց նպատակների համար օգտագործեն ամեն առիթ, ու այդպիսի առիթն այս անգամ ՀՕ-ն էր, որի վերաբերյալ օրինակ «Լուսավոր Հայաստանը» ներկայացնող **Էդմոն Մարուքյանը** խոստացավ մարդկանց հանել փողոց եւ տապալել Հարկային օրենսգիրքը՝ տապալելով նաեւ նրա կողմնակիցներին, քանի որ, նրա կարծիքով, վերջին տարիների օրենսդրություններով ամեն ինչ արվել է, որ Հայաստանում ապրելը դառնա ծայրահեղ անհնարին, սուպերհայրենասեր պիտի լինես, որ ապրես Հայաստանում ու ինչ-որ բան փոխես, ըստ նրա, իսկ կառավարությունն էլ ընկել է այդ սուպերհայրենասերների հետեւից:

Այսպիսով, ստվերի եւ օլիգարխների դեմ պայքարել, իրական ստվերատերերին եւ հարկերը շրջանցողներին հարկման դաշտ բերել չկարողանալով՝ հայրենի կառավարությունն ընտրել է միջին եւ փոքր բիզնեսը բարձր հարկերով խեղդելու գաղափարը, ապահովագրելով մենաշնորհատերերի գերշահույթ ստանալու արտոնյալ վիճակը, ինչը ոչ միայն թանկացման կտանի, այլեւ կստիպի գործարարներին բոլոր ձեւերով թաքցնել եկամուտը, աշխատատեղերը թերհայտարարագրել, ավելի մեծացնելով ստվերը: Իսկ թե քաղաքական հեռանկարի առումով ի՞նչ կարող է արժենալ կառավարության ու ըստ այդմ՝ իշխող ուժի համար մի հարկային օրենսգիրք, որն իր դեմ է տրամադրում միջին ու մանր բիզնեսին, հանրությանը, քանի որ հետեւելու են թանկացումները միգուցե հենց հաջորդ ՝ ընտրական տարուց, դրանք սպասումային թանկացումներ կլինեն (ՀՕ-ն կգործի 2018 թվականից), ու շատ անհարմար բան կստացվի, սա արդեն կերեւա ընդամենը մի քանի ամիս հետո, երբ բողոքների ու լարման ֆոնին իշխող մեծամասնությունն ընտրությունների գնա:

### Արտաքին հարթակի նոր վտանգը

Պուտինի, Սարգսյանի եւ Ալիեւի հանդիպում է սպասվում այս քանի օրը Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցող տնտեսական ֆորումի համատեքստում՝ ղարաբաղյան հարցի ենթադրվող քննարկմամբ: Ի՞նչ է նախապատրաստել մեզ համար Ռուսաստանը, որն այդ հանդիպման նախաձեռնողն է: Շփման գծում կատարվող միջադեպերի հետաքննության մեխանիզմների մասին Վիեննայում խոսելուց հետո նկատելի չէ գործնականում դրանց ներդրման առարկայական ցանկություն ո՛չ Ադրբեջանի, ո՛չ միջազգային կառույցների կողմից, ԵԱՀԿ ներկայացուցիչն արդեն սահմանազատվել է Սանկտ Պետերբուրգի հանդիպումից՝ պարզաբանելով, որ այդ հանդիպման կազմակերպմանը ներգրավված չէ, դա Ռուսաստանի նախաձեռնությունն է:

Ի՞նչ են սպասում կողմերն այդ հանդիպումից. Մոսկվան Ադրբեջանից երեւի հավատարմության խոստումներ՝ ԵՏՄ անդամակցության առումով, Հայաստանը՝ հայկական շահերի չանտեսում, Ադրբեջանը՝ մեր շահերի հաշվին սեփական սակարկության գնի բարձրացում:

Իսկ թե ի՞նչ կապ կա թշնամում մնացած հայկական դիրքերի եւ Սանկտ Պետերբուրգի հանդիպման ու միգուցե առաջիկա այլ հանդիպումների միջեւ, արդյոք հայկական կողմին տարածքային զիջումնե՞ր են պարտադրվելու՝ այլ տարածաշրջանային շահերի գերադասման դիմաց, որը չի գեներացնելու հայկական շահը, սա մոտակա հանդիպման արդյունքով նույնիսկ հնարավոր կլինի դիտարկել: Հայաստանում նույնիսկ երեխան գիտի՝ այս մի խնդրում հայ հանրությունը չի կարող դառը հաբ կուլ տալ, ինչես որ կուլ է տալիս սոցիալական վատ վիճակի, անարդարության, բեւեռացման պատճառով:

Ամեն դեպքում՝ շփման գծում հատկապես մերոնք պիտի այս օրերին պատրաստ լինեն ամեն տեսակ սադրանքի: Եւ ապա՝ Ռուսաստանն ընդամենը համանախագահներից մեկն է, Մինսկի խումբը դեռ ոչ ոք չի լուծարել:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

*Չէր հասցրել թանաքը չորանալ պաշտոնական փաստաթղթի տակ, որն ազդարարում էր Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, երբ անմիջապես մեկը մյուսի հետեւից Թուրքիայի նախագահը եւ վարչապետը արտաբերեցին միեւնույն նախադասությունը. «Չի կարելի ցեղասպանություն համարել այն, ինչ կատարվել է պատերազմական 1915 թվականին»: Եվ, իհարկե, ինչպես բազմիցս է եղել, բացվեց նույն կաղապարված մեկնաբանությունների շարանը, իբր՝ 1915 թվականը Առաջին համաշխարհային պատերազմի ամենաթեժ պահն էր, երբ ամեն ինչ պատահում է, «պատերազմում, ինչպես պատերազմում»: Ճիշտ է, Բունդեսթագի հիմա արդեն պատմական նիստի նախօրեին Թուրքիայի նախագահը, դիմելով Անգելա Մերկելին, առաջարկեց չմոռանալ գլխավորի մասին. Թուրքիան եւ Գերմանիան ՆԱՏՕ-ի անդամներ են (ասես՝ դա ինչ-որ ինդուլգենցիա է, որն ազատում է հանցագործության համար պատասխանատվությունից եւ պետական գործունեության մեջ միջազգային իրավունքով առաջնորդվելու պարտականությունից, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Համաձայնագրով՝ ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ այն իրագործելու համար պատժվելու մասին):*

# Պարոնայք երդվյալ ատենակալներ, 1915 թվականը երեւուն տարիներից մեկն է




**ԹՈՒՐՔԻԱՆ ՊՆԴՈՒՄ Է ՆՈՒՅՆ ԲԱՆԸ. 1915 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԷՐ ԸՆԹԱՆՈՒՄ:** Ասես չի եղել հայերի, հույների, բուլղարների, սերբերի եւ այլ քրիստոնյաների զանգվածային բազմամիլիոնանոց բնաջնջումը XIX դարի վերջին եւ XX դարի սկզբին՝ արյունարբու Աբդուլ Համիդի օրոք, չի եղել նախապատերազմյան հրեշավոր կոտորածը 1909 թվականին Ադանայում երիտթուրքերի օրոք, երբ այդ քաղաքում կոտորեցին 40 հազար հայերի, չի եղել հայերի հետպատերազմյան ցեղասպանությունը Բաքվում (1918թ.) եւ Շուշիում (1920թ.) Աթաթուրքի օրոք: Ասես չի եղել հայերի ցեղասպանություն Սումգայիթում, Բաքվում, եւ գազանային սպանություն Բուդապեշտում մեր ժամանակակիցների ներկայիս սերնդի աչքի առջեւ:

Իհարկե, այստեղ կա նաեւ մեղքի մեր բաժինը: Այդ մասին ես շատ եմ գրել, բազմիցս բաց նամակով դիմելով մեր խորհրդարանին առաջարկով՝ ուղղում մտցնել Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին գործող օրենքում: Գերմանական Բունդեսթագի որոշումը պարտավորեցնում է դարձյալ վերադառնալ թեմային: Կարծում եմ, այս անգամ Ազգային ժողով դիմելն ապարդյուն չի անցնի:

Ընդհանրացնեմ թուրքական դիվանագիտական զինանոցում կիրառվող տարբեր մեկնաբանություններն ու փաստարկները. «Հայերը դնում են 1915 թվականի հայերի ցեղասպանությունը ճանաչելու հարցը: Ո՞ւմ հայտնի չէ, որ 1915 թվականը Առաջին համաշխարհային պատերազմի թեժ տարին էր: Ի՞նչ ցեղասպանության մասին է խոսքը, եթե Թուրքիան ստիպված էր պատերազմական ժամանակի օրենքներով վերաբնակեցնել հայկական տարրը ռազմական գործողությունների թատերաբեմից հնարավորինս հեռու: Այո, այնտեղ եղել են դաժանություններ: Բայց չէ՞ որ պատերազմում՝ ինչպես պատերազմում»: Շատ դիվանագետներ են կուլ տվել թուրքական քարոզչության այդ խայծը: Բայց ոչ բոլորը:

**Լեդի Քոքսը** 1994 թվականի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդ այցելելուց հետո ասաց. «Հազարավոր ու հազարավոր ողբերգական օրերից մեկն ընտրելու գաղափարն ինքնին սրտաշարժ է եւ հոգեհույզ: Սակայն որքանո՞վ է ճիշտ շեշտը դնել միայն 1915 թվականի վրա, որն անտեղյակների կողմից ընկալվում է որպես միակ տարին, երբ իրագործվել է հայերի ցեղասպանությունը»:

**ՀԱՎԱՆԱԲԱՐ, ՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԷԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼ** ցեղասպանության անվերջանալի օրացույցից նաեւ 1877 թվականը, երբ, ինչպես գրել է լոնդոնյան «Թայմսը», «հայերի վիճակը երկրում, որի վրայով անցավ Իսմայիլ-փաշայի բանակը, ծայրաստիճան աղետալի է: Ալաշկերտի հարթավայրի 122 գյուղերից հիմնահատակ ավերված են 113-ը: Այդ վայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք եւ երեխաները սպանվել են ամենադաժան կերպով»: Կարելի է հիշատակել և՛ 1893, և՛ 1894, և՛ 1895, և՛ 1896 թվականները, երբ անգլիացի հրապարակախոս **Էմ.Դիլլոնը** վկայել է. «Հայկական գավառներում հաստատվել է կառավարման գազանային համակարգ, որի համեմատությամբ Ամերիկայի հարավային նահանգների ստրկատիրական համակարգի դաժանությունները թվում են աննշանակալից չարաճճիություններ»: Հրեշավոր է այդ տարիների զոհերի վիճակագրությունը՝ մոտ կես միլիոն մարդ:

Կարելի է նշել նաեւ 1912 թվականը, երբ, ինչպես գրեց բոլշեւիկյան «Պրավդան»,. «նրանց (երիտթուրքերի-Զ.Բ.) նպատակը՝ թուրքացնել Օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին եւ մյուսներին, է՛լ ավելի կոպիտ ու համառ բնույթ ստացավ, քան Աբդուլ Համիդի օրոք»: Կարելի է առանձնացնել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներից որեւէ մեկը, երբ Թուրքիան անպատիժ կերպով ընդարձակում էր հայերի ցեղասպանության աշխարհագրությունը, բայց պատմական ճշմարտությունը պարտավորեցնում է հայերի ազգային ողբերգությունը դիտարկել ոչ թե ժամանակի առանձին հատվածի շրջանակներում, այլ միասին վերցրած այն ողջ ժամանակաշրջանի, երբ պետական մակարդակով ծրագրվեց, կազմակերպվեց եւ իրագործվեց մի ողջ ժողովրդի ցեղասպանություն: Այդ կապակցությամբ պատմական փաստաթղթերի եզակի ժողովածուի նախաբանում հայ ականավոր պատմաբան **Մկրտիչ Ներսիսյանը** գրում է. «Երբ խոսք է գնում Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին, պետք է նկատի ունենալ ոչ միայն 1914-1918 թվականների համընդհանուր կոտորածը, այլեւ XIX դարավերջի-XX դարասկզբի զանգվածային ջարդերն ու կտտանքները»: Բայց չէ՞ որ այստեղ պետք է ավելացնել Գանձակն ու Գյուլիստանի երկրամասը, Գարդմանքի եւ Նախիջեւանի բոլոր շրջանները:

1915 թվականի ապրիլի 24-ը եւ ողջ 15 թվականը, իրենց պատմական ողջ կոնկրետությամբ եւ ողբերգական իրողությամբ հանդերձ, հանդիսանում են ընդհանրացված եւ, հետեւաբար, պայմանական տարեթվեր: Իհարկե, 1915 թվականի ապրիլի 24-ը համարվում է ամենահրեշավոր օրերից մեկը ողջ մարդկության պատմության մեջ. ոչ թե ինչ-որ սովորական քրեականներ, այլ ինքը՝ թուրքական կառավարությունը, համաձայն հայերի զանգվածային ոչնչացման հրահանգի, կազմել էր գրականության, արվեստի, գիտության, իրավունքի, կրոնի, բժշկության ոլորտներից հայ երեւելի 1000 գործիչների հանգամանալի ցուցակը, որով սկսեց վերացնել նրանց եւ ոչնչացրեց բոլորին ամենադաժան միջոցներով: Նրանցից յուրաքանչյուրը հայ մշակույթի պարծանք էր, այդ իսկ պատճառով մեր ազգն առանձնացնում է այդ օրը: Եթե 1915-ը երեւուն հրեշավոր տարիներից մեկն է, ապա ապրիլի 24-ը՝ առանձնահատուկ, բայց 11 հազար հրեշավոր օրերից մեկը: Եվ, քննարկելով սուլթանական ու երիտթուրքական Թուրքիայում հայերի ցեղասպանության հարցը, խոսել միայն մեկ տարվա մեկ օրվա մասին, նշանակում է՝ ակնհայտորեն հնարավորություն տալ թուրքերին զբաղվելու քաղաքական սպեկուլյացիայով, հօգուտ մարդկության դեմ կատարված հանցագործության կազմակերպիչների. հանցագործություն, որի պարագայում վաղեմության ժամկետի սկզբունքը չի գործում:

**ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐՆ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ ԷԻՆ ԻՐԵՆՑ ԳԼԽԱՎՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ ԴՈԿՏՈՐ ՆԱԶԻՄ-ԲԵՅԻ ՑՈՒՑՈՒՄՈՎ**. «Հիմա պատերազմ է ընթանում: Նման հարմար առիթ այլեւս չի լինելու: Մեծ տերությունների միջամտությունը եւ համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները աննկատ կմնան, իսկ եթե նրանք նույնիսկ իմանան, ապա կկանգնեն կատարված փաստի առջեւ: Եվ հենց դրանով էլ հարցը կսպառվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է կրեն հայերի տոտալ ոչնչացման բնույթ. անհրաժեշտ է ոչնչացնել բոլորին՝ մինչեւ վերջինը... Ես ուզում եմ, որպեսզի այս հողի վրա թուրքը եւ միայն թուրքն ապրի եւ անբաժան իշխի: Թող անհետանան բոլոր ոչ թուրքական տարրերը, ինչ ազգի ու կրոնի էլ նրանք պատկանեն»: Թուրքիայում ԱՄՆ դեսպան **Հենրի Մորգենթաուն** գրել է այդ օրերին. «Հայերի տեղահանման իրական նպատակը նրանց թալանելն ու ոչնչացնելն էր»: Վերջին բառը վերցված է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի հատուկ հրամանից. «Հայերի արտաքսումը հայերի ոչնչացումն է»:

Պետք է խոստովանել, որ մենք, եւ ոչ թե մեկ ուրիշը, երկար տասնամյակներ շարունակ շեշտը դնում ենք բացառապես միայն 1915 թվականի վրա, հիանալի գիտենալով, որ Թուրքիան անպայման կշահարկի այսպես կոչված պատերազմական ժամանակի գործոնը: Մենք չէինք կասկածում, որ Գերմանիան վաղ թե ուշ ճանաչելու է Հայոց ցեղասպանությունը: Մեղա գալով հրեական ժողովրդի առջեւ, նա չդիմեց ոչ մի տեսակի արդարացումների կամ շահարկումների: Գերմանիան, իհարկե, Թուրքիա չէ: Եվ չէ՞ որ հրեաները նույնպես իրենց հոլոքոստը (հունարեն՝ «հիմն ի վեր հրկիզված») թվագրել են ոչ թե մեկ կոնկրետ տարով, այլ որոշակի ժամանակաշրջանով. «Հրեաների ցեղասպանություն (հոլոքոստ). **1933-1945 թվականներին** գերմանական ֆաշիստների եւ նրանց հանցակիցների կողմից հրեաների մեծ մասի (ավելի քան 60%, կամ 6 մլն 100 հազար մարդ) ոչնչացում»:

Մինչդեռ մենք, հրատարակումներում եւ բանավոր ելույթներում, բոլոր պաշտոնական ու ոչ պաշտոնական փաստաթղթերում համարյա միշտ նշում ենք դոգմայի վերածված բանաձեւը՝ «1915 թվականի Հայոց ցեղասպանություն»: Նույնիսկ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 22-ին ընդունած օրենքը կոչվում է «Օրենք **1915 թվականին Օսմանյան կայսրությունում** հայերի ցեղասպանության դատապարտման մասին»:

ՀՀ Ազգային ժողովը պարզապես պարտավոր է ուղղել այդ հիրավի վտանգավոր անճշտությունը գործող օրենքում, նոր խմբագրմամբ այն անվանելով «**Հայաստանի Հանրապետության օրենք Օսմանյան կայսրությունում, Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանում 1893-1923 թվականներին Հայոց ցեղասպանության դատապարտման մասին**»:

Խոսքը, վերջիվերջո, այն մասին չէ, որպեսզի հնարավորինս շատ երկրներ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը: Խոսքն առաջին հերթին մեր սրբազան պարտքի մասին է մեր անխտիր բոլոր հայրենակիցների առջեւ, որոնք ցեղասպանության զոհեր դարձան ոչ միայն իրոք սարսափելի, արյունոտ 1915 թվականին: Օրենքում առաջարկվող փոփոխությունն արդյունքում կզրկի թուրքերին «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած տխուր պատահականությունների» մասին իրենց սիրելի ուսմունքից:

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 8



**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**

Քաղաքական վերլուծաբան, քաղաքական գիտությունների թեկնածու

# Ղազախստանը ժամանակակից տեղեկատվական պատերազմներում

***Ղազախստանը, որը փորձում է կողմ քաշվել համաշխարհային տեղեկատվական պատերազմներից, ներքաշված է գլոբալ առճակատման մեջ:***

Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Ղազախստանն իբրեւ Կենտրոնական Ասիայի առանցքային հանրապետություն ընտրված է որպես նոր հարթակ տեղեկատվական պատերազմի հերթական ռաունդի համար: Եվ եթե առաջ պաշտոնական Աստանան կողմ էր քաշվում դրանում մասնակցությունից, ապա այսօր կանգնած է ընտրության առջեւ, թե ինչպե՞ս կպահեն իրենց իշխանություններն այսուհետեւ:

Այստեղ արժե հասկանալ, որ աշխարհում այսօր հայտնվել է երկու Ղազախստան՝ մեկը իրական, որը շարունակում է խաղաղ ապրել եւ աշխատել: Երկրորդը՝ վիրտուալ, որը ներկայացնում է ծռմռված եւ հաճախ գրոտեսկային պատկեր: Առաջինի հետ ես էլ եմ ծանոթ, քանի որ գործերով լինում եմ Աստանայում, իսկ երկրորդի հետ զարմանքով սկսեցի ծանոթանալ վերջերս: Ինչո՞ւ զարմանքով: Այն պատճառով, որ առաջին անգամ տեսա, թե ինչպես են տեղի ունենում անկախ պետության տեղեկատվական ռմբակոծումները: Թե ինչպես աշխարհի տարածքից «կրակահերթերով» մշակում են ինտերնետային բոտերը եւ տրոլի բլոգերները, որոնք ինտերնետ տարածքը կեղտոտում են տարբեր տեսակի զեղծումներով եւ կեղծիքներով:

Այսօր, նույնիսկ չլինելով Ղազախստանի գծով մասնագետ, կարելի է տեսնել, թե ինչպես է աճել բացասական տեղեկատվության թրաֆիքը այդ երկրի մասին: Բնական է, որ հարց է առաջանում, ընդհանրապես ի՞նչ է կատարվում: Ինչպես պարզվեց, հարցերի հարց դարձավ հողի հարցը: Հենց այդ թեման է գերակշռում սոցիալական ցանցերում, հանրապետության պետական եւ ոչ պետական ԶԼՄ-ներում: Խոսքը Ղազախստանի Հանրապետության Հողային օրենսգրքի մեջ ընդունված ուղղումների մասին է, որոնք կարծես օտարերկրացիներին թույլ են տալիս ղազախստանյան հողը ձեռք բերել իբրեւ մասնավոր սեփականություն: Բնական է, որ դա առաջացրել է հասարակության դժգոհությունը: Սակայն իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ հողը չէ գլխավորը: Առավել եւս, որ սոցիալական դժգոհության համար առիթը, մեղմ ասած, հայտնվեց դատարկ տեղում:

Եթե նայենք ավելի խորը, ապա աղմուկը բարձրացավ հողային օրենսգրքի լրացումների եւ փոփոխությունների շուրջ, որոնք ծրագրված էին գործի դնել 2016թ. հուլիսի 1-ից: Դրանք, մասնավորապես, ենթադրում են հողակտորների ձեռքբերում որպես մասնավոր սեփականություն՝ աճուրդների միջոցով: Սակայն այդ նորմը վերաբերում է լոկ ղազախստանցիներին: Այդ փաստի մասին անդորրը խախտողները խորամանկորեն լռում են: Այսինքն՝ հողի որեւէ վաճառքի մասին խոսակցություն չի էլ եղել: Օտարերկրյա ներդնողները Ղազախստանում իրավունք ունեն վարձակալել հողը եւ միայն այդքանը: Օրենսդրության լրամշակման համաձայն, որը արվել է 2014թ., այդ ժամկետը երկարաձգվել է 10-ից 25 տարի: Բայց կարեւոր է ուշադրություն դարձնել մի էական մանրուքի: Այդ օրենսդրական նորմը առնվազն մեկ եւ կես տարեկան է ու ավելի վաղ այն երբեք դժգոհություն չի առաջացրել: Երկրորդ, վարձակալման ժամկետի ավելացումը համապատասխանում է Ղազախստանի Հանրապետության ռազմավարական խնդիրներին գյուղատնտեսության մեջ ներդրողներ ներգրավելու ուղղությամբ: Չէ՞ որ սա շատ մեծ կապիտալներ պահանջող ոլորտ է, եւ եթե պետք է ստացվի արդյունք, տասը տարին ուղղակի բավարար չէ:



Բայց ինչո՞ւ հենց այսօր է շեշտակի մեծանում բացասական հռետորաբանությունը: Ինչո՞ւ է «վարձակալություն» բառը հետեւողականորեն փոխարինվում «վաճառք» բառով: Ինչո՞ւ է ինչ-որ մեկը հետեւողականորեն ցանկանում համոզել ժողովրդին, որ օտարերկրյա վարձակալողը անպայմանորեն «օկուպացնելու է» իրեն հասկացված հողակտորը: Ամեն ինչ շատ պարզ է դառնում, որովհետեւ չլիներ հողի թեման, անպայմանորեն կառաջանար ուրիշը: Չէ՞ որ անդրկուլիսյան քաղտեխնոլոգները, որոնք թողարկում են Ղազախստանում ապակայունացման սցենարը, գործում են մի սկզբունքով՝ ինչքան ահավոր է սուտը, այնքան հեշտ են մարդիկ դրան հավատում: Այդ նույն շարքից են բացահայտ ֆեյքերը, որոնք վարկաբեկում են Ղազախստանի իրավապահ մարմինների հեղինակությունը:

2016թ. մայիսի 1-ին, իսկ դա Միասնության տոնն է, սոցիալական ցանցերը եւ բջջային հավելվածները պայթեցրեցին արյունաքամ եղած մարդու լուսանկարը, որը կարծես թե տուժել էր Կըզըլօրդա քաղաքում ոստիկանի ձեռքից: Սակայն պարզվեց, որ այդ լուսանկարը վերցված է «AJANSHABER-LER» կայքից եւ վերաբերում է այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել 2015թ., ըստ երեւույթին, Չինաստանում: Սակյան դա բազմաթիվ փաստերից մեկն է, որը վկայում է, որ ինչ-որ ուժեր Ղազախստանին տեղեկատվական պատերազմ են հայտարարել:

Ինչպես հողային հակամարտությունը բառացիորեն քամված էր մատից, այնպես էլ այլ արդիական թեմաներ գիտակցաբար կեղծվում են՝ մարդկանց գիտակցության մեջ դնելով ապակայունացնող հրահանգներ: Հաճախ դրան նպաստում է ձգձգվող հումքային ճգնաժամը, նավթի եւ մետաղների գների անկումը: Չէ՞ որ Ղազախստանը, որը, ճիշտ է, իրականացնում է մեծ ինդուստրիալիզացիա, սակայն մնում է առայժմ գլխավորապես հումքային երկիր:

Իշխանությունների ինստիտուցիոնալ նախաձեռնությունները, որոնք Ղազախստանում կոչվում են «Ազգի պլան-100 քայլ», հենց ուղղված են վերացնելու ածխաջրածնային կախվածությունը: Տնտեսության մեջ դա դրսեւորվում է համաշխարհային շուկայում ազատ տիրույթներ փնտրելու մեջ, որտեղ Ղազախստանը կարող էր դառնալ իսկապես մրցունակ: Այդպիսի տիրույթներից մեկը հենց գյուղատնտեսությունն է: Հենց այս ոլորտում գործարկվում է 22 խոշորագույն ծրագիր 1 միլիարդ դոլար ընդհանուր ծավալով: Բայց սա էլ միայն սկիզբն է: Ղազախստանի նախագահի վերջին արտասահմանյան այցերը ցույց են տվել, որ այդ ոլորտը առաջացնում է Իրանի եւ Թուրքիայի, էլի մի քանի երկրների մեծ հետաքրքրությունը: Ամբողջությամբ վերցրած, այս ամենը երկրին պետք է որ տա նոր ներդրումներ եւ առաջադեմ տեխնոլոգիաներ: Թույլ կտա զարգացնելու հանրապետության գյուղատնտեսական ներուժը: Ղազախստանում փաստարկում են, թե այդպես է ժամանակին վարվել նաեւ Թուրքիան: Անվճար օտարերկրյա բիզնեսին վարձակալության տալով միջերկրածովյան ափամերձ տարածքները, եւ արդյունքում կառուցել հզոր զբոսաշրջային ինդուստրիա: Այսինքն, օգուտներն ակնհայտ են, բայց ի՞նչ է կատարվում արդյունքում: Տեսնում ենք, որ հանկարծ, ամենաանհարմար պահին սկսում են հանրային քննարկումներ հողային հարցով, որն անտրամաբանորեն ստանում է հզոր պոռթկում: Չնայած խոշոր հաշվով երկրում իրավիճակը մնում է կայուն, սակայն սոցիալական ցանցերում եռում են բոլորովին էլ ոչ կատակային կրքերը, որոնց նպատակներից մեկը իշխանության բացասական իմիջի կերտումն է: Թե սա ինչ է իր մեջ պարունակում, հասկանալի է ցանկացած մեկին: Առնվազն, ներդրողները, որոնցից շատերը ծրագրում են մտնել Ղազախստան, կվերանայեն իրենց քաղաքականությունն այդ երկրի հանդեպ:

Որոշ ոչ կառավարական կազմակերպություններ Ղազախստանի բարեկեցության նկատմամբ իրենց մտացածին հոգատարության մեջ վարում են ուղղակի քայքայիչ գործունեություն: Պայքարը ներդրողների հետ, նրանց ունեցվածքի ազգայնացման կոչերը, կրթական բարեփոխումների քննադատությունները, գործի են դրվում ցանկացած փաստարկներ: Եվ եթե դրանք չկան, ապա հորինվում են: Հայտնի է, որ նման դեպքերում փնտրվում է որեւէ սակրալ կերպար, որը կարող է ապահովել սոցիալական պայթյուն: Ոստիկանների կողմից ծեծված ինարված կերպարը միայն մեկ փորձ է «վառելու» հասարակությանը, փորփրելու հանրային կարծիքը: Այնպես որ, իմ կարծիքով շատ շուտով արժե սպասել ինչ-որ սադրանքներ:

Իհարկե, շատերին է հետաքրքրում այն հարցը, թե ո՞ւմ է պետք քայքայել կայունությունը մի երկրում, որն աշխարհում զբաղեցնում է 9-րդ տեղն իր տարածքով եւ գտնվում է աշխարհի երկու հզոր դերակատարների՝ Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ: Այս հարցը բաց եմ թողնում, որովհետեւ կոնսպիրոլոգիական տեսությունների կողմնակից չեմ: Բայց դրա փոխարեն հեշտությամբ կարելի է ասել, թե ի՞նչ կլինի, եթե Ղազախստանում փորձեն կրկնել Ուկրաինայի կամ Ղրղզստանի սցենարները: Այդ դեպքում պետք է հիմնավորապես մոռանալ երկրի տնտեսության ամրապնդման մասին, այն այդպես էլ կմնա հումքային ասեղի վրա եւ կլինի շատ խոցելի: Դա կարող է քայքայել Ղազախստանի ծրագրերը՝ դառնալու տրանսպորտային եւ ֆինանսական հաբ Եվրասիայում: Մասնավորապես, եթե խոսել տարանցիկ ներուժի մասին, ապա Աստանան ակտիվ մասնակիցն է «Մեկ գոտի՝ մեկ ուղի» ծագրի: Այն երկիրը դարձնում է տրանսպորտային կամուրջ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ, իսկ նկատի ունենալով Թուրքմենստանի եւ Իրանի միջով դեպի Պարսից ծոց ճանապարհի բացումը, ճանապարհ է բացում Հյուսիս-Հարավ առանցքով:

Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաեւն այսօր հանդիսանում է անվիճելի միջնորդ, որը հնարավորություն է տալիս կառուցելու սերտ փոխհարաբերություններ ԵԱՏՄ-ի եւ Եվրոպական Միության միջեւ՝ փորձելով մոտեցնել երկու ինտեգրացիոն միավորումների դիրքորոշումները: Հենց դեպի Ղազախստան են գնում այն պետությունների ներդրումները, որոնք դժվարություններ են զգում Ռուսաստանի հետ աշխատանքում (խոսքը, մասնավորապես, թուրքական բիզնեսի մասին է): Այսպիսով ամբողջական կարծիք է ձեւավորվում, որ տեղեկատվական հարձակումը նպատակ ունի պայթեցնելու ոչ միայն բուն Ղազախստանի տնտեսական աճը, որքան նաեւ նրա հարեւանների: Ինձ թույլ եմ տալիս մտածել, որ ոչ մեկը նպատակ չունի ավերել Ղազախստանը որպես ինքիշխան պետություն: Վերջին հաշվով այդ երկրի ամրության պաշարը շատ մեծ է: Բայց կյանքը բարդացնել միշտ կարելի փորձել: Աճող գլոբալ առճակատման համապատկերում նման ռազմավարությունը կարող է հետապնդել մի քանի նպատակներ եւ դրանցից մեկը ստիպելն է Աստանային փոխելու իր բազմավեկտոր քաղաքականությունը, ընտրելու ինչ-որ մեկի կողմը հասունացող գլոբալ առճակատման մեջ:

## «Այո՛, ցեղասպանություն է»



**Որպես անդրադարձ հունիսի 2-ին Հայոց ցեղասպանության փաստը ճանաչող Գերմանիայի բունդեսթագի ընդունած բանաձեւի, հաջորդ օրը հունիսի 3-ին ամերիկյան հեղինակավոր «Նյու Յորք Թայմս» պարբերականը հրատարակել է խմբագրական «Այո՛, ցեղասպանություն է» խորագրով, ինչի առիթով Ամերիկայի Հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին համագումարի եւ ողջ հայկական համայնքի անունից ողջույնի նամակ է հղել խմբագրությանը, որտեղ նշել է, որ պարբերականի խմբագրականը ընդգծել է բունդեսթագի որոշմանը ի պատասխան Թուրքիայի վարքագծի ամբողջական անհեթեթությունը: «Անցյալի հանցագործությունների վրա լույս սփռելը Թուրքիային անհարմար դրության մատնելու միտված չէ: Այն կարեւոր է, սակայն՝ անցյալից դասեր քաղելու եւ ապագայում ցեղասպանությունները կանխելու համար: Փոխանակ շարունակելու տասնամյակներ ձգվող ժխտողական արշավը, Թուրքիան հնարավորություն ունի սովորելու Գերմանիայի օրինակից: Գերմանիան ավելի լավ երկիր դարձավ ընդունելով իր մեղքը Հոլոքոսթի սանձազերծման գործում: Թուրքիան էլ կարող է նույնը անել Հայոց ցեղասպանության առնչությամբ», գրել է Բրայան Արդունին «Նյու Յորք Թայմսին» ուղղված իր նամակում:**

Հ. Ծ.

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 9



# Դժվար է հայ լինելը Թուրքիայում

**ԷԼԻՖ ՇԱՖԱՔ**

Վերջին շրջանում Թուրքիայի քաղաքական շրջանակներում կատարվող վերիվայրումները, որոնց հետեւեց երկրի վարչապետի հրաժարականը, պատճառ դարձան, որ Օսկար Ուայլդը դառնա բուռն քննարկումների թեմա թուրքական խորհրդարանում: Քրդամետ HDP կուսակցության պատգամավորներից մեկը խոսափողին մոտենալով ցանկություն հայտնեց մեջբերում կատարել գրողից, որին AKP իշխող կուսակցությունից մեկ ուրիշ պատգամավոր ընդմիջելով ասաց. «Ի՞նչ է, դուք ոչ մի օրինակ չունե՞ք բերելու մեր մշակույթից, մեր քաղաքակրթությունից»: AKP կուսակցության մեկ այլ պատգամավոր էլ իռլանդացի գրողին Օսկարների մրցանակաբաշխության հետ շփոթեց, եւ նրան HDP-ի կին պատգամավոր Բուրջու Օզքանը հանդիմանանքով դիմեց ասելով. «Մենք խոսում ենք Օսկար Ուայլդի մասին: Նա մարդ է, ոչ թե մրցանակ»:

Իսկ երբ Ուայլդին չեն քննարկում, մեր պատգամավորները բռունցքների հարվածներ են փոխանակում: Փոքրամասնության պատգամավորներին իրենց անձեռնմխելիության իրավունքից զրկելու քննարկումների ընթացքում հայազգի պատգամավոր Գարո Փայլանը ենթարկվեց բռնցքահարվածների, աքացիների եւ ատելությամբ լի հանդիմանանքների իշխող կուսակցության ներկայացուցիչների կողմից: Փայլանն ասաց. «Նրանք չեն կարողանում մարսել, որ հայ ազգի ներկայացուցիչը ներկայացնում է իրենց ստերը եւ հանդգնում է խրոխտ կանգնել իրենց առաջ»:

Հայ լինելը դժվար է Թուրքիայում: Դժվար է նաեւ քուրդ լինելը: Կամ ալեւի, գեյ, հրեա, բարեխիղճ ընդդիմախոս, կին, կամ սովորական անհատ լինելը, ով պարզապես դեմ է երկրում կատարվող իրադարձություններին:

Ցուցակը կարելի է երկար շարունակել: Բազմակարծությունը, ընդհանրապես բազմազանությունը ճնշված է երկրում: Խոսքի ազատությանը՝ վերջ տրված: Երկրում գերիշխում է «միօրինակության գաղափարախոսությունը», որը խիստ ազգայնական է, իսլամական եւ բռնակալական, միաձուլված մաչոյականությամբ (machismo) եւ հայրապետությամբ (patriarchy): Քաղաքականության մեջ տիրող լարվածությունը թափանցել է առօրյա կյանքի բոլոր մյուս ոլորտները:

Թուրքիան միայն քաղաքականապես չէ, որ բեւեռականացված է: Երկիրն այժմ խստորեն բաժանված է երկու տարբեր «արբանյակների»: Մի մասում նրանք են, ովքեր բոլոր հանգամանքներում պաշտպանում են եւ շարունակելու են պաշտպանել նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Մյուսում՝ բոլոր նրանք, ովքեր տարբեր պատճառներով, դեմ են նրան: Նախագահը, որ տեսականորեն չեզոք պետք է լինի եւ քաղաքական կուսակցություններից վեր, անկախ, իրականում այդպիսին չէ: Էրդողանը ամենաբաժանարար քաղաքական գործիչն է Թուրքիայի արդի պատմության մեջ: **AKP** կուսակցության անդամներից պահանջվում է եւ ակնկալվում բացարձակ ու անվերապահ հնազանդություն: Նույնիսկ ներկուսակցական ժողովրդավարության մասին խոսք լինել չի կարող: Այն չկա: Վարչապետ Դավութօղլուի հայտարարությունը զարմացրեց բոլորին: Նա ասաց, որ իր հրաժարականը ընտրության հարց չէր, այլ «անհրաժեշտություն»: Գաղտնիք չէ, որ նրան փոխարինող վարչապետը կլինի Էրդողանի կողմից ամբողջովին վերահսկվող անձնավորություն, ով է՛լ ավելի կամրապնդի նրա իշխանությունը: Էրդողանի ցանկությունն է նախագահական մենաշնորհյալ իշխանություն հաստատել Թուրքիայում:

Այն ինչ մնացել է ընդդիմությունից՝ մասնատված է, ցաքուցրիվ եղած եւ բարոյալքված: «Գեզի պարկի» խռովություններից ի վեր մարդիկ ահաբեկված են: Միջին հաշվով չորս օրը մեկ ինչ-որ մեկը Թուրքիայում դատական կարգով հետապնդման է ենթարկվում Էրդողանին վիրավորելու կամ անպատվելու համար: Նախագահ դառնալուց ի վեր նրանց թիվը հասել է երկու հազարի: Նրանց շարքերում են արվեստագետներ, լրագրողներ, երգիծանկարիչներ, ակադեմիական մակարդակի գիտաշխատողներ եւ նույնիսկ «ֆեյսբուքյան» մեկնաբանությունների հեղինակ ուսանողներ: Տարիների ընթացքում, քանի կրճատվել է մեր լրատվական դաշտը, սոցցանցերը զգալիորեն քաղաքականացվել են: Այժմ դրանք խիստ վերահսկվում են: Թուրքիան գլխավորում է այն երկրները, որոնք «թվիթերյան» էջերից պահանջում են հանել կամ կրճատել որոշակի բովանդակության տեքստեր:

Այժմ ամեն ինչ շատ արագ փոփոխվում է Թուրքիայում: Ապրում ենք «հիմա ի՞նչ է կատարվելու» զգացողությամբ, գիտենալով, որ նոր բացվող օրը ինչ-որ նոր բան է բերելու իր հետ: Մինչ երկիրը հետադիմում է, զգում ենք, որ ժողովրդավարություն չէ մեր ունեցածը: Ժողովրդավարության գլխավոր բաղկացուցիչ մասերը՝ իշխանության բաժանումը, իրավունքի գերակայությունը, խոսքի ազատությունը եւ մյուսները բոլորը խախտված են:

Հայտնի սյունակագիր եւ գիտաշխատող Մուրատ Բելգեին դատում են նախագահին անպատվելու համար: Ակադեմիկոսներ, որոնք բողոքարկել էին Հարավային Անատոլիայում կառավարության ձեռնարկած գործողությունները՝ խիստ քննադատության են ենթարկվում իշխանամետ լրատվամիջոցների կողմից: Նրանցից ոմանք ազատվել են իրենց զբաղեցրած պաշտոններից: Չորսը՝ բանտարկվել: Չարաբաստիկ 301 հոդվածը, որը իբր պետք է պաշտպանի «թրքությունը» կամ «թուրքականությունը», չնայած ոչ ոք չգիտի, թե դա ինչ է նշանակում, վերստին հայտնվել է:

Երեք գլխավոր վտանգ է սպառնում մեզ. իշխանության բացարձակ մենաշնորհը, թուրք-քրդական խաղաղության գործընթացի ամբողջական տապալումը եւ աշխարհիկության վերացումը: Վերջերս խորհրդարանի խոսնակ Իսմայիլ Կահրամանը սարսափազդու մի առաջարկով հանդես եկավ ասելով. «Աշխարհիկությունը չպետք է տեղ գտնի նոր սահմանադրության մեջ»: Աշխարհիկությունը այն միակ սկզբունքն էր, որ Թուրքիային տարանջատում էր Մերձավոր Արեւելքի մյուս երկրներից: Այն երկիրը դարձնում էր առավել լիբերալ, բաց եւ բազմազան: Եվ վերջին շրջանում AKP կուսակցության անդամների կողմից «կրոնական սահմանադրություն» որդեգրելու մասին ակնարկները պարզապես տագնապալի են, հատկապես կանանց համար, որոնք ավելի ջերմորեն պետք է բարձրաձայնեն աշխարհիկության օգտին, որովհետեւ նրանք ավելի շատ բան են կորցնելու ծայրահեղական իսլամական ռեժիմի պայմաններում: Պատշաճ է այս առթիվ նշել, որ «Բայան Յանի» հումորիստական պարբերականը, որի հրատարակիչները բոլորը կանայք են, վերջերս մի ծաղրանկար էր հրապարակել, որտեղ թրքուհի Մարիանը ժողովրդին առաջնորդում է «կեցցե՛ աշխարհիկությունը» կարգախոսը ձեռքին:

Որպես այլընտրանքային խոսափող դեռեւս շարունակվող «Ջումհուրիեթ» օրաթերթի երկու վետերան լրագրողներ՝ Հիքմեթ Չեթինկայան եւ Ջեյդա Կարանը երկու տարվա բանտարկության են ենթարկվել «Չարլի Հեբդոյի» երգիծանկարները վերատպելու համար: Նրանց դատավարության ժամանակ իսլամիստական կարգախոսներ էին հնչում ամբողջ դահլիճով մեկ: Դատավարությունը ցնցեց Թուրքիայի ժողովրդավարներին: Ներկայիս, ըստ «Reporters Without Borders» (Լրագրողներ առանց սահմանի)՝ մամուլի ազատության համաշխարհային կազմակերպության ցուցանիշով 180 երկրների թվում Թուրքիան զբաղեցնում է 151-րդ հորիզոնականը:

Անցյալում մենք սեւ հումորի կայուն ավանդույթ ունեինք: Քաղաքականությունը միշտ էլ անհարթ ու կոպտավուն է եղել, բայց ժողովուրդը կարող էր քաղաքագետներին ծաղրել կամ ծիծաղել նրանց վրա: Ոչ մի խնդիր չկար: Հիմա նույնը անել ժողովուրդը չի կարող: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թուրքիայի բնակչության միայն կեսն է մտածում, որ կառավարությանը հրապարակայնորեն քննադատելը կարելի է: Երբ Անգելա Մերկելն է թույլատրում, որ Էրդողանը դատի տա գերմանացի երգիծանկարչին, նշանակում է Թուրքիայի ժողովրդավարներին պաշտպան կանգնող չկա:

Ի՞նչ պատահեց մեր իմացած թուրքական մոդելին: Արեւմտյան ժողովրդավարության, աշխարհիկության, մեծամասնական մահմեդական մշակույթի, բայց նաեւ բազմակարծիք հասարակության այդ եզակի միաձուլվածքից այսօր սոսկ դատարկ հռետորությունն է մնացել: Նույնիսկ Եվրոմիությունը, որին մենք այնչափ ձգտում էինք, այժմ դարձել է լոկ քաղաքական «խաղ»:

Այդուհանդերձ, Թուրքիան ունի միլիոնավոր գեղեցիկ մարդիկ, որոնք չնայած խորապես ընկճված են, բարոյալքված ու միայնակ, բայց գլոբալ առումով միացած են իրար եւ վեր են իրենց կառավարությունից: Ինչ վերաբերում է խորհրդարանում հնչած Ուայլդի մեջբերմանը, որն այդպես էլ տեղ չհասավ, նշեմ, որ այն իշխանության գռեհկության մասին էր:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

*(*) Էլիֆ Շաֆաքը 14 գրքի հեղինակ է: Վերոնշյալ հոդվածը տպագրվել է անգլիական «Գարդիան» թերթում:*

# Թուրքիայի հայերը՝ «Էրդողանի պատանդներ»



Բունդեսթագում Հայոց ցեղասպանության ճանաչումից ի վեր (02.06.2016) Թուրքիայի հայերն ապրում են վախի մթնոլորտում, հայ սրբազանը «համերաշխություն» է հայտնում նախագահ Էրդողանին, մինչ հայոց պատրիարքի հավատացյալների հոտը երկյուղում է վրեժից ու բռնարարքներից, պատմում է իտալացի կաթոլիկների AsiaNews թերթը (Հռոմ): Թուրքիայի շուրջ 100 հազար էթնիկ հայերը «թակարդված» են ատելությամբ համակված երկրում եւ տագնապահար սպասում են ծայրահեղ ազգայնական խմբերի պատասխան գործողություններին, խմբեր, որոնք կարող են օգտվել թուրքական իշխանությունների, հատուկ ծառայությունների եւ զինվորականների աջակցությունից: Դա նախագահ Էրդողանի ցասումնալի ելույթների արդյունքն է: Իր ելույթներում նա մասնավորապես հայտարարել էր, որ կարող է երկրից արտաքսել ինչպես թուրքահպատակ, այնպես էլ ներգաղթյալ հայերին: Իտալական հիշյալ թերթի թղթակցի հետ զրուցած տաճկահայերը խոսել են ներկայումս համայնքում տիրող «վախի մթնոլորտի» մասին: Կառավարության տեղեկատվական քաղաքականությունն այնքան «հայատյաց է դարձել, որ հնարավոր են ամենաանսպասելի հետեւանքներ: Հայ նախկին ուսուցիչներից մեկն ասում է, որ Թուրքիայում հայերն իրենց զգում են իբրեւ «պատանդներ»: Նրա խոսքերով՝ Թուրքիան չի կարող ընդունել, որ Գերմանիան խոստովանեց սեփական պատասխանատվությունը հայերի բնաջնջման համար, դրանով իսկ Անկարային զրկելով մեղքի իր բաժինը ժխտելու հնարավորությունից: Լարվածությունը թուլացնելու ակնկալիքով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի Պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, որը կուզենար ապագայում պատրիարք դառնալ Էրդողանի օգնությամբ, երկարաշունչ նամակ է գրել Թուրքիայի նախագահին: Այնտեղ նա գրում է, որ Բունդեսթագի ընդունած բանաձեւը «խոր ափսոսանք է առաջացրել հայ ժողովրդի մեջ»: Տեղապահը պարզապես կրկնել է Էրդողանի ասածը, երբ վերջինս Գերմանիային քննադատել էր, կանցլեր Մերկելի բնորոշմամբ, «անընդունելի» խոսքերով:

Այդուհանդերձ արքեպիսկոպոսի դիրքորոշումը հասկանալի է: Որպես Պոլսո ապագա պատրիարք, նա պարտավոր է իր հոտը պաշտպանել թուրք ազգայնականների բացասական հակազդեցությունից եւ Էրդողանի իսլամիստական ծայրահեղականությունից:

Ի դեպ, հայկական մամուլը պակաս ներողամիտ գտնվեց փոխանորդի խոսքերի հանդեպ: Սփյուռքի հայերը Աթեշյանին կոչ են անում գործել «որպես Քրիստոսի եկեղեցու ճշմարիտ առաջնորդ» եւ Ֆրանցիսկոս պապից սովորել «արիություն» բառի իմաստը՝ վկայակոչելով 2015 թ. ապրիլի 12-ին Հռոմի Սբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա արած հայտարարությունը:

Ինչ վերաբերում է Ստամբուլի (Կոստանդնուպոլսի) Սբ Սոֆիա տաճարում մահմեդական աղոթքների ընթերցում սկսելուն, KATHPRESS գործակալությունը տեղեկացնում է, որ պաշտոնական Բեռլինը զուսպ կերպով արձագանքեց դրան: Գերմանիայի արտգործնախարարության մամլո քարտուղարը հայտարարեց, թե Անկարայի այդ քայլը Թուրքիայի ներքին գործն է: Այդուհանդերձ նա ցանկություն հայտնեց, որ համաշխարհային ժառանգության մաս հանդիսացող շենքի օգտագործումը տեղի ունենա առանց դրա կարգավիճակին «վնասելու»: Իրենց հերթին որոշ թուրք քաղաքական գործիչներ, իբրեւ պատրվակ օգտագործելով Հայոց ցեղասպանությանն առնչվող բանավեճը, կոչ են արել այսուհետեւ ուշադրություն չդարձնել արեւմուտքցի քրիստոնյաների դիրքորոշմանը եւ առաջարկել են նախկին քրիստոնեական տաճար Սբ Սոֆիան վերստին դարձնել մզկիթ:

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 10



# Ռուսաստանը Հյուսիսային Կովկասը կորցնելու վտանգի առջեւ

**ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Ամիսներ առաջ ամերիկյան հասարակական հեռուստաալիքով պատահաբար ականդրեցի ռուսական «Պառնաս» ընդդիմադիր կուսակցության փոխնախագահ Իլյա Յաշինի ճեպազրույցը, ուր նա ներկայացնում էր Չեչնիայի ինքնավար հանրապետության ղեկավար Ռամզան Կադիրովի գործունեության մասին իր կազմած ծավալուն զեկույցը՝ «Սպառնալիք ուղղված ազգային անվտանգությանը» վերնագրով:

«Վերջին տարիներին Ռուսաստանում ձեւավորվել է մեր տեղական «Քվազի Իսլամական պետությունը»,- ասում էր իր խոսքում Իլյա Յաշինը: -Մեկուսացված կրեմլյան իշխանություններից՝ «չեչենական խալիֆաթն» ապրում է իր սեփական օրենքներով, շարիաթի որոշ նորմեր գերադասելով ՌԴ օրենքներից: Կադիրովը վարում է կենտրոնախույս ներքին եւ արտաքին քաղաքականություն: Չեչնիայում ստեղծված է Կադիրովի անձի պաշտամունք, նա իրեն համարում է չեչենների գլխավոր իմամ: Չեչեն զինյալները ահաբեկչական հարձակումներ են իրականացնում Կադիրովի հակառակորդների դեմ Մոսկվայում եւ Ռուսաստանի սահմաններից դուրս: Չեչնիայի նախագահը ողողված է շքեղության մեջ, նա ունի իր սեփական գազանանոցն ու ձիանոցը, երկրում թույլատրվում է բազմակնությունը, կան հարեմներ: Բնակչության աշխատավարձից եւ բիզնեսից ամեն ամիս պարտադիր գումարներ են պահվում իր հոր՝ Ահմեդ Կադիրովի հիմնադրամի համար: Կադիրովը ստեղծել է իրեն հավատարմության երդում տված բազմահազարանոց բանակ: Փաստորեն նա Չեչնիան վերածել է կենտրոնից օտարվող մի երկրի, ուր սակայն շարունակում են հոսել տասնյակ միլիարդների հասնող դաշնային կենտրոնի գումարները: Այս իրավիճակը սպառնում է Ռուսաստանի ազգային անվտանգությանը եւ նախադրյալ ստեղծում նոր պատերազմի բռնկման համար»,- նշում էր իր խոսքում ռուսազգի ընդդիմախոսը:



Այս ամենում նա մեղադրում էր ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին եւ նրա վարած պրոմահմեդական քաղաքականությանը, ասելով որ Պուտինը տեղյակ է Կադիրովի կամայականություններից եւ, այնուամենայնիվ, շարունակում է նրան աջակցել դրա դիմաց ունենալով Չեչնիայում «կայունություն» եւ «խաղաղություն»:

Նշենք, որ այս զեկույցի համար շարժառիթ է հանդիսացել անցյալ տարի փետրվարին ռուս քաղաքական գործիչ Բորիս Նեմցովի սպանությունը, ինչում, ըստ կանխավարկածի, նշմարվել է չեչենա-ինգուշական հետք, եւ պատվիրատուն, ըստ Իլյա Յաշինի ենթադրության, Ռամզան Կադիրովն է:

Իսկ ինչ աղերս ունեն Չեչնիային առնչվող վերոշարադրյալ իրողությունները Կովկասի հարավում գտնվող Հայաստան երկրի հետ: Կարծում եմ՝ ամենաուղղակի:

Պետք է ընդունել այն փաստը որ Պուտինն, ի տարբերություն Ռուսաստանի նախկին նախագահ Բորիս Ելցինի, կարողացավ Հյուսիսային Կովկասի ամենաանհնազանդ երկրի՝ Չեչնիաի հարցում վարել այսպես ասած՝ փափուկ ռեժիմի, «Պուտին-Կադիրով» ֆորմատի կիսապաշտոնական քաղաքականություն, փոխարենն ունենալով իր իշխանավարության տարիների համար «անգլխացավ» եւ չպատերազմող Չեչնիա: Սակայն ի՞նչ է լինելու Պուտինի հեռանալուց հետո:

Առանձնակի Նոստրադամուս լինել պետք չէ կանխատեսելու համար, որ վաղ թե ուշ Ռուսաստանի Դաշնության հիմքերը կքանդվեն: Դրա մասին են վկայում այսօր Ռուսաստանի շուրջը ընթացող խիստ անբարենպաստ միջազգային զարգացումները, ինչպես նաեւ՝ այդ երկրի ներսում տեղի ունեցող քայքայիչ պրոցեսները, պայմանավորված իսլամի գործոնով: Եվ՝ «Կտրվելու է այնտեղ, որտեղ բարակ է»: Իսկ Ռուսաստանի Դաշնության հսկա տարածքում այսօր «ամենաբարակ» տեղը թերեւս Հյուսիսային Կովկասն է:

Հիմնական խնդիրներից մեկը Հյուսիսային Կովկասում ապրող ռուսական բնակչության կտրուկ նվազումն է, ինչը մեծ թափ ստացավ առանձնապես Չեչնիայի առաջին (1994-1996) եւ երկրորդ (1999 -2001) պատերազմներից հետո: Այսօր Հյուսիսային Կովկասում ապրող ռուսների թիվը կազմում է ընդհանուր բնակչության ընդամենը 20 տոկոսը: Ամբողջ Ռուսաստանի Դաշնությունում Հյուսիսային Կովկասը միակ վայրն է, ուր ռուսական տարրը նվազագույնն է, ինչը քիչ պատճառ չէ որպեսզի ապագայում Ռուսաստանն առհասարակ դուրս մղվի այնտեղից, թեկուզ եւ այդ երկրներում անկախության հանրաքվե անցկացնելու ճանապարհով: Այս ինքնավար երկրները սակայն զարգանում են ի հաշիվ կրեմլյան գանձարանից տրամադրվող միլիարդավոր ռուբլիների հասնող դոտացիաների եւ ներդրումների, չնայած այն հանգամանքին, որ Չեչնիայում, Ինգուշեթիայում եւ Դաղստանում ռուսազգի բնակչություն գրեթե չի մնացել:

Հաջորդ պատճառը՝ Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Չեչնիայում, իշխանական մակարդակով տարվող իսլամացման ակտիվ գործընթացներն են, ինչը միտում ունի ներառել տեղի մահմեդական բոլոր երկրները՝ հեռանկարում ստեղծելով այնտեղ մահմեդական երկրների էմիրություններ: Հյուսիսային Կովկասի յոթ պետություններից միայն Հյուսիսային Օսիան է հիմնականում քրիստոնյա երկիր:

Այս իրավիճակում Ռուսաստանը կա՛մ պետք է կրկին պայքարի Հյուսիսային Կովկասի համար, որպեսզի պաշտպանի իր ներդրումները, կա՛մ՝ ուղղակի հեռանա Կովկասից: Հեռանալը կլինի ինքնասպանությանը համազոր քայլ, քանզի դա նախադեպ կհանդիսանա Ռուսաստանի Դաշնության հետագա կազմաքանդման գործընթացի համար: Այսօր առավել քան երբեւէ Ռուսաստանի Դաշնությունում կան ռեալ նախանշաններ իսլամի դրոշի տակ հավաքելու այդ երկրում ապրող 21 միլիոն մահմեդականների եթե ոչ բոլորին, ապա՝ զգալի մասին, եւ դրանում, իր մարտնչող իսլամական գաղափարների անարգել տարածմամբ, մեծ դեր ունի Ռուսաստանի Իսլամական Կոմիտեի ղեկավար, ադրբեջանցի Հեյդար Ջամալը:

Ավելացնենք այս ամենին հանուն Կովկասի ռուս-թուրքական դարավոր պայքարի մինչ օրս չմարող առկայծումները եւ Ռուսաստանին Կովկասից դուրս մղելու Թուրքիայի վաղուց փայփայած համաթուրանական նկրտումները: Եթե դիտարկենք այսօր ողջ Կովկասում առկա ռուս-թուրքական շահերի հարաբերակցությունը, ապա ստեղծված պատկերը ակնհայտորեն Ռուսաստանի օգտին չէ: Կովկասը պահելու գործում ո՞վ է կանգնելու ռուսների կողքին, Թուրքիայի փոքր եղբայր Ադրբեջա՞նը, թե՞ հակառուս Վրաստանը...

Ռուսաստանը պետք է աչքի լույսի պես արժեւորեր Հայաստանի հետ իր ռազմավարական դաշնակցությունը եւ չենթարկեր այն փորձության, ինչպես դա արեց ապրիլյան պատերազմի ժամանակ: Հայաստանը Կովկասում Ռուսաստանի լինելիության միակ պատվարն է եւ այս հանգամանքը մեր երկիրը, որպես Ռուսաստանի վրա ազդեցության միջոց, պետք է լավ օգտագործի: Այսօր հայ-թուրքական սահմանին կանգնած ռուս զինվորն այնտեղ է ոչ այնքան հայերի անվտանգությունն ապահովելու, որքան՝ Ռուսաստանի Դաշնության կովկասյան սահմանը հսկելու անհրաժեշտությամբ: Եվ ռուս որոշ փորձագետների հնչեցրած «սպառնալիքը», թե՝ Հայաստանում շարունակվող հակառուսական տրամադրությունների ի պատասխան Ռուսաստանը ստիպված կլինի դուրս հանել Հայաստանից 102-րդ բանակը, հեռու է լրջությունից:

Հունիսի 3-ին Գերմանիայի Բունդեսթագը ընդունեց պատմական որոշում, ճանաչելով եւ ընդունելով իր հանցակցությունը հայերի բնաջնջման գործում: Հայոց եղեռնի մեջ մեղսակցության առումով Ռուսաստանը թերեւս Գերմանիային հաջորդող երկիրն է, որի ոչ սկզբունքային, երկնչոտ, դավադիր դերը հայոց փրկության գործում հանգեցրին աղետալի հետեւանքների: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքերի հայաջինջ քաղաքականության մեջ իր դերն ունեցավ ռուսական գործոնը, ինչը խորացավ քեմալա-բոլշեւիկյան դաշինքի կողմից հայկական տարածքները մսխելու հանցավոր գործարքով: Ռուսաստանի ձեռքում այսօր կա մի զորեղ կռվան, որով նա կարող է ազատվել հայերի նկատմամբ ունեցած իր մեղավորության բեռից՝ չեղարկել 1921թ.-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը:

Հունիսի 3-ին Բունդեսթագի պատգամավորներից մեկը մեկնաբանելով Գերմանիայի ընդունած բանաձեւը ասաց հետեւյալ տպավորիչ խոսքերը. «Ես հավատում եմ, որ կգա այն օրը, երբ ես կքայլեմ Երեւանից դեպի Արարատ լեռը»:

Այո, Արարատի վերադարձը սոսկ հայության պայքարը չպետք է լինի, ինչին լծված ենք ահա 101 տարի: Արարատի ու նրա շրջակա տարածքների վերադարձը պետք է լինի նաեւ քրիստոնյա աշխարհի եւ ողջ առաջադեմ մարդկության պատվի խնդիրը:

Նյու Յորք

---

## Շնորհավորանք

## Հայկական էկզոտիկա՝ սիրո բռնկումներով



*Հակոբը եւ Ռիման, Մերին եւ Հարությունը*

Զարմանահրաշ երեւույթներ են տեղի ունենում հակասական տրամադրություններով համակված մեր Հայաստան աշխարհում: Ո՛չ, ո՛չ, խոսքը չի վերաբերում շփման գծի առաջացրած հեղաբեկումներին: Խոսքը վերաբերում է հայ-ամերիկյան առնչությունների զգացմունքային նուրբ ոլորտներից մեկին:

Բանն այն է, որ արմատներով բայազետցի՝ նախկին սիրիահայ, ներկայումս լոսանջելեսաբնակ տեր եւ տիկին Արմեն Բաթմանյանի ու Օվսաննա Սաղրյանի դուստր Մերին ինտերնետային կապ էր հաստատել Հայաստանի ստեղծին ոչ պաշտոնական հայրենիք Արամուս գյուղի բնակիչներ տեր եւ տիկին Գառնիկ Հակոբյանի ու Աստղիկ Սարկավագյանի որդի Հարությունի հետ: Եվ պարզվեց, որ այդ ընդամենը էլեկտրոնային շփումները եւս կարող են վերածվել փոխադարձ սիրո եւ ամուսնական դաշինք կնքելու անկասելի ցանկության: Մնում էր միայն առերես հանդիպմամբ հաստատել զգացմունքների անշեղությունը:

Ահա եւ օրերս Երեւան ժամանեց Բաթմանյանների ընտանիքը եւ տեղի ունեցավ իրար հավակնող զույգի անձնական առումով պատմական հանդիպումը: Իրապես հաստատվեց բուռն սիրո առկայությունը: Սակայն ամենամեծ անակնկալը առջեւում էր. ի հայտ եկավ, որ երկու կողմերի հարյուրից ավելի հարազատների ու բարեկամների մասնակցությամբ տեղի ունեցած նշանդրեքի ժամանակ հարսնացուի եղբայր կալիֆոռնիացի «կովբոյ» Հակոբը հասցրել էր աչք դնել փեսացուի միակ քրոջ՝ նրբագեղ Ռիմայի վրա: Ընդ որում, նրա համառությունը ծիլեր էր տվել: Եվ մի շաբաթ հետո Բաթմանյանները սիրահոժար խնդրեցին Ռիմայի ձեռքը: Պատկերացնու՞մ եք հատկապես երկու կողմերի մայրերի շփոթվածությունն ընդամենը երկու շաբաթվա ընթացքում միաժամանակյա զոքանչ-սկեսուր պաշտոնական կարգավիճակ ձեռք բերելու կապակցությամբ: Մնում է միայն սպասել առաջիկա «իսկական» հայկական միացյալ հարսանեկան հանդեսին, Հայաստանում թե Ամերիկայում, թերեւս կարեւոր չէ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ:

ՀԱԿՈԲ ՄՈՒԹԱՖՅԱՆ

*Բնականաբար, **«Ազգ»** շաբաթաթերթի կոլեկտիվը չէր կարող անտարբեր գտնվել քույրերի ու եղբայրների միջեւ տեղի ունեցած այս էկզոտիկ ազգային իրադարձությունների նկատմամբ ու բարեմաղթությունների ջերմ խոսքեր չասել նորոսիրահարյալներին՝ երջանիկ եղեք, ամուր ընտանիք կազմեք ու հարազատներին եւ հայ մարդկանց ուրախացրեք սիրունիկ բալիկներով:*

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 11



# Բիլդերբերգյան ակումբի օրակարգում էին Ռուսաստանը, Չինաստանը, Մերձավոր Արեւելքը...

Անցյալ շաբաթավերջին Գերմանիայի Դրեզդեն քաղաքը դարձել էր փակ գոտի: Դրեզդենի նշանավոր օդերային թատրոնի մոտ գտնվող Taschenberg-palais շքեղ հյուրանոցը շրջափակված էր երկաթյա ցանկապատով: Մոտակայքում ցույցերը եւ մարդկանց մեծ կուտակումներն արգելված էին: Հարյուրավոր ոստիկաններ կարող էին ստուգել կասկածելի անցորդներին: Պատճառն այն է, որ Բիլդերբերգյան ակումբի կամ «Համաշխարհային կառավարության» հերթական հանդիպման վայր էր ընտրված Սաքսոնիայի մայրաքաղաքը:

Ակումբի ամենամյա կոնֆերանսները հանդիսանում են «այս աշխարհի ուժեղների» դռնփակ հանդիպումներ: Դրանց մասնակցում են միայն նրանք, ովքեր մարմնավորում են իշխանությունը, քաղաքականությունը, տնտեսությունը, հաղորդակցությունները: 1954 թ. հոլանդական «Բիլդերբերգ» հյուրանոցում ծնունդ առած ակումբը Դրեզդենում էր անցկացնում իր 64-րդ համաժողովը, որը, ինչպես նախորդները, պարուրված էր գաղտնիության ու խորհրդավորության քողածածկույթով: Մամուլի ներկայացուցիչներին արգելված է ներկա գտնվել քննարկումներին: Թեմաները կարելի է նշել, բայց կոնկրետ կարծիքների հրապարակումը չի թույլատրվում: Կոնֆերանսներում արձանագրություններ չեն կազմվում, որոշումներ չեն ընդունվում, քվեարկություններ կամ հայտարարությունների մասին նույնպես չի խոսվում:

Այս ամենն առաջացնում է բազմաթիվ ենթադրություններ, թե ընտրյալների նեղ շրջանակում ձեւավորվում են կարծիքներ, որոնք հետագայում հսկայական ազդեցություն են գործում քաղաքական, տնտեսական ու հասարակական գործընթացների վրա: Գերմանիայում հանրահայտ է դարձել Գերհարդ Վիշնեւսկու «Իշխանության բիլդերբերգյան պարագլուխները» գիրքը, որտեղ խոսվում է «տնտեսության, քաղաքականության եւ լրատվամիջոցների վերնախավի դավադրության» մասին: Անշուշտ, «պարագլուխները» դա ժխտում են: Մասնավորապես, կոնֆերանսների կազմկոմիտեի նախագահ, ֆրանսիական AHA ապահովագրական կոնցեռնի ղեկավար Անրի դը Կաստրին դրեզդենյան հանդիպման նախօրեին տված հարցազրույցում հավաստիացրեց, թե դռնփակ խոսակցությունն անցկացվում է բացառապես զրույցների դյուրացման նպատակով: Սակայն դժվար է պատկերացնել, թե այդքան հայտնի եւ գերզբաղված գործիչները մի քանի օրով բոլոր գործերից կտրվում են առանց գործնական նպատակի՝ պարզապես միմյանց հետ լավ շփվելու համար: Դրեզդենյան ներկայիս հանդիպման բոլոր 130 մասնակիցները հույժ կարեւոր անձինք են: Նրանց թվում է Հենրի Քիսինջերը: Բիլդերբերգյան ակումբի նիստերին անպայման մասնակցում են նաեւ Դեյվիդ եւ Նելսոն Ռոկֆելլերները, Զբիգնեւ Բժեզինսկին, Ալան Գրինսփենը եւ ամերիկյան քաղաքականության, ֆինանսների, տնտեսության մյուս խոշոր դեմքերը: «Dresdener Neuste Nachrichten» թերթը հաղորդում է, որ դրեզդենյան կոնֆերանսին մասնակցել է Նիդերլանդների թագավոր Վիլլեմ-Ալեքսանդերը:

Դրեզդենում վերջին օրերին կարելի էր տեսնել գերմանական խոշորագույն կոնցեռների (Siemens, Springer, Airbus...) ղեկավարներին: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ գերմանական արդյունաբերության միավորման ղեկավար Ուլրիխ Գրիլլոն: Դաշնային կառավարությունը «գործուղել» էր նույնիսկ երեք նախարարների. դրանք են ֆինանսների, պաշտպանության եւ ՆԳ նախարարներ Վոլֆգանգ Շոյբլեն, Ուրսուլա ֆոն դեր Լյայենը եւ Թոմաս դե Մեզյերը:

Դրեզդենի կոնֆերանսն ավարտվել է հունիսի 12-ին: Ընտրյալների ակումբը հետաքրքրվում է աշխարհի բոլոր կարեւորագույն գործերով: Գերմանական «Handelsblatt» թերթի տեղեկությունների համաձայն, Բիլդերբերգյան ակումբի 2016 թ. հանդիպման թեմաները եղել են միգրացիոն ճգնաժամը, ԱՄՆ նախագահական ընտրությունները, էներգիայի եւ հումքի գները, համացանցի անվտանգությունը, Չինաստանը, Ռուսաստանը, Մերձավոր Արեւելքը:

**Պ. Ք.**

# Բեռլինը չիրականացրեց Ալիեւի հույսերը...

⇨1

Նրանց հայացքներն էլ դժվար չէր կարդալ: Ալիեւը լսարանին էր ուղղում խոսքը, ուր ավելի շատ ադրբեջանցի լրագրող կար, քան միգուցե իր երկրում իսկապես գոյություն ունի, իսկ Մերկելը, որի աչքերն այդ օրը մի քիչ հոգնած էին թվում, հենց սկզբում, կարծես անակնկալի եկած Ալիեւի խոսքից, դեմ հանդիման նստած լրագրողներից հայացքը կտրուկ ուղղեց հյուրին՝ ասես փոխանցելով՝ քիչ առաջ մեր զրույցն ա՞յս ընթացքն ուներ...

Ալիեւը բռնության պոռթկման մեղքը բարդեց Հայաստանի վրա՝ սադրանք նկատելով դրացի երկրի գործելակերպը, գրում է «Թագեսշպիգելի» թղթակիցը՝ բեռլինյան ասուլիսից հետո: Թերթը հիշեցնում է նաեւ Հայաստանի նախագահ Սարգսյանի՝ երկու ամիս առաջ Բեռլինում հնչեցրած այն հայտարարությունը, թե մարտերը սկսել է Ադրբեջանը, հետեւաբար՝ նա է մեղավոր: Մերկելը քաղաքական գործընթացն առաջմղելու կոչ երկու կողմին է անում՝ «մի կողմը միայնակ դա չի կարող անել», հունիսի 7-ին՝ կանցլերի հնչեցրած հորդորն ընդգծել է «Թագեսշպիգելի» թղթակիցը:



*Գերմանիա Գերմանիայի կառավարության ֆոտոծառայություն, լուսանկարի հեղինակ՝ Բերգման*

Մերկելի այդ զանգը դեռ հնչում է ականջիս: Մեր ընկալմամբ, Հայաստանը միշտ ձգտել է հարցը լուծել բանակցային ճանապարհով, ուրեմն «մի կողմ» ասելով իրավունք ունենք նաեւ հասկանալ, որ դա հայկակա՛ն կողմն է: Կանցլերի թափանցիկ ակնարկն ուղղված էր Ադրբեջանին, դա էր փաստում նաեւ նրա՝ եթե ոչ դաժան, ապա ոչ գոհունակ հայացքն Ալիեւին: Սա՝ մեր ոչ մասնագիտական վերլուծությամբ:

Շարունակենք «Թագեսշպիգելի» մեր գործընկերուհու մտքին հետեւել՝ մայիսին Վիեննայում Ալիեւը հանդիպեց Սարգսյանին: Երկարամյա անշարժ մնացած մի հակամարտության ժամանակ, երբ 2 նախագահները հանդիպում, խոսում են, գրեթե հաջողություն է համարվում: Բայց հանդիպումից շատ չանցած՝ ԼՂ- ում նորից բռնություն գրանցվեց, գրում է «Թագեսշպիգելի» թղթակիցը՝ հունիսի 7- ի համարում: ԵԱՀԿ նախագահության տարում Գերմանիան ուզում է խաղաղության գործընթացում շարժում մտցնել: Խիստ անհավանական է, որ սառեցված հակամարտությունը այս տարի կարող է լուծում գտնել, կարծիք է հայտնում թերթը՝ որպես վերջաբան մեջբերելով Ալիեւի՝ «Ադրբեջանը խաղաղ լուծման կողմնակից է» հայտարարությունը եւ դրա իրական միջուկ - պահանջը՝ Հայաստանից՝ հայկական զինուժի դուրսբերում, միջազգային հանրությունից՝ Հայաստանի հանդեպ պատժամիջոցներ:

Բեռլինը չիրականացրեց Ալիեւի հույսերը: Մամուլի ասուլիսին հնչեցրած նրա պատասխանները, որ իրականում մեղադրական ծավալուն եզրակացություն էր հարեւան Հայաստանին, գերմանական որեւէ լրատվամիջոց չտիրաժավորեց: Նրանց համար Ադրբեջանի, Ալիեւի բարոմետրը ազատ խոսքն է, որ Բաքվի բանտերում է: Սանկտ Պետերբուրգն ի՞նչ է մատուցելու նրան, երբ Իլհամ Ալիեւն արդեն Բեռլինում մի ռեվերանս արեց՝ Ռուսաստանը մեր ստրատեգիական գործընկերն է:

## Ադրբեջանցի լրագրողի հետ մեր զրույցը՝ որպես հետգրություն

Ասուլիսից հետո ինձ դիմած ադրբեջանցի լրագրողին ես անակնկալի բերեցի, երբ ասացի, թե վատ է, որ Սարգսյանի ասուլիսին իր հետ նույն կերպ են վարվել՝ չեն թողել հարց տա (տե՛ս «Ազգ», 9 հունիսի, 2016 թ.): «Իսկապե՞ս վատ եք զգում, որ ինձ թույլ չեն տվել Ձեր նախագահին հարց ուղղել», զարմացավ զրուցակիցս: «Այ՛ո, ով հարց ունի, պիտի պատասխան տրվի», ասացի ու ավելացրի՝ «զարմանում եք, քանի որ Ձեր հարց ունեցող լրագրողներին ոչ թե հերթ չի տրվում, այլ՝ իրավունք»: «Ձե՛ր թերթերն են այդպես գրում, Դուք էլ հավատո՞ւմ եք», ժպտադեմ էր: «Մեր թերթերն ընդամենը արտատպում են միջազգային մամուլի արձագանքը», ասացի: «Լրագրության մեջ՝ աչքով տեսածդ, ականջով՝ լսածդ», ասաց ու հավելեց՝ «Եկե՛ք, տեսե՛ք, համոզվե՛ք, որ այդպես չէ ու գրե՛ք»: «Ու իմ հայկական անձնագրով, հայի անուն- ազգանունով Ձեր երկիր ինձ կարտոնե՞ն», հեգնական հարցս սրահում ներկա շատերը լսեցին: «Անձա՛մբ, սահմանի մյուս կողմից կդիմավորեմ», ասաց: «Լավ էլ փաստեցիք՝ որպես ազատ լրագրող չեմ կարող պարզապես տոմս գնել ու Ձեր երկիր գալ, ինչքան էլ Ադրբեջանի հյուրընկալության մասին գովազդեք»: Պարտված էր: Չխոստովանեց իհարկե, բայց ժպիտով, խոսքով գնահատեց պատասխաններս ու հարցրեց՝ ո՞ր լրատվամիջոցն եք ներկայացնում: «Ազգ» ասացի: «Ծանոթ եմ», ասաց ու սուտ չէր խոսում՝ «ափսոս, հիմա նույնիսկ կայքէջում ռուսերեն չունեք»:

# Զենքի համաշխարհային շուկան 2015-ին կտրուկ աճ արձանագրեց

**Սպառազինությունների համաշխարհային շուկան 2015 թվականին դրամական արտահայտությամբ աճել է ավելի քան 10 տոկոսով եւ հասել 65 մլրդ դոլարի՝ նախորդ տարվա 58,4 միլիարդի դիմաց: Դա առավելագույն աճն է վերջին 10 տարում: Այս երեւույթի հիմնական պատճառը Սաուդյան Արաբիայում ռազմական տեխնիկայի գնումների կտրուկ ավելացումն է 2015 թվականին. դրանց ծավալը հասել է 9,3 մլրդ դոլարի: Այդ մասին հաղորդում է «Բլումբերգ» գործակալությունը, վկայակոչելով ամերիկյան IHS ընկերության պատրաստած Global Defense Trade Report հաշվետվությունը: Վերջինս պարունակում է 65 երկրների սպառազինության շուկաների տեսությունը:**

**Ինչպես պարզաբանում են փորձագետները, Սաուդյան Արաբիայի կողմից սպառազինությունների գնումների կտրուկ աճը (+50% 2015-ին) պայմանավորված է Եմենում հակաահաբեկչական կոալիցիայի մեջ սաուդցիների առանցքային դերով:**

**Բացի դրանից, էապես ավելացել է զենքի պահանջարկը Մերձավոր Արեւելքի եւ Հարավարեւելյան Ասիայի երկրների մեծ մասում: Այսպես, անցյալ տարի զենքի գնումների գծով երկրորդ տեղը զբաղեցրել է Հնդկաստանը (ավելի քան 4 մլրդ դոլար): Երրորդ տեղում Ավստրալիան է (մոտ 2,5 մլրդ), չորրորդում՝ Եգիպտոսը (ավելի քան 2 մլրդ), հինգերորդում՝ Հարավային Կորեան (ավելի քան 2 մլրդ դոլար):**

**Դրա հետ մեկտեղ IHS-ում կանխատեսում են, որ եթե երեք տարվա ընթացքում նավթի գները չվերականգնվեն, ապա նավթ արտահանող երկրները ստիպված կլինեն կրճատել զենքի գնումները:**

**Ինչ վերաբերում է զենք արտահանողներին, այստեղ առաջատարը դարձյալ ԱՄՆ-ն է, որը 2015 թ. մոտավորապես 23 մլրդ դոլարի զենք է մատակարարել: Երկրորդ տեղում Ռուսաստանն է՝ մոտ 7,5 մլրդ դոլար: Սակայն փորձագետները կարծում են, որ շուկայում Մոսկվայի բաժինը շուտով կմեծանա Իրանի հետ առեւտրի ընդլայնման հաշվին, որը սկսում է իր օդուժի հնացած սպառազինությունների փոխարինումը նորերով:**

**Ի դեպ, մինչեւ 2018 թվականը Ռուսաստանի փոխարեն 2-րդ տեղում կարող է հայտնվել Ֆրանսիան, որը Ավստրալիային ռազմանավեր վաճառելու պայմանագիր է կնքել:**

**Ստոկհոլմում գործող Խաղաղության հիմնահարցերի հետազոտման միջազգային ինստիտուտը՝ SIPRI-ն իր հերթին նշում է, որ աշխարհում միջուկային զենքի պաշարները նվազում են, բայց միաժամանակ վերջին տարիներին տեղի է ունենում դրա արդիականացում: Այդ մասին հաղորդում է SIPRI-ի մամլո ծառայությունը՝ աշխարհում միջուկային զենքի պաշարների վերաբերյալ ամենամյա տվյալների հրապարակման կապակցությամբ:**

**2016 թ. տարեսկզբի տվյալներով, աշխարհի 9 երկրներ (ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան, Հնդկաստան, Պակիստան, Իսրայել եւ ԿԺԴՀ) ունեն մոտ 15395 միավոր միջուկային զենք: 2015 թ. տարեսկզբին այդ զենքն ավելի շատ էր՝ մոտ 15850 միավոր: Ըստ որում, ՌԻԱ գործակալությունը նշում է, որ օպերատիվ է համարվում մոտավորապես 4120 միավոր:**

**SIPRI-ի փորձագետները կրկին հավաստում են, որ միջուկային զենքի կրճատումը տեղի է ունենում գլխավորապես ԱՄՆ-ի ու Ռուսաստանի միջուկային զինանոցների հաշվին, որոնց բաժին է ընկնում այդ զենքի համաշխարհային պաշարների ավելի քան 93 տոկոսը: Սակայն կրճատումը տեղի է ունենում դանդաղ տեմպերով, չնայած միջազգային համաձայնությունների առկայությանը: Բացի դրանից, թե՛ ԱՄՆ-ի եւ թե՛ Ռուսաստանի երկարաժամկետ ծրագրերում նախանշված է միջուկային զենքի համակարգերի հետագա արդիականացում: Այսպես, ԱՄՆ-ն ծրագրում է 2015-2024 թթ. 358 մլրդ դոլար ծախսել իր միջուկային ուժերի պահպանման ու նորացման նպատակով: Մամլո տեղեկագրում Ռուսաստանի վերաբերյալ համապատասխան տվյալներ չեն բերվում:**

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT.QXD 16/06/2016 22:43 Page 12



# Միրան Վողոսիչը եւ Ջուն Սան Պարկը կիսեցին Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային մրցույթի առաջին տեղը

## *Երեւանում մեկնարկել է Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի 60-րդ գլխավոր վեհաժողովը*

Հունիսի 14-ին ամփոփվեց Արամ Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային մրցույթը: Գալա-համերգին ներկա էր ՀՀ Նախագահի տիկին **Ռիտա Սարգսյանը**, ում բարձր հովանու ներքո էլ անցկացվում է այս մրցույթը:

Այս տարի մրցույթի հաղթողի կոչումը կիսեցին երիտասարդ դիրիժորներ **Միրան Վողոսիչը** (Խորվաթիա) եւ **Ջուն Սան Պարկը** (Հարավային Կորեա/Գերմանիա):




Այդ երեկո շնորհվեցին նաեւ մի շարք այլ՝ հատուկ մրցանակներ. ժյուրիի անդամ Միխալիս Էկոնոմուի եւ Աթենքի սիմֆոնիկ նվագախմբի սահմանած «Հայդնի 102-րդ սիմֆոնիայի լավագույն մեկնաբանություն» անվանակարգում մրցանակ շնորհվեց նույն Միրան Վողոսիչին, ով հաջորդ համերգաշրջանում ելույթ կունենա Աթենքի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Հատուկ մրցույթի համար Էդվարդ Հայրապետյանի կողմից գրված «Պավան» պիեսի լավագույն մեկնաբանություն» անվանակարգում հատուկ մրցանակ էին սահմանել ժյուրիի անդամ Կոստանտին Օրբելյանը եւ Կաունասի ֆիլհարմոնիկ նվագախումբը (որի գլխավոր դիրիժորն է մաեստրո Օրբելյանը): Այն հանձնվեց Ջուն Սան Պարկին, ով հրավիրվել է նաեւ Կաունաս՝ հանդես գալու տեղի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի կողմից սահմանված «Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի Ադաջիոյի լավագույն մեկնաբանություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել եւս Ջուն Սան Պարկը: Եվ սա դեռ վերջը չէ.«Նվագախմբի համակրանք» մրցանակը Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կողմից հանձնվել է...նորից ու նորից... Ջուն Սան Պարկին, եւ կորեացի տաղանդավոր երաժիշտը 2016-2017թթ. համերգաշրջանի ընթացքում հանդես կգա որպես Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հրավիրյալ դիրիժոր:

ՀՊԵՆ-ի մի այլ որոշմամբ՝ 2016-2017թթ. համերգաշրջանի ընթացքում Իտալիայից ժամանած մասնակից **Բեատրիս Վենեցին** կհանդիսանա Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գլխավոր դիրիժորի ասիստենտ: Իսկ Լյուդվիգ վան Բեթհովենի ասոցիացիան (հիմնադիր նախագահ՝ Էլժբետա Պենդերեցկա) իր կողմից սահմանած հատուկ մրցանակը շնորհել է եւս Միրան Վողոսիչին եւ **Տոսիֆումի Կանաին** (Ճապոնիա): «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգում մրցանակը ստացել է **Բուն Հուա Լիենը** (Սինգապուր):

Մրցանակ է շնորհվել նաեւ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի պաշտոնական նվագախումբ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբին: Ժյուրիի անդամ, «Ասկոնաս Հոլթ» ընկերության կառավարման ավագ անդամ **Մարկ Հիլդրյուն** (Մեծ Բրիտանիա), ժյուրիի կողմից հանձնելով մրցանակը նվագախմբին, նշել է, որ մրցույթի հերոսներն իրականում հենց այս կոլեկտիվի երաժիշտներն են, որոնք ամենօրյա տեւական փորձեր, համերգներ են ունեցել մրցույթի 12 դիրիժորների հետ:

Իսկ Լոնդոնի «Ֆիլհարմոնիա» նվագախմբի գործադիր տնօրեն **Դեյվիդ Ուելտոնը** մրցույթի եզրափակիչ փուլ անցած բոլոր 4 մասնակիցներին հրավիրել է Լոնդոն՝ «Ֆիլհարմոնիա» նվագախմբի կատարումներին, որտեղ վերջիններս աշխարհի լավագույն դիրիժորներից ոմանց հետ կունենան փորձեր:

Երեկոյի ընթացքում Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը ողջունեց Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի նախագահ **Դիդյե Շնոխը**: Նա շնորհավորական խոսքեր է հղել Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբին մրցույթի օրերին հիանալի կատարումների համար: «Մրցույթի կազմկոմիտեն, մասնակիցները, ժյուրիի անդամները, հանդիսատեսն ապացուցեցին, թե որքան կարեւոր է այս մրցույթը ո՛չ միայն ձեզ, այլեւ համաշխարհային երաժշտական հանրության համար: Ես պետք է ձեզ հավաստիացնեմ, որ Երեւանում դուք հիասքանչ միջոցառում եք անցկացնում: Իրականում մրցույթը բարձր մակարդակի է, եւ երաժշտական կատարումների ու կազմակերպչական բարձր որակների հաշվին այստեղ բոլորդ կարող եք հպարտ լինել: Սա մրցույթ է, որի շնորհիվ աշխարհում լսելի են դառնում Արամ Խաչատրյանի, Հայաստանի Հանրապետության անունն ու փառքը»,- նշել է Դիդյե Շնոխը:

Մրցույթի հաղթողներ Միրան Վողոսիչը եւ Ջուն Սան Պարկը ասացին, որ ուրախ են հաղթանակի համար, բայց միաժամանակ՝ տխուր, քանի որ այս գեղեցիկ տոնը ավարտվում է:

Իրենց խոսքում ժյուրիի անդամ **Կոնստանտին Գ. Օրբելյանը**, նաեւ՝ պատվավոր հյուր **Էլժբետա Պենդերեցկան**, ով հայկական արմատներ ունեցող աշխարհահռչակ կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկու կինն է, հատուկ շնորհակալություն հայտնեցին ՀՀ Նախագահի տիկին **Ռիտա Սարգսյանին**, ում, ինչպես արդեն նշել ենք, հովանու ներքո է անցնում մրցույթը, «անգնահատելի աջակցության համար»: Համերգից հետո մրցույթի ժյուրիի անդամների եւ պատվո հյուրերի համար ընդունելություն էր կազմակերպվել ՀՀ առաջին տիկնոջ կողմից:

Նշենք, որ Արամ Խաչատրյանի անվան մրցույթի հոգաբարձուների խորհրդի նախագահն է ՀՀ նախագահի խորհրդական միջազգային մշակութային-հումանիտար համագործակցության գծով **Արմեն Սմբատյանը**:

Այս օրերին Երեւանում Խաչատրյանի անվան մրցույթի հրավերով անցնում է Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) 60-րդ գագաթաժողովը, որին մասնակցում է մոտ 40 հեղինակավոր միջազգային մրցույթների ղեկավարներ: Երեկ երեկոյան Խաչատրյան համերգասրահում գագաթաժողովի շրջանակներում տեղի ունեցավ WFIMC-ի դափնեկիրների գալա-համերգը **Սերգեյ Սմբատյանի** ղեկավարությամբ:

**Պատրաստեց Գ. ԽՄԱԺԱԿՅԱՆԸ**

# Սփյուռքահայ կամավորներն այցելել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակ

**ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխամասային գրասենյակում հյուրընկալվել են արտերկրից ժամանած 20-ից 30 տարեկան հայ երիտասարդ կամավորներ, ովքեր պատրաստակամ են մասնագիտական հմտությունները Հայաստանի մարզերում կիրառելու հարցում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը կամավորներին ծանոթացրել է ընկերության գործունեության գլխավոր գործառույթների, հիմնարար արժեքների, ինչպես նաեւ որդեգրած կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականությանը:**

**2004 թվականից ի վեր, ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ «Դեպի Հայք» հիմնադրամը կազմակերպել է 32 երկրից Հայաստան ժամանած հայ մասնագետների կամավոր աշխատանքը՝ Հայաստանի տարբեր մարզերում: Հայաստանում հաջողելու Ռալֆ Յիրիկյանի օրինակն այն գործոններից է, որոնք հետաքրքրություն են առաջացրել սփյուռքահայ երիտասարդների մոտ՝ Հայաստան գալու եւ տարբեր նախագծերի մասնակցելու հարցում:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ում չափազանց կարեւորվում եւ քաջալերվում է սփյուռքահայ երիտասարդների՝ հայրենիքը բացահայտելու ցանկությունը: Այստեղ, սակայն, առավելապես կարեւորվում է այն մոտեցումը, որ Հայաստանը լավագույնս ճանաչելու համար պետք է երկիրը դիտել ոչ թե զբոսաշրջիկի աչքերով, այլ՝ հայրենիք այցելել ավելի կարեւոր նպատակով. Հայաստանն ընկալել որպես մի վայր, որտեղ կարելի է ծավալել մասնագիտական գործունեություն կամ սոցիալական տարբեր թիրախային խմբերին ուղղված ծրագրերին կամավորագրվելով՝ սեփական ավանդն ունենալ երկրի զարգացման գործում: Բացահայտել Հայաստանը՝ նշանակում է նրա մասնիկը դառնալ, զգալ երկրի ոգին, անմիջական շփման միջոցով ծանոթանալ նրա բնակիչների հետ, ճանաչել նրանց ապրելակերպն ու առօրյան: Կարեւոր է նաեւ լավ հարաբերություններ հաստատել տարեկիցների հետ եւ ստեղծել անձնական ու գործնական ամուր կապեր:**

**«Ողջունելի եւ խոստումնալից է, որ կայացրել եք այս որոշումը եւ այցելել եք հայրենիք: Որտեղ էլ որ ապրեն հայերը՝ Հայաստանում թե Սփյուռքում, նրանք պետք է հոգան երկրի տնտեսական առաջընթացի եւ բարօրության մասին: Մենք բոլորս պետք է լինենք հաստատակամ, հետեւողական եւ աշխատասեր: Հաջողության են հասնում նրանք, ովքեր ձգտում են ստանալ շոշափելի արդյունք: Մենք կարող ենք հաջողել, եթե առաջնորդվենք լավատեսությամբ եւ մեր երկրի հանդեպ անձնական ու կորպորատիվ պատասխանատվության զգացումով»,-նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Կամավորները կիսվել են Հայաստանում ստացած իրենց տպավորություններով: Ռալֆ Յիրիկյանի հետ հանդիպումն անցել է հարցուպատասխանի ձեւաչափով՝ ընդգրկելով տարբեր թեմաների առնչվող հարցեր: Կազմակերպված քննարկումն օգնել է երիտասարդներին առավել սպառիչ պատկերացում կազմել բիզնեսի կառավարման եւ ղեկավարման սկզբունքների մասին:**

### ՎիվաՍել-ՄՏՍ-ը ՈՒԵՖԱ-ի Եվրո 2016-ի առաջնության Հայաստանում ցուցադրման հովանավորն է

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հայաստանի Առաջին ալիքով ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ցուցադրման հովանավորն է:**

**Երկար սպասված իրադարձությունը լավ առիթ է՝ սիրելի թիմերի խաղը վայելելու եւ դրանց երկրպագելու համար:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ը ֆուտբոլասերներին մաղթում է սպորտային խանդավառությամբ լի բազմաթիվ պահեր:**

**Կարեւոր նշում. ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հ1 հեռուստաընկերության հետ ստորագրել է բացառապես հովանավորչական պայմանագիր, եւ ՈՒԵՖԱ-ի խաղերի հեռարձակմանն առնչվող հարցերին միջամտելու իրավունք կամ արտոնություն չունի:**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կենտրոնական բանկի համար դրամական փոխանցումների հայկական միասնական համակարգ ներդնելու նպատակով կազմակերպության ընտրության բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի համար դրամական փոխանցումների հայկական միասնական համակարգ ներդնելու նպատակով:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02, 59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2016թ. հուլիսի 25-ի ժամը 16:00, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2016թ. հուլիսի 25-ի ժամը 16:00-ին:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2016թ. օգոստոսի 15-ին, ժամը 16-00-ին:

**ՀՀ ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 16.6.2016, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.QXD 16/06/2016 17:40 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 23(274)
17 ՅՈՒՆԻՍ, 2016

ՀԻՇՈՒՄ

# Ժողովրդական երգի դերասանը՝ Օֆելյա Համբարձումյան

**Նաիր ՅԱՆ**

ՀՀ ժողովրդական արտիստուհի Օֆելյա Համբարձումյանն իր կատարողական վարպետությամբ, յուրահատուկ ձայնով ու հարուստ երգացանկով ժողովրդական եւ աշուղական երգարվեստում **գրել** է իր մեծ կենսագրությունը: Թեեւ վախճանվեց 91-ամյակը բոլորած, փառք ու դափնիներ վաստակած, բայց նրա բացակայությունն արդեն իսկ ցավալի է ու մեծ կորուստ, որովհետեւ հայ երգի մի ամբողջ դարաշրջանի խորհրդանիշն ու կրողն էր նա, որ հեռացավ կյանքից: Օֆելյա Համբարձումյանը խտացումն էր մեր աշուղների թողած դպրոցի, ժողովրդական բառ ու բանի, հնարական, անկեղծ երաժշտության, սիրո տաղերի: Օֆելյա Համբարձումյանի երգերի բարձրագույն հատկանիշն անկեղծությունն է. ձայնի ամեն ելեւէջ, երգ դարձած սիրո տաղի ամեն հատիկ բառ շաղախված է անկեղծությամբ, պարզ, մաքուր, անպաճույճ հուզականությամբ: Նրա յուրաքանչյուր երգ կարծես երկխոսություն, զրույց լինի ունկնդրի հետ, որին նա վստահում է իր սիրո պատմությունը, հայրենի բնությամբ, գեղեցիկ խաղով, թռչնի երգով, կանաչ-կարմիր կյանքով ու աշխարհով հիացած հայ մարդու սրտի խոսքը:

Օֆելյա Համբարձումյանը հայ երգի ասպարեզ մտավ Լուսիկ Քոչյանի, Արաքսյա Գյուլզադյանի, Նորայր Մնացականյանի հետ միաժամանակ: Ժողովրդական մեղեդիները նաեւ նրանց շնորհիվ դուրս եկան գյուղերից ու աշուղների սրտերից, մտան քաղաք, ռադիո, հեռուստատեսություն, քաղաքային բեմեր ու համերգասրահներ: Ժողովրդական երգը մասսայացվեց համերգային, նվագախմբային կատարումներով ու անգամ դուրս եկավ Հայաստանի սահմաններից: Գուսան Աշոտը, Շերամը հատուկ երգեր էին գրում Օֆելյա Համբարձումյանի համար, ինչպես օրինակ՝ «Օջախումը», «Էլմարը»: Շատ երգեր արտիստուհու կատարմամբ էին ճանաչում ձեռք բերում, ու նրանից հետո այլեւս դժվար էր այլ կատարում լսելը. դրանք կրում էին նրա հեղինակային դրոշմը: Օֆելյա Համբարձումյանը շարունակեց կոտրել այն կարծրատիպերը, որոնք անտեսել էին նաեւ Լուսիկ Քոչյանն ու Արաքսյա Գյուլզադյանը: Աշուղական երգերը, որպես կանոն, գրվում են տղամարդու անունից. սիրահարը երգ է ձոնում իր սիրուհուն, հեշտաբար, տրամաբանական ու բնական է, որ այդ երգը կատարի արական սեռի ներկայացուցիչը, բայց Լուսիկ Քոչյանի, Արաքսյա Գյուլզադյանի, Օֆելյա Համբարձումյանի, Վալյա Սամվելյանի կատարումները հասարակությանն ընդունեց անվերապահորեն: Գուսան Աշոտը, Հավասին, Ջիվանին, Շերամը, Սայաթ-Նովան նրանց շուրթերով սիրո, բնության, հայրենիքի գովքն էին անում:



Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը պատմում է, որ հայրենադարձության տարիներին, երբ նավերն ու գնացքները սփյուռքահայերին Հայաստան էին բերում, ժողգործիքների անսամբլներն ու երգիչ-երգչուհիները հենց նավահանգիստներում ու կայարաններում էին դիմավորում նորեկներին: Տիգրան Մանսուրյանն այսօրվա նման հիշում է, թե ինչպես 1947 թվականին Բաթումիի նավահանգստում ինքը՝ ութամյա մի տղա, որ ամենեւին պատկերացում չուներ, որ երաժշտությունը կընտրի՝ որպես կյանքի ուղի, առաջին անգամ լսել է Օֆելյա Համբարձումյանին ու հիացել նրա երգով: Հետագայում, իհարկե, ծանոթացել է նրա հետ, ավելի խորությամբ ճանաչել արտիստուհուն, բայց հայրենադարձության առաջին զգացողություններն ու հիշողությունները կապված են Օֆելյա Համբարձումյանի երգի հետ:

Բծախնդիր, խստապահանջ, երգը բնօրինակի անխախտ կանոններով մատուցող երգչուհին մինչեւ վերջ հավատարիմ մնաց հայ երգարվեստին: 90-ամյակի շեմին անգամ նա Սայաթ-Նովայի երգը կատարեց անվրեպ: Բեմընկերները վկայում են, որ Օֆելյա Համբարձումյանը բնագրի յուրաքանչյուր նոտան սրբորեն էր պահպանում ու հնչեցնում, նույնը պահանջում եւ երիտասարդ երգիչ-երգչուհիներից: Ոչ ոք իրավունք չունի խմբագրել ու ձեւափոխել ժողովրդական ու աշուղական երգը. սա չափանիշ է եղել Օֆելյա Համբարձումյանի համար:

Ռադիոյի «Ոսկե դարանում» պահպանվում են Օֆելյա Համբարձումյանի սանձյալ կատարումները, որոնք հայ երգի մասնագիտական դասական նմուշներ են՝ բարձր նշաձող բոլոր ժամանակների համար: Անհրաժեշտ է, ներկա եւ ապագա սերունդների համար, տեխնիկապես մաքրել եւ հանրությանը ներկայացնել նրա բոլոր ձայնագրությունները:

ՆՈՐ ԳՐՔԵՐ

# «Շիրակ երգարանը» լույս է ընծայել Սայաթ-Նովան՝ արեւմտահայերեն



**Կարապետ եւ Հովհաննես Հաննեսյանների «Շիրակ»** հրատարակչատունը (Բեյրութ) գործում է ըստ սանձյալ տարիների ընթացքում իր մշակած հստակ սկզբունքների եւ բարի ավանդույթների: Հրատարակչատունը, մասնավորապես Կարապետ Հաննեսյանը, տասնյակ տարիներ առանձնակի սեր ու խանդաղատանք է ունեցել հայ երգի եւ երաժշտության հանդեպ, եւ այդ սերը նա արտահայտել է իր գործով եւ գործունեությամբ:

1950-ական թվականների առաջին տարիներից Հաննեսյան եղբայրները մտահղացել եւ իրագործել են մի հրաշալի ծրագիր. նրանք հիմնադրել են «Շիրակ» երգարան մատենաշարը, որի առաջին գիրքը տպագրվել է 1952 թվականին, վերջին՝ 31-րդ գիրքը՝ 2003 թվականին: Այդ երգարանները փաստորեն ներկայացնում են 20-րդ դարի երկրորդ կեսի հայ երգի եւ երաժշտության պատմությունը, Հայաստանի եւ սփյուռքի երաժշտական կյանքի կարեւոր իրադարձություններն ու ելեւէջումները, հայ երաժշտական կյանքի շարժումներն ու փոփոխությունները: Դրանք սովորական երգարաններ չեն. ընթերցողը դրանց մեջ կգտնի ոչ միայն երգերն ու նոտաները, այլեւ կենսագրություններ, երգի եւ երաժշտության հետ կապված զանազան հաղորդումներ, վկայություններ, լուսանկարներ եւ այլն:

«Շիրակ» հրատարակչատունը հրատարակել է երկու ճամփորդական երգարան, վեց ձայնագրված երգարան, մեկ ընդարձակ երգարան, «Շիրակ» հրատարակչատան 50-ամյակի առթիվ՝ մի մեծ ծավալուն երգարան, Սայաթ-Նովայի երկու երգարան, մեկ դպրոցական երգարան...

Դրանք բոլորն էլ պատկերազարդ հրատարակություններ են, եւ մատենաշարը ամբողջությամբ արժանի է առանձնակի ուշադրության:

...Շուրջ երկուսուկես տասնամյակ առաջ **Կարապետ Հաննեսյանը** միտք է հղանում Սայաթ-Նովայի խաղերը փոխարկելու արեւմտահայերենի եւ հրատարակել դրանք բնագրերի հետ միասին, զուգահեռաբար: Բանն այն է, որ Տփղիսի բարբառը (թե՞ խոսվածքը) բացարձակապես անհասկանալի է սփյուռքահայ ընթերցողին: «Խաղեր»ը արեւմտահայերենի վերածելու գործը հանձն է առնում բանաստեղծ **Աբրահամ Ալիքյանը**: Գիրքը լույս է տեսնում 1992 թվականին եւ արագորեն սպառվում է, որովհետեւ Սայաթ-Նովայի երգերի եւ երաժշտության սիրահար ընթերցողը հնարավորություն է ստանում հասու լինել մեծ բանաստեղծի ու երաժշտի խաղերի իմաստին եւ բովանդակությանը: Այս հրատարակության համար Կարապետ Հաննեսյանը գրել է շատ գեղեցիկ առաջաբան:

Ցավոք, սակայն, այդ հրատարակության մեջ Սայաթ-Նովայի խաղերի բնագրերը ինչ-ինչ պատճառներով տպագրվել են վրիպումներով, ուղղագրական եւ կետադրական ու այլ տիպի սխալներով:

Կարելի է ենթադրել, որ խաղերը արեւմտահայերենի վերածողի ձեռքին եղել է բնագրերի հին, չճշգրտված հրատարակություն, շատ հավանական է՝ սփյուռքի որեւէ հրատարակություն:

Եվ ահա, «Շիրակ» հրատարակչատունը, ընդառաջ գնալով ընթերցողների կրկնվող պահանջներին, 2016 թվականին վերահրատարակել է իր տպագրած «Սայաթ-Նովան»՝ «Շիրակ» երգարան» մատենաշարով: Գրքում ընդգրկված է Սայաթ-Նովայի հիսունյոթ խաղը:

Այս հրատարակության մեջ խաղերի բնագրերի ուղղագրությունն ու կետադրությունը ճշգրտված են ըստ Հայաստանում հրատարակված գիտական բնագրերի: Ցավոք, վրեպներ, բացթողումներ եւ սխալներ կային նաեւ Աբրահամ Ալիքյանի փոխադրումների մեջ, դրանք նույնպես ճշգրտված են:

Այս հրատարակությունը իրոք բարեփոխված հրատարակություն է:

Գրքում «Շիրակ» հրատարակչատան ավանդույթների շարունակման մասին երկու խոսք է ասել հրատարակիչը:

Արդարացիորեն վերահրատարակված է Կարապետ Հաննեսյանի՝ 1997-ին գրած գեղեցիկ խոսքը:

Գիրքը լույս է տեսել **Երվանդ Տեր-Խաչատրյանի** փոքրիկ առաջաբանով եւ ընդհանուր խմբագրությամբ:

Գրքի շապիկին Հայաստանի ժողովրդական նկարիչ **Սուրեն Սաֆարյանի** «Սայաթ-Նովա» (1961) հայտնի կտավի վերատպությունն է:

Գիրքը տպագրված է ընտիր թղթի վրա եւ ձեւավորված է մեծ ճաշակով:

«Շիրակ» հրատարակչատան տասնամյակների բեղմնավոր ու ազգանվեր գործունեությունը արժանի է խորին հարգանքի եւ հանգամանալից գրավոր խոսքի:

Ե. Խ.

# ԳՈՒՆԱՊԱՏՈՒՄ

## Երազի եւ իրականության միջեւ

Մելանյա ԲԱԴԱԼՅԱՆ

Ամենաբնութագրական բառը գտնելն ամենադժվարն է, մանավանդ երբ անհավակնոտ նկարագրի, ազնիվ արվեստի ու նրա հեղինակի մասին ես փորձում մտորել: Միայն թվում է, թե նկարչությունը հաճույք կամ անդորր է բերում նկարը ստեղծողին. դիտողին՝ այո, բայց հեղինակին դժվար թե. այն նույնքան դժվարին ու տքնանք պահանջող մասնագիտություն է եւ նույնքան պահանջկոտ ու խանդոտ, որքան արվեստի մյուս տեսակները: Ուժասպառ լինելուց հետո, հաճույքը, գուցե այո, տեսանելի է՝ երբ հոգուդ գույնի մի կտոր կտրվում- հեռանում, իջնում է կտավին... Այդ գույնը հետո իր ինքնուրույն կյանքն է ստեղծում, ապրում ինքնաբավ, իր հետ ապրեցնում նաեւ ուրիշին...

Իրականությունը արվեստագետին երկվության մեջ պահելու «առիթներ» շատ ունի. որովհետեւ նա՝ այդ արվեստագետը ո՛չ իրականությանը, եւ ո՛չ իրեն է պատկանում...նա մի տեսակ կամրջի վրա է՝ երկու աշխարհների միջեւ թափառող, ասես մի ծառ՝ արմատներով հողին կառչած, սաղարթները երկինք ուղղած: Նա բավարարվող չէ, անդադար փնտրող է՝ երբեմն ժամանակին ականջալուր, իսկ ավելի հաճախ նրանից խռոված, կամ թե այդ թելերում կորսվածմոլորված: Բայց հենց այդ պահերին է, որ նա գտնում է ինքն իրեն, գնում իր երազի հետեւից, հետո այդ երազը բերում իրականություն ու տեսանելի է դարձնում նաեւ այլոց: Ինձ այնպես է թվում, թե **Էդվարդ Վարդանյանը** միշտ մի երազ է փնտրել ու չի գտել... Իր նկարչության մեջ մի կորած երազ կա, դեղնաթեւ անուրջ, որ որքան գեղեցիկ, նույնքան թախծոտ է: Այն ներքին պալիտրան, որտեղ թաթախվում է նրա վրձինը ու գույներ ստեղծում, կարծես այլակողմյան է՝ այնքան անխառն է, այնքան նախնական... Երբ մտովի փորձում ես հիշել ձեւեր, ֆիգուրներ, գույնը փակում է հայացքդ, ու մի պատմություն, հեքիաթ կամ ծանոթ մեղեդի է գույնի հետ թեւին տալիս: Կարծես նրանք ոչ թե առանձին գործեր են, այլ շարունակվող պատմություններ՝ դյուրընթեռնելի ու ծանոթ այնքան, ինչը տարակուսելի թվում է միայն առաջին հայացքից, որովհետեւ շատ արագ հասկանում ես, որ այս արվեստը ուղղակիորեն արձագանքն է բնության ձայների, ու նկարիչն էլ այդ ձայնի մի մասնիկն է, որ արեւի, դաշտի գույնին խառնել է իր հոգու երազը: Անհնար է բանաստեղծորեն չզգալ այս պատկերները եւ նույնկերպ չփոխանցել այն տպավորությունը գույնի տարածումների, որ նկարիչն է հաղորդում: Սա ուղղակի, առանց միջնորդավորման հանդիպում է Բարու հետ: Կտավների հանդարտությունն ու ներդաշնությունը առաջին լիցքն է, որ ստանում ես: Անցնում ես գույնից գույն, մի երազից տեղափոխվում մեկ այլ երազ եւ զգում, որ մեղմ մի երգ, վաղուց մոռացված հին օրորոցային, պաշարում է քեզ. բակունցյան բնապատկերի զրնգուն մաքրություն՝ սիմինդրի տերեւների խշշող, դռան հին ճռոց, հնձանի այրող շունչ, աշնան արեւի ջերմություն ես շոշափում- զգում: Որքան նրա արվեստը կապված է բնության հետ, ոչ թե որպես պեյզաժային նկարչություն՝ ժանրային առումով, այլ իբրեւ հոգու թելադրանք, ներքին վիճակ, նույնքան այն գալիս է գրականությունից.- ակնհայտ է հեղինակի բանաստեղծական հոգեկերտվածքը, եւ այդ նախասիրությունը պարզորոշ է: Միսաք Մեծարենցը ուղղակիորեն ներկա է նրա նկարչության մեջ, եւ հարցը միայն ծանոթ ու սիրելի բանաստեղծությունների վերնագրերը չեն, կամ գրական մոտիվացիաները, դա «գարուն ու արեւ երգած պատանու» հոգու ջինջ ելեւէջումների, բնությանը ձուլվելու, «ակացիաներու շուքին տակ» ծնված կարոտի էլեգիայի, կիսատ, շա՜տ կիսատ մնացած կյանք-երազի նկարչական արձագանք ու դրա երկրորդում է ասես...

Նկարի, գույնի մեջ ապրող լռությունը բառերի վերածել գրեթե անհնար է, այն զգայական ոլորտին պատկանող իրողություն է, եւ բառը դրա ամենալավ թարգմանը չէ...

Գույնի ու պատկերի այն համամասնությունը, այն թաքնված մտքերն ու ցանկությունները, որ տարրալուծվում են Էդվարդ Վարդանյանի մաքուր դեղինների մեջ, կարծես սկիզբ առնում ու վերջանում են իր ներսում, որովհետեւ ասում ենք, թե նա իր երազն է նկարում, կամ իրականությունը իր երազի միջով է անցկացնում: Երազ կարդալը դժվար է իհարկե, բայց նկարները հուշում են, որ այս երազները, կամ հեքիաթը իրական արմատներ ունեն, որոնցից սնվում են, ու դժվար չէ տեսնել, որ դա հայրենիքն է, Թալինի իր ծննդավայրը, տունը մանկության, թոնրի լավաշի բույրը, մայրը: Երբ նա խոսում է այս մասին, պետք է ավելի ուշադիր նայել աչքերին, եւ ամեն ինչ պարզ կդառնա: Մեկ - երկու առիթ ունեցել եմ լսելու նրա անցյալի հիշողությունները, եւ երբ դրանց տպավորությունները զուգորդում եմ նկարների հետ, նույն զգացողություններն եմ ունենում. ասել է թե նկարիչը ինքն իր հետ բացարձակապես ազնիվ է ու արվեստում էլ այնպիսին է, ինչպես ապրում է իր ամենօրը: Ինչպիսի՜ մաքուր զգացումով է նա կապված հողի, բնության, իր ընտանիքի հետ, ի՜նչ գորովանքով է հիշում մորը, նկարագրում նրան, պատմում գրականության, երաժշտության հանդեպ երկյուղածության հասնող նրա սիրո մասին: Էդվարդ Վարդանյանը դասական մտածողության այն արվեստագետներից, այն մանկավարժներից է, ում համար թանկ են թե՛ ազգային, ընտանեկան ավանդույթներն ու դրանց պահպանումը, թե՛ հոգեւոր- մշակութային ժառանգությունն ու այն ահռելի փորձը, որ անցյալի վարպետները թողել են հետնորդներին: Նա խոնարհումով է հիշում իր ուսուցիչներին եւ նույնը պատգամում ուսանողներին՝ գնահատել եւ արժանին մատուցել բոլոր այն մարդկանց, ովքեր ստեղծել- ստեղծագործել, քարը քարին են դրել, տրադիցիաներ ձեւավորել, որովհետեւ՝ «Անցյալը մոռացողը ապագա չունի»:

Այս նույն զգացումով, գորովանքով նա վերաբերում է կյանքին, երկրին, իր հայրենակցին, կոլեգային, ուսանողին, իր դրացուն: Եվ պատահական չէ, որ հոբելյանական ցուցահանդեսը, որ նախատեսված էր ապրիլի սկզբներին, եւ՝ բացմանը ամեն բան պատրաստ, նա հետաձգեց, որովհետեւ երկրի, ժողովրդի համար այդ ծանր օրերին, երբ ողբերգությունը մտել էր մարդկանց տները, եւ տխրություն կար ամենուր, բարոյապես անպատեհ, անհարիր համարեց:







70-ամյակի ցուցահանդեսային գործերը նա ներկայացրեց դստեր՝ **Ամալյա Վարդանյանի** գրաֆիկական աշխատանքների հետ միասին, բացվեց այն հունիսի 3-ին, Նկարիչների միության սրահում: Ցուցահանդեսի բացման՝ **Կարեն Աղամյանի** գնահատական խոսքից հետո, Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** ջերմորեն ողջունեց հոբելյարին՝ դստեր հետ համատեղ ցուցահանդեսի առիթով՝ նրան պարգեւատրելով նախարարության «Արշիլ Գորկի» մեդալով՝ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում ունեցած ներդրման համար: Անկեղծ բարեմաղթանքներ հնչեցին Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանի խոսքերում, իր վաղեմի ընկերոջ, կոլեգայի աշխատանքը նա համարեց անփոխարինելի, մարդկային նկարագիրը՝ փնտրված: Նմանապես դրվասանքի խոսքեր ասաց դստեր մասին, որ սովորել է նույն բուհում, իսկ ներկայացված աշխատանքների Փարիզյան շարքը նա արել է Գեղակադեմիայի՝ Cité internationale des arts-ի արվեստանոցում:

Հայր եւ դուստր իրենց նկարներով հավասարապես բաժանել էին սրահը վայելելու հաճույքը: Առաջինը, որ նկատելի է Ամալյա Վարդանյանի գրաֆիկական գործերում, գունային ճաշակն ու նկարչական կուլտուրան է: Թեմատիկ նախասիրությունները հստակ ուղղվածություն ունեն, գրական գործերի ընտրությունը որոշակիացնում է դրանց բարոյաէթիկական, սոցիալ- քաղաքական բնույթը: Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի գրական գործերի նկարազարդումները շաղախված են հումորով, երբեմն՝ սատիրայով՝ զերծ ավելորդ չափազանցությունից: Իրեն հատուկ մեղմությամբ է նա ներկայացնում կյանքի մերժելի երեւույթների հանդեպ իր վերաբերմունքը՝ կերպարաստեղծման ինքնատիպ, համոզիչ շեշտադրումներով: Փարիզյան շարքը, որի մասին խոսվեց, քաղաքային տեսարաններ են՝ գծանկարի հստակությամբ, աչք շոյող մեղմ գույների համադրությամբ, երբեմն ներկա հումորային շարժը աշխուժություն է հաղորդում պատկերներին: Ինչպես գրաֆիկական աշխատանքներում, գրքերի ձեւավորման մեջ նույնպես Ամալյան հավատարիմ է իր ոճին՝ պատկեր եւ բովանդակություն ներկայացնել զուտ արտահայտչամիջոցներով, գծի մշակված ձեւերով:

...Ցուցահանդեսը հոգուդ մեջ գույնի նոր հուք է բացում՝ կտավները հնչեցնող վարդանյանական դեղինի: «Նա ունի իր կոլորիտը եւ այդ դեղինների մեջ՝ շատ հետաքրքրական: Այդ տեսակը մենք չունենք, նա պատվավոր տեղ է զբաղեցնում մեր նկարչության մեջ: Նույնիսկ նա ունի ոչ միայն նկարչական, նաեւ մի տեսակ գրողի, փիլիսոփայի հայացք: Երբ նայում ես իր նկարները, կոմպոզիցիաները, թվում է, թե ինքը մեր պապերի՝ Հայաստանի տեսլականն է, որ մարմնավորել է: Եվ դա ոգեղեն է», ասում է **Մարտին Միքայելյանը**:

Պատկերների պարզ ձեւերը երազի, միրաժի միջով են հայտնվում, ստեղծում իդիլիկ զգացողություն, ներքին ինտիմ տարածք, որի բնակիչները թռչող, պատրանքային էակներ են: Արեւագույնի գերակայությունը նկարչի համար առանձնահատուկ նշանակություն պիտի որ ունենա՝ հին երկրի պաշտամունքի, հին ավանդույթների, հին միֆի շարունակության. այդպիսի պատկերների հաճախ ենք հանդիպում, որոնք կարծես գալիս են հաստատելու հին ու նոր կյանքերի հաջորդականության մի ճշմարտություն, որ ենթագիտակցորեն ենք զգում, թերեւս այդ պատճառով էլ երազի է նման... Նա ասում է, որ իր կորած հեքիաթներն է նկարում: Արդյոք դեղի՞նը հեքիաթի գույնն է, եւ մի՞թե կորցրած հեքիաթը չէ, որ երազ է դառնում: Երազ, երազանք՝ առօրյայից թաքցրած մի անկյուն՝ թանկ զգացողությունների: Դրա համար նրա գույները՝ դեղինը, վառ լուսավոր լինելով, փափուկ է՝ աշնան արեւի թավշյա ջերմությամբ, որ նկարչի էությունից է ծնվել՝ բարի, զարմանալի անհավակնոտ:

Ինչպես ճշմարիտ ամեն արվեստ՝ այս նկարչությունը նույնպես անկեղծ ապրումների, հիշողության ու երեւակայության, կյանքի փորձառության շարունակություն է: Երազի եւ իրականության միջեւ...

AZG NEW MSHAKUIT.QXD 16/06/2016 17:40 Page 3



# ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԻ ՈՒՂԵՒՈՐԸ

**ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆ**

*Սկիզբը՝ նախորդ համարում եւ վերջ*

Առհասարակ գրախօսութիւնը գրականագիտութեան ամենահետաքրքրական եւ փորձաքարային ժանրերից մէկն է: Գրախօսութիւնը գրախօսին հնարաւորութիւն է տալիս ոչ միայն մասնագիտօրէն դիտարկելու գիրքը կամ ստեղծագործութիւնը, այլեւ ընթերցողի առջեւ բացայայտելու իր կարողութիւնները, երեւոյթների խորքը թափանցելու իր կարողութիւնը, իր ինտելեկտը, իր ձիրքն ու ներաշխարհը:

Գաղտնիք չէ, որ արեւմտահայ գրական քննադատութիւնը 20-րդ դարի սկզբին ձեւաւորուել էր հիմնականում ֆրանսիական իմպրեսիոնիստական (տպաւորապաշտ) գրականագիտութեան եւ առանձին հեղինակների (Ռեմի դը Գուրմոն եւ ուրիշներ) ազդեցութեամբ: Եւ քանի որ արեւմտահայ գրականութիւնը 1915-ին ընդհատուեց գրական ընթացքի եւ զարգացման իր այդ աստիճանի վրայ, սփիւռքահայ գրականութիւնը յետագայում մտածողութեան այդ կերպը ընկալեց իբրեւ գրական օրինակելի եւ թերեւս նախընտրելի աւանդոյթ, իբրեւ թելադրիչ եւ պարտադրող մտածողութիւն: Եւ յետագայ տասնամեակներում գրողներին եւ գրական երկերը գնահատելիս սփիւռքահայ հեղինակները առաջնորդւում էին հիմնական անհատական զգացողութեամբ եւ կրաւորական տպաւորականութեամբ:

Պէպօ Սիմոնեանը իր գրախօսականներում հրաշալի համադրում է բանաստեղծական զգացողութիւնը, տպաւորական ընկալումը գրականագիտական վերլուծութեան եւ գիտական-քննական հայեացքի հետ: Նման մօտեցումը Պէպօ Սիմոնեանի գրախօսականները շահեկանօրէն զատում է սփիւռքահայ գրական միջավայրի նման բազմաթիւ եւ բազմապիսի այլ նիւթերից:

Ուշադրութեան արժանի է նաեւ այն իրողութիւնը, որ Պէպօ Սիմոնեանը առանձնապէս բծախնդիր է քննութեան եւ դիտարկութեան արժանի հեղինակներին եւ գրքերը ընտրելիս: Պէպօ Սիմոնեանը նախընտրում է այն գրքերն ու ստեղծագործութիւնները, որոնք ոչ միայն իրենք գրական եւ գեղարուեստական վաւերական արժէքներ են, այլեւ որոնց շուրջ եւ որոնց առիթով ինքը ասելիք ունի: Գրախօսողի համար կարեւոր է դառնում ոչ միայն կարեւոր իմաստների ընդգծումը, այլեւ իր գրողական, հեղինակային ասելիքը:

Այդպիսի գրախօսականներ են Զապէլ Եսայեանի «Նամականի»ի, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ.ի «Հող, Գիր, Մարդ», Անդրանիկ Ծառուկեանի «Երազային Հալէպը», «Մեծերը եւ... միւսները» եւ այլ գրքերի գրախօսականները: Դրանցում Պէպօ Սիմոնեանի խօսքը ճկուն է, պատկերաւոր, արտայայտիչ, հիմնաւորուած եւ համոզիչ: Նա կարողանում է իւրաքանչիւր հեղինակի եւ գրքի համար գտնել ուրոյն մօտեցում, իւրայատուկ խօսքեր, իր ասելիքը կառուցում է ըստ գրախօսուող գրքի կամ ստեղծագործութեան ներքին թելադրանքի: Եւ դրա շնորհիւ իր գրախօսութիւնները նման չեն մէկը միւսին, առանձնանում են մտայղացումով, մատուցումով եւ շարադրանքով: Եւ սա, իհարկէ, գրախօսութեան ժանրի կարեւոր առանձնայատկութիւնն է եւ Պէպօ Սիմոնեանի գրախօսական յօդուածների գրականագիտական արժանիքը:

Սփիւռքահայ արդի գրականութեան մէջ թերեւս չկայ այլ մի գրող, որ այդքան էջեր, այդքան ուշադրութիւն նուիրած լինի մեր ժողովրդի համար, մեր ազգային գիտակցութեան, մեր գոյութեան եւ մեր լինելութեան համար այնքան կարեւոր հասկացութիւնների եւ ըմբռնումների, որպիսիք են հայրենիքը, լեզուն եւ ազգութիւնը: Ըստ Պէպօ Սիմոնեանի՝ մեր գրականութեան առանձնայատուկ բնոյթը մատնանշող այս հասկացութիւնները աւելին են, քան սովորական ըմբռնումը, քան փիլիսոփայական կամ իմացաբանական պատկերացումները: Դրանք մեր գոյութեան, մեր լինելութեան իրական ու ճակատագրական նախահիմքերն են:

Պէպօ Սիմոնեանին մեծապէս յուզում է արտերկրում ապրող հայի վերաբերմունքը հայրենիքի հանդէպ. գաղտնիք չէ, որ տարբեր երկրներում, տարբեր քաղաքական համակարգերում եւ տարբեր հանրային-մշակութային միջավայրերում յայտնուած տարբեր ճակատագիր ունեցող մարդկանց անհատականութիւնն ու նկարագիրը ձեւաւորւում է իւրովի: Պէպօ Սիմոնեանը հմուտ հոգեբանի պէս վերլուծութեան է ենթարկում սփիւռքահայի կեանքի ուղին, միջավայրը, հոգեբանութիւնը, իր կեանքի ընկերային, հոգեկան եւ նոյնիսկ քաղաքական մղումներն ու ազդակները, տեսնում է ներքին հակասութիւնները, բարդ իրավիճակներն ու հոգեվիճակները, որոնք կարող են հասցնել հայրենիքի ուրացմանը («Հայրենիքի հասկացողութիւնը սփիւռքահայ մտածողութեան մէջ»):

Ահա, այս բոլորի հետ կապուած ծնւում են նոր եւ բարդ խնդիրներ, որոնք չափազանց կարեւոր են հայկական կեանքի եւ գոյութեան շարունակութեան համար: Սփիւռքահայութեան կեանքի մեծագոյն խնդիրներից մէկը, ինչպէս արդարօրէն նկատում է Պէպօ Սիմոնեանը, ազգային ինքնութեան պահպանման խնդիրն է: «Ոչ միայն առանձնապէս որեւէ հայ գաղութի, այլեւ՝ ամբողջ հայկական սփիւռքի հիմնական հարցերէն է ազգային ինքնութեան պահպանումը»,- գրում է նա:

Այս գրքում ընդգրկուած լաւագոյն յօդուածներից մէկը «Հայկական ինքնութեան պահպանման ռազմավարութիւնը» յօդուածն է: Հեղինակը մանրակրկիտ վերլուծութեան է ենթարկում խնդիրը, երեւան է հանում սփիւռքահայ կեանքի ներքին բարդութիւններն ու հակասութիւնները եւ առաջադրում է ազգային ինքնութեան պահպանման անհրաժեշտ ռազմավարութեան կարեւորագոյն գործօնները. «Որո՞նք են Սփիւռքի մէջ ազգային ինքնութեան պահպանման ռազմավարութեան գործօնները. ընտանիքը, եկեղեցին, հայկական դպրոցը (կիրակնօրեայ, միօրեայ, ամէնօրեայ), լեզուն, հայրենիքը»: Այս խորունկ յօդուածի եւ գրքում ընդգրկուած միւս՝ նոյնքան հետաքրքրական, մտահոգութիւններով լեցուն եւ վերլուծական բնոյթով առանձնացող գրութիւնների շարադրանքի մէջ կարեւոր դեր ունի Պէպօ Սիմոնեանի՝ տասնամեակների մանկավարժական աշխատանքի տուած ճանաչողական հմտութիւնն ու փորձը:



*Վերջին լուսանկարը*

Պէպօ Սիմոնեանը մէկն է այն մարդկանցից (հայաստանցի թէ սփիւռքահայ), որոնք Հայաստանի անկախութիւնը ընկալել եւ ապրել են անձնական երջանկութեան պէս: Իրականացել է հայ մարդու դարաւոր իղձը: Հայաստանի անկախութեանն է նուիրուած «Հայրենի հողին երազանքը...» եռամաս հրաշալի էսսէն: «Հողն ալ կ՚երազէ եւ հողին երազանքը ընդհանրական ոլորտներու մէջ կը թեւածէ: Կ՚ընդգրկէ ազգը իր ամբողջականութեամբ եւ անոր հաւաքական ձգտումներուն համընդհանուր տարողութեամբ: Նեղ տարածքով թէ ընդարձակ սահմաններով հողի երազանքին ծիրը լայն է եւ իր հորիզոնները հեռուին կը նային... Ապագային կ՚ուղղուին յաւերժութեան հեռանկարներով...»:

«Հողին վսեմագոյն երազանքը՝ անկախութիւնը նուաճուած է»,- արձանագրում է Պէպօ Սիմոնեանը: Բայց խնդիրը, ինչպէս արդարացիօրէն նկատում է էսսէի հեղինակը, դրանով չի աւարտւում: Նա մեծ սրտացաւութեամբ, յուզումով ու տագնապով է խօսում ազգային, պետական ու քաղաքական այն խնդիրների մասին, որոնք ծառացած են մեր նորանկախ պետութեան ու մեր յոգնաբեկ ժողովրդի առջեւ: Պէպօ Սիմոնեանը մատնանշում եւ խօսում է հողահաւաքութեան, երկրի ներքին միասնականութեան, ժողովրդի հոգեւոր, մտաւոր եւ ֆիզիքական ուժերի միասնութեան եւ համահաւաքութեան, բայց եւ մեր նահանջի, հայրենիքը լքել-հեռանալու, ընկերային դժուարութիւնների ու մեր դժուարին կեանքի մասին: Իր մտահոգութիւնները հայրենիքի նուիրեալ զաւակի, ժողովրդի մարդու անկեղծ ապրումներն են, տագնապ հայրենիքի ու ժողովրդի ներկայի եւ ապագայի համար: Իր խօսքի մէջ դառնութիւն եւ ցաւ կայ, հիասթափութեան երանգ եւ յուսախաբութեան շեշտ, բայց եւ կայ ներքին խոր հաւատ երկրի ու ժողովրդի հանդէպ: Իր դիրքորոշումը ազնիւ քաղաքացու եւ մտաւորականի եւ, որ կարեւորն է, հայրենիքի լիիրաւ զաւակի դիրքորոշում է: Հայաստանի անկախութեամբ ջնջւում են Հայաստանի եւ Սփիւռքի զատող սահմանները. Հայաստանը բոլոր հայերի, աշխարհասփիւռ հայերի մէկ-միասնական հայրենիքն է:

Թւում է, թէ «Հայրենի հողին երազանքը...» էսսէի անմիջական շարունակութիւնն է «Հայրենիքը, հայրենասիրութիւնը եւ... հացը» յօդուածը՝ դառնաղի խոհերով եւ ծանր մտատանջութիւններով լեցուն: Պէպօ Սիմոնեանը, որի ե՛ւ բանաստեղծական գրքերը, ե՛ւ էսսէներն ու գեղարուեստական ակնարկները մշտապէս առանձնացել են Հայաստանի հանդէպ անվերապահ սիրով, հիմա խօսում է այն մասին, թէ ինչպէս է «աղճատումի եւ այլասերումի զառիթափին» հասած հայրենիքը կորցնում իր հմայքը: Տագնապի ձայնը գալիս է անհուն սիրոյ եւ ցաւի խորքերից: Հայրենիքի զաւակը, հայ բանաստեղծը, ժողովրդի մտաւորականը բարոյական մեծ իրաւունք ունի խօսելու մեր իրականութեան ներքին հակասութիւնների, մեր աններելի սխալների, մեր անգէտ եւ կիսագրագէտ կառավարիչների, մեր այսօրուայ անհեռատես ու անհմաստասէր իշխանների ու զանազան տանուտէրերի վարքի մասին: Եւ ո՞վ պէտք է խօսի այս ամէնի մասին, եթէ ոչ հայ գրողն ու մտաւորականը:

Բանաստեղծ Պէպօ Սիմոնեանի մեծագոյն մտահոգութիւններից մէկը մշտապէս եղել է հայոց լեզուի այսօրուայ վիճակը եւ մանաւանդ արեւմտահայերէնի խնդիրը: Այսօր հայոց լեզուի խնդիրը դուրս է եկել զուտ մշակութային սահմաններից եւ ձեռք է բերել աւելի խոր իմաստ եւ նշանակութիւն: Վահան Տէրեանը մեր լեզուն համարում էր «մեր ինքնութեան մեծագոյն նշանը»: Հայոց լեզուի խնդիրը այսօր նոյնացել է հայրենիքի գաղափարի եւ ազգային ինքնութեան ըմբռնումի հետ: Պէպօ Սիմոնեանի ամենամեծ տագնապը կապուած է արեւմտահայերէնի այսօրուայ վիճակի եւ յետագայ ճակատագրի հետ: Արեւմտահայերէնի ճակատագիրը ակնյայտօրէն վտանգուած է: Այսօր արեւմտահայերէնը աներկիր եւ անժողովուրդ լեզու դառնալու վտանգի մէջ է: Արեւելահայերէնն էլ, իր հերթին, աղաւաղումների, աղճատման, անգրագիտութեան պատճառած անդառնալի վթարների մէջ է: Պէպօ Սիմոնեանի՝ արեւմտահայերէնի այսօրուայ վիճակին ու վաղուայ ճակատագրին նուիրուած տասնեակ գրութիւններից գրքում ընդգրկուած է երեք յօդուած: Դրանք լիակատար պատկերացում են տալիս այն լուրջ հարցադրումների մասին, որոնք արծարծում է Պէպօ Սիմոնեանը՝ դրանք դարձնելով արդի մեր իրականութեան առաջնահերթ ու կարեւորագոյն խնդիրները:

Պէպօ Սիմոնեանը մէկն էր մեր այն գրողներից, որ խորապէս են ապրել հայ գրական-մշակութային կեանքի ամէն մի երեւոյթը, գրական կեանքի ելեւէջումները, ամենայն լրջութեամբ են վերաբերուել գրական կեանքի բոլոր անցուդարձերին: Այդպիսին էր ինքը կեանքում, գրական առօրեայում, եւ այդ են վկայում «Էջեր եւ նիւթեր գրականութեան» երկհատորեակի Բ. հատորում տպագրուած իր յօդուածները, ելոյթները եւ հաղորդումները: Այդ են վկայում եւ հաստատում նաեւ իր արխիւում եղած բազմապիսի նիւթերը, որոնց մէջ կան անտիպ յօդուածներ, դասախօսութիւնների շարադրանքներ, զանազան այլ գրութիւններ, որոնց մի մասը ընտրողաբար ընդգրկուած է այս գրքում:

Պէպօ Սիմոնեանը մի առանձնակի ուշադրութեամբ էր վերաբերւում լիբանանեան հայ գրական կեանքին, որի կենտրոնական դէմքերից մէկն էր եղել ինքը տասնամեակներ շարունակ: Իր խորապէս լրջմիտ եւ պատասխանատուութեան զգացումով առլեցուն վերաբերմունքը փաստօրէն իր խոր ակնածութիւնն էր հայ գրի ու գրականութեան, հայ գրաւոր մշակոյթի հանդէպ եւ գրողի, մտաւորականի դերի ու նշանակութեան իր գիտակցումը: Պէպօ Սիմոնեանը արդարացիօրէն սփիւռքահայ կեանքի կարեւորագոյն գործօններից մէկն է համարում գրականութիւնը՝ նրան յատկացնելով հայապահպանման, հայ ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորման եւ ամրապնդման վիթխարի դեր եւ նշանակութիւն:

1977 թուականին կարդացած իր հրապարակային մի կարեւորագոյն դասախօսութեան մէջ («Լիբանանահայ գաղութի մշակութային կեանքի վերականգնումը եւ աշխուժացումը») Պէպօ Սիմոնեանը, վերլուծելով լիբանանեան պատերազմի հետեւանքով լիբանանահայ գրական-մշակութային կեանքի իրական վիճակն ու դրութիւնը, շեշտը դնում է այդ կեանքի վերականգնման եւ ամրապնդման անհրաժեշտութեան վրայ, դա համարելով համայնքի կեանքի կազմակերպական կարեւորագոյն գործօններից մէկը: Հեղինակը նաեւ մատնանշում է գրական կեանքի վերականգնման հնարաւոր միջոցներն ու ուղիները:

Լիբանանահայ գրական կեանքի աշխուժացման ու վերականգնման ընթացքի մէջ Պէպօ Սիմոնեանը կարեւորագոյն տեղ է յատկացնում գրական քննադատութեանը («Մեր գրական քննադատութեան մասին»): Քննադատութիւնն է, որ ուղղորդում է գրական զարգացումը, արժեւորումներ է կատարում, չափանիշեր է ձեւաւորում, ուղենիշեր է կարգում: Եւ գրական-մշակութային կեանքի ընդհանուր ընթացքի մէջ Պէպօ Սիմոնեանը կարեւորում է հայ գրական մամուլի դերակատարութիւնը: Գրական մամուլն է, որ արտացոլում է առօրեայ գրական կեանքը, գրական մամուլի էջերում է, որ յստակօրէն երեւում են գրական կեանքի մղումներն ու միտումները («Լիբանանահայ գրական մամուլի մասին»):

Վերջապէս, չափազանց կարեւոր հարց է, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ է հայ մարդը Լիբանանի ժողովրդի, երկրի եւ իրականութեան հետ: Լիբանանը տեղի հայութեան երկրորդ հայրենիքն է, երկիր, որ առանձնակի սիրով, յարգանքով եւ հոգատարութեամբ է վերաբերուել հայութեանը, հայ համայնքին, հայ եկեղեցու, հայկական ազգային կեանքի կարեւորագոյն երեւոյթներին: Լիբանանահայը միշտ իրեն զգացել է եւ եղել է երկրի լիիրաւ քաղաքացին: Ահա, այս եւ նման այլ հարցերի է նուիրուած Պէպօ Սիմոնեանի «Լիբանանահայութեան դերակատարութեան պատմական հոլովոյթը» յօդուածը:

➡ Դ

AZG NEW MSHAKUIT.QXD 16/06/2016 17:40 Page 4



ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Պոեզիան՝ հայրենիքի վկայական

Իրականության մեջ ի՞նչ էր Արգիշտի արքայի արշավանքը՝ ծածկված է հազարամյակների փոշու տակ: Նրա ժամանակը հայտնաբերվել է ուրարտական բեւեռագրերի վերծանմամբ. «Ես՝ Արգիշտի, որդի Մենուայի...»: Մենք գիտենք այն, ինչ գրվել է կավե սալիկների, պապիրուսի, մագաղաթի վրա կամ մեզ է հասել որպես քարագրություն կամ՝ սերնդե-սերունդ փոխանցված դյուցազնապատում: Այս իրողությունն, ահա, 21-րդ դարի Վարդան Հակոբյան հայ-արցախցի բանաստեղծից արտածվել է բանաձեւումի պես. ...ի վերջո, բոլոր պատերազմները նրա համար են, որ բառի տերը լինի տերը բառի, քանզի հողը հենված է բառի վրա: (**Վարդան Հակոբյան, «Նշագրություն լուսնի վրա»,** էջ 286, Երեւան, «Անտարես», 2016թ.): Պատերազմի պոետական սիմվոլիկայի «Բառի սլաքները» պոեմում, որտեղից այս եւ մեջբերված մյուս տողերն են, արքետիպը հայ ազգային գոյության քաղաքակրթական մաքառումն է: Պատերազմ՝ հանուն ինքնության, որ դրսեւորվում է էպոսով, Նարեկացիով՝ տիեզերական հանճար, ում գերեզմանն անգամ հայտնի չէ, ինչպես չգիտենք անապատի այն քառակուսին, որտեղ հանգչել են Վարուժանը, Սիամանթոն, որտեղ Չարենցի երեսին թեքվել էր *«լուսինը՝ լիրբ լուսինը/ ծիծաղում էր՝/սպիտակ-սպիտակ»*, երբ Չարենցը մեռնում էր, եւ *«ժամանակները/ներձուլվել են իրար մեջ/ Վարուժանը ձեռքը դնում է /Չարենցի վերքին/ եւ արյունը դառնում է ձայնապատկեր»:* Պոետական կանխադրույթն, այսպիսով, սինխրոնացնում է հայոց հանճարի ժամանակը՝ որպես քաղաքակրթական երեւույթ, որը ստույգ մասնանշում է մեր հայրենիքի հոգեւոր ընդգրկումը:

Հոգեւոր-քաղաքակրթական Հայաստանի սահմանները հարյուրապատիկ մեծ են, քան իրական Հայաստանն է, եթե անգամ դա պատմական, ավանդաբար «ծովից՝ ծով» ասվող երկիրն է, որովհետեւ էթնոմշակութային մեր ինքնությունը խորապատկերված է այնտեղ, ուր սկզբնավորվել է «ի սկզբանե էր Բանը» իմաստնությունը: Աստվածային այդ քաղաքակրթության եւ իրական հայրենիքի սահմանները ոչ մի ժամանակ նույնական չեն եղել եւ արդեն երրորդ-չորրորդ հազարամյակն է՝ չեն նույնանում: Վարդան Հակոբյանի պոետական ինտուիցիան այդ պարադոքսի զարմանալի եւ բանաստեղծորեն դիպուկ բնութագիր է գտել. *-Եւ որքան էլ ես սիրեմ իմ Հայաստանը, եւ որքան պաշտեմ նրա ամեն մի թիզ հողն ու քարը, այնուամենայնիվ, իմ Հայաստանում կա մի վայր, ուր սպանել են Չարենցին: Կա մի վայր, ուր սպանել են Բակունցին: Կա մի վայր, ուր սպանել են Սեւակին... Կա մի վայր, ուր... ուր... ուր... ուր...*

Այսպես է երեսից քրքջում պոետական ճշմարտությունը, որ իրականի համեմատ, երեւի, ավելի մեղմասացություն է, քան՝ եղելության արձանագրում: Եւ, այդուհանդերձ, իրականության 1915, 1937 եւ հաջորդ թվականները, եւ մեր ժամանակների անբանաստեղծական ահավորությունն ավելի նողկալի չեն, քան բառով վերադարձվող զարհուրանքը՝ որ հայրենիքի ոգեղեն կառույցի հիմքում նահատակների ոսկորներն են, եւ պրագմատիկ օրվա կառավարչությունը եթե ինչ-որ բանում հաջողում է՝ երախտատերը նրանք են, բայց այդ ճշմարտությանը հասու է միայն բանաստեղծական ոգորումը: Առօրյայի տերն ուրիշներն են. -Պոետը ստեղծում է քաղաքակրթություն: Պոետը ստեղծում է հասարակություն: Բայց ոչ այնպիսին, ինչպիսին այսօր մեր ունեցածն է՝ խաթարված, լղոզ... Ափսոս: Հայ քաղաքակրթությունը պոետական է: «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»,- հայերեն առաջին գրավոր տողն է, որ մեր ընթացքի ուղեցույցն է, որովհետեւ. Բառը այն սլաքն է, որով կարող ենք շտկել եւ պատմությունը: Եւ ամեն ինչ: Եւ անգամ՝ անշտկելին...



Հայության նոր ժամանակները բացվել են Խաչատուր Աբովյանի «Վերքի» առաջաբանի հարցադրումով. «Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»: Այդ տողն է 19-րդ դարակեսին արթնացրել ավերակված սրբությունների հողում Հայաստան վերակերտելու քաղաքական եւ զինական ճիգը: «Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»,- այսպես է թշնամուն Սարդարապատի տակ դիմավորել հայոց մահապարտների աշխարհազորը: 90-ականների խառնակ օրերից մի օր հարցազրույցի համար իրենից համբերություն կորզած **Հրանտ Մաթեւոսյանը** «ո՞րն է ձեր ցանկությունը» ժուռնալիստական հետաքրքրասիրությունը կտրել է անսպասելի մտաճառագումով. «*Կուզենայի ստեղծել իմ ժամանակի հայոց լեզուն*»: Վարդան Հակոբյանը, կարծես, այդ մեծ նվիրումի ճանապարհին իր նշաձողը սահմանել է. *-Իմ ձիու քայլքը զրնգում է արեւի վրա, իսկ հորիզոնը հեռվում շառագունել է հայոց ծաղկած ծիրանիների շռայլ փայլից...* Սա, երեւի, 21-րդ դարի հայերենն է, պոեզիա, որ Հայրենիքի վկայականն է: Որովհետեւ ուրիշ հայրենիք, քան կերտվում է խոսքով, չի կարող լինել...

**Ստեփանակերտ**

# ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԻ ՈՒՂԵՒՈՐԸ

Գ Կեանքի վերջին տարիներին, երբ գրողն ու բազմավաստակ մանկավարժը հանգիստ էր կոչուած, մանաւանդ այն տարիներին, երբ առողջական վիճակի պարտադրանքով ստիպուած էր մեծաւ մասամբ տանը մնալ, հետեւապէս՝ լինել մենակ, առանձնութեան մէջ, նա իր գրասեղանի առջեւ աւելի ու աւելի էր տրւում խոհերի եւ մտորումների: Պատահական չէ, որ այդ տարիներին մամուլի էջերում յայտնուած իր տասնեակ գրութիւնները խորագրուած են «Խոհեր» կամ «Մտորումներ» եւ կամ հրապարակուած են այդ խորագրի ներքո: Գրողի թողօնների մէջ այդպիսի նիւթերը շատ են: Այս գրքում ընդգրկուածները հիանալի պատկերացում են տալիս գրողի մտաւոր աշխարհի, հետաքրքրութիւնների, իրեն յուզող հարցերի ու խնդիրների մասին: Ինչպէս ինքը՝ գրողն է նկատում, իր խոհերի առանցքը մնում է մարդը:

Իր այս խոհերում եւ մտորումներում Պէպօ Սիմոնեանը հայեացքը արտաքին աշխարհից դարձնում է դէպի մարդու ներաշխարհը, դէպի մարդկային էութեան ընդհանուր եւ անհատական գծերին ու յատկութիւններին, մարդկային նկարագրի թաքուն եւ ակներեւ կողմերին: Իրականում Պէպօ Սիմոնեանի հայեացքը նորից ուղղուած է շրջապատող կեանքին եւ իրականութեանը, միայն թէ այդ հայեացքը հիմա անցնում է մարդկային ներքին էութեան, մարդու ներաշխարհի ոսպնեակի միջով:

Այս խոհերն ու մտորումները ընթերցողի առջեւ բացում են գրողի ներքին ապրումների, արտաքին աշխարհի հետ ունեցած այլեւս հիմնականում միայն խոհական-մտային-վերլուծական կապերի, իր մտահոգութիւնների սահմանները: Գրողը մտորում է ոչ միայն հայ կեանքին ու հայ իրականութեանը վերաբերող հարցերի շուրջ: Նրան մտահոգում է այն ամէնը, ինչ վերաբերում է առհասարակ մարդկութեանը: Իր մտորումների եւ խոհերի մէջ տեղ ունեն ե՛ւ մոլորակի քաղաքական կեանքն ու քաղաքական իրադարձութիւնները, ե՛ւ մարդկութեան ընկերային հարցերն ու յարաբերութիւնները, ե՛ւ ազգերի ու ժողովուրդների մշակութային կապերն ու փոխադարձ հետաքրքրութիւնները եւ էլի շատ ու շատ բան: Գրողական այս վերաբերմունքը Պէպօ Սիմոնեանը դրսեւորել է նախորդ տարիներին գրուած իր բազմաթիւ յօդուածներում եւ էսսէներում, որոնք հրապարակուել են իր նախորդ գրքերում:

Գրողին մեծապէս յուզում են սփիւռքահայութեան հոգեբանութեան մէջ կատարուող փոփոխութիւնները, որոնք, ցաւօք սրտի, յաճախ եւ մեծ մասամբ տանում են դէպի ուծացում, հեռացում ազգային նկարագրից եւ ինքնութիւնից:

Զարմացնում եւ հիացնում է կեանքի վերջին տարիներին առողջական դժուարին վիճակի մէջ գտնուած գրողի հոգեկան տոկունութիւնը, որ արտայայտուել է կեանքի հանդէպ գրողի եւ բանաստեղծի իր գործուն եւ նախանձախնդիր վերաբերմունքի մէջ, ինչը յստակ երեւում է հեղինակի խորունկ եւ խորախորհուրդ խոհերում ու մտորումներում:

Գրքի վերջին բաժինը խորագրուած է «Յուշեր ու բեկորներ»: Սա գրքի ամենայուզիչ բաժինն է: Յուզիչ է ամենից առաջ այն առումով, որ վերջին տարիներին առողջութեան պատճառով դուրս աշխոյժ կեանքից կտրուած եւ շատ յաճախ իր խոհերին ու մտորումներին տրուած գրողի մէջ արթնանում են անցեալի տպաւորութիւններն ու հին օրերի յիշողութիւնները: Սփիւռքահայ գրականութիւնը յուշագրութեամբ առանձնապէս հարուստ չէ: Եւ առհասարակ, սփիւռքահայ գրական միտքը, ցաւօք սրտի, անփոյթ է եղել գրողների անձնական կեանքի վկայութիւնների, նամակների եւ այն ամենի հանդէպ, ինչը ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն կապուած է եղել համայնքի իրական կեանքին ու պատմութեանը: Ինձ թւում է, թէ դա կարելի է հասկանալ եւ բացատրել: Հայ մարդիկ, հայ ընտանիքները ապրել են շատ ծանր պայմաններում, զանազան «քեմփ»երում եւ պատսպարաններում, ուստի եւ հաճելի չի եղել անդրադառնալը անցեալ դաժան ու դժուարին կեանքին ու ժամանակներին: Հոգեբանական խոչընդոտը, հաւանաբար, վիթխարի դեր է խաղացել այս հարցում: Այնուամենայնիւ, սփիւռքահայ կեանքը արտացոլող կամ պատկերող պահպանուած ոչ մեծածաւալ, երբեմն հատուածային եւ կցկտուր յուշերը բացառիկ արժէք եւ նշանակութիւն ունեն: Պատահական չէ, որ այդքան սիրելի են, օրինակ, Անդրանիկ Ծառուկեանի «Մանկութիւն չունեցող մարդիկ» եւ «Երազային Հալէպը» գրքերը:

Պէպօ Սիմոնեանը երբեք չի խօսել յուշեր գրելու մասին. ես որ նման բան չեմ յիշում մեր բազմաթիւ-բազմաժամ զրոյցներից: Գրողները առհասարակ չեն սիրում ո՛չ խօսել յուշ գրելու մասին եւ ո՛չ էլ յուշեր գրել: Հաւանաբար յուշեր գրելու միտքը, գաղափարը համադրւում է խոր ծերութեան մտքի հետ, ինչին մարդը դժուար է համակերպւում կամ թէ կեանքի հետ ստեղծագործական հաշիւները փակելու հետ, ինչի հետ միշտ շատ դժուար է հաշտուել: Եւ այնուամենայնիւ, Պէպօ Սիմոնեանը գրի է առել իր վաղ պատանեկութեան եւ ուսման տարիների հետ կապուած յուշերի հատուածներ, որոնք շատ պատկերաւոր են, թախծալի եւ բանաստեղծական:

Փոխարէնը շատ լուսաւոր եւ պայծառ են բանաստեղծ Պարոյր Սեւակին եւ նշանաւոր բանասէր, գիտնական Մորուս Հասրաթեանին նուիրուած յուշերը: Պէպօ Սիմոնեանը կարողացել է տեսնել եւ զգալ նշանաւոր այս անձանց հարուստ խառնուածքը, հոգեկան գեղեցկութիւնը, մարդկային ջերմ եւ յուզիչ նկարագիրը: Միայն ափսոսալ կարելի է, որ այդ յուշերը ծաւալով մեծ չեն:

«Յուշեր եւ տպաւորութիւններ ուսուցիչ եւ ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանէն» յուզիչ գրութիւնը ոչ միայն ճշմարտացիօրէն ներկայացնում է տիգրանակերտցի յայտնի մանկավարժին, այլեւ ընթերցողի առջեւ բացայայտում է ուսուցչական ասպարէզի եւ ուսուցչական գործի հմուտ գիտակ, երկարամեայ մանկավարժ Պէպօ Սիմոնեանի մանկավարժական ըմբռնումները:

Իր գրական ու մշակութային ընկերների ու բարեկամների, նշանաւոր մարդկանց հետ իր հանդիպումների մասին քիչ գրառումներ է թողել Պէպօ Սիմոնեանը, բայց այն, ինչ մնացել է եւ կայ իր ձեռագրերում, նամակներում ու զանազան գրառումներում, չափազանց կարեւոր է եւ արժէքաւոր:

❖❖❖

Այս ժողովածուն յստակ եւ ամբողջական պատկերացում է տալիս բանաստեղծ, գրականագէտ, մշակութաբան, հմուտ մանկավարժ, հանրային գործիչ Պէպօ Սիմոնեանի վերջին տասնամեակների գրողական կեանքի եւ գործունէութեան, հետաքրքրութիւնների շրջանակի ու սահմանների, իր հոգեկան ապրումների, ստեղծագործական տուայտանքների, իր համակրանքների, ուրախութիւնների եւ, ինչու չէ, նաեւ իր դառնութիւնների եւ հիասթափութիւնների, իր ցաւերի եւ մտահոգութիւնների մասին: Եւ ուշագրաւն ու արժէքաւորը այս ամենի մէջ այն է, որ այդ բոլորը չեն մնում սոսկ անհատական-անձնական ապրումների սահմաններում. այդ բոլորը հայկական-ազգային կեանքի արտացոլում են բանաստեղծի ներաշխարհում եւ բանաստեղծի խորապէս մարդկային արձագանքը իր ապրած կեանքին ու ժամանակին:

Այս ժողովածուն ցոյց է տալիս եւ հաստատում է, որ բանաստեղծ եւ գրականագէտ Պէպօ Սիմոնեանը իր ողջ կեանքում, բոլոր պայմանների մէջ, միշտ եղել եւ մնացել է գրականութեան ուխտաւորը, միշտ եղել եւ մնացել է գրականութեան ճամբուն վրայ...

Հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: